ՄԻՋԻՆ ԴԱՍԸՆԹԱՑՔ
ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ

ՊԱՏՐԱՍՏԵՑ
ԵՂԻՇԷ ՔՀՆՑ. ԳԱԼԶՆՃԵԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԴՐՈՒԹԵԱՄԲ

ԵՐԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ՊՕՍԹԸՆ

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 06:50 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Generated on 2016-07-19 06:50 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
HARVARD UNIVERSITY

ՄԻՋԻՆ ԴԱՍԸՆԹԱՑՔ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ

ՊԱՏՐԱՍՏԵՑ

ԵՂԻՇԷ ՓԷՆՅ. ԳԱԼԶՆՃԵԱՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԴՐՈՒՔԵԱՄԲ

ԵՐԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՊՕՍՔԸՆ

HARRY G. BERBERIAN
37 WASHINGTON ST.
BOSTON MASS.

Digitized by Google

Original from
HARVARD UNIVERSITY

Generated on 2016-07-19 06:51 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Copyright 1917 By
E. A. YERAN, BOSTON

ALL RIGHTS RESERVED.

HARVARD
UNIVERSITY
LIBRARY
565306

Generated on 2016-07-19 06:51 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
HARVARD UNIVERSITY

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

(ՑԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ)

Նպատակս յառաջաբան մը գրելով, գործիս ներբողականը ընել չէ, այլ միայն մատնանշել այն իսկապէս կարեւոր պակասը որ գոյութիւն ունի այսօր Ամերիկայի մէջ, նամանաւանդ ներկայ աղէտալի պատերազմի ծագումէն ի վեր, յորում զրկուած յարաբերական միջոցներէ, կարելի չէ եղած ցարդ յարմար դասագրքեր բերել տալ, մեր նորահաս մատաղ սերունդին մայրենի լեզուն սորվեցնելու համար։

Հայրենիքի վիճակը և աննման ու պատուական սերունդներու անմխիթար կորուստը ուշաբերեց Նոր-Աշխարհի Հայութիւնը և վառեց անոր մտքին մէջ սա՛ բանաւոր դաղափարը թէ հայ ազգի ապագայ տարրը պիտի կազմէ այսուհետեւ արտասահմանի ու մանաւանդ Ամերիկահայոց մատաղ սերունդը և այդ դաղափարէն թելադրուած սկսաւ ուժ տալ հայ դպրոցներու բացման գործին։ Ու այսօր ուրախառիթ և մխիթարիչ է տեսնել դրեթէ ամեն կողմ նորաբաց դպրոցներ առաւել կամ նուազ գոհացուցիչ պայմաններով, ուր հայ մանուկը պիտի սորվի իր մայրենի լեզուն և իր ցեղին անցեալ պատմութիւնը։

Սակայն հակառակ տիրող եռանդին ու գործունէութեան, դպրոցական խնդիրը իր առաջին քայլին ցցուած դտաւ իր դէմ շատ կարեւոր խոչնդոտ մը նոյն իսկ այդ կենսունակ և սուրբ գործը խանգարելու չափ զօրաւոր. այսինքն յարմար դասագրքերու չգոյութիւնը ներկայիս Ամերիկայի մէջ, ու գտնուածներն ալ թերևս եղած չըլլան ամբողջական գործ մը։

Generated on 2016-07-19 06:51 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY

Ձենք գիտեր թէ մեր այս աշխատասիրութիւնը կը պարունակէ՞ իր մէջ պահանջուած յատկութիւնները եւ կրնա՞յ ամբողջական գործ մը նկատուիլ։ Թող խղճամիտ ուսուցիչք և ընթերցողք իրենց գոյացուցած համոզման համեմատ հաճին պատասխանել։

Մեր առաջին ջանքը եղաւ մանկավարժական դրութեամբ պատրաստել այս գիրքը, երկրորդ ջանացինք բոլորովին դիւրուսոյց ընել զայն, գործածելով տղոց սիրելի և հաճելի լեզուն եւ զգուշանալով ծանրաբեռնելէ խորթ և դժուարահնչիւն բառերով. երրորդ և ամենակարեւոր կէտը համարեցինք, այս գործի յաջողութեան և օգտակարութեան համար, մասնաւոր դասընթացքի ձեւով և բաժանումներով պատրաստել զայն, որպէսզի աշակերտը մէկ գրքով կարենայ սորվիլ ընթերցանութիւն, ուղղագրութիւն, բառագիտութիւն, շարադրութիւն, Կրօնք եւ Ազգ. Պատմութիւն։

Լոնդոն, 30 Մայիս 1917

ԵՂԻՇԷ ՔՀՆԾ. ԳԱԼԶՆՃԵԱՆ

Generated on 2016-07-19 06:51 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY

ՄԻՋԻՆ ԴԱՍԸՆԹԱՑՔ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ

ԴԱՍ 1

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ԴՊՐՈՑԸ

Ես դպրոց կերթամ կարդալ և գրել սորվելու համար։ Գիտեմ որ կարդալ գրել չը գիտցող տղաք երբ մեծնան շատ նեղութիւն կը քաշեն իրենց հացը ճարելու համար և պատուաւոր մարդոց հաճելի չեն ըլլար։

Տգէտ մարդ մը անասուններու պէս կապրի առանց գիտնալու թէ ինչո՞ւ կապրի և ի՞նչ կանոնի կը դառնայ աշխարհիս վրայ։

Ծնողքս ամեն հոգ կը տանի ինծի համար. ուստի ես ալ պէտք է որ սիրով դպրոցս երթամ ու վարժապետիս տուած դասերը լաւ մտիկ ընելով սորվիմ։ Բնաւ ծուլութիւն պիտի չընեմ որպէսզի դասերուս մէջ ետ չմնամ ու կարգիս ամենէն յառաջադէմը ըլլամ։

Դպրոցը տանս պէս և վարժապետս ալ ծնողքիս չափ կը սիրեմ, որովհետեւ անիկա իմ մտքիս սնունդը կուտայ, ինչպէս որ հայրս ալ մարմինիս սնունդը կուտայ։ Վարժապետիս տուած դասերը միշտ լաւ կը պատրաստեմ և տուած խրատները մտիկ կընեմ, որովհետեւ գիտեմ որ անիկայ իմ օգուտիս համար կաշխատի։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 06:51 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Դպրոցին մէջ կը գտնուին գրասեղաններ եւ նստարաններ, գրատախտակ և կաւիճ, կաղամարներ և գրիչներ, գիրքեր և տետրակներ. պատերուն վրայ գեղեցիկ պատկերներ, աշխարհացոյց քարտէսներ, դաշնակ են.։

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ։ Ինչո՞ւ դպրոց կերթաս։ Հոն ի՞նչ կընես։ Ինչո՞ւ կը սիրես դպրոցդ և վարժապետդ և ինչո՞ւ անոր խօսքը մտիկ կընես։ Դպրոցին մէջ ի՞նչ կը գտնուի։

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Դասատուն։ *Տղա՛ք, ի՞նչ ըսել է* ուղղագրութիւն։

Աշակերտը։ *Ամեն մէկ բառ իրեն յատուկ գրերով կը գրուի. օրինակի համար* դպրոց *բառը կը գրեմ* դ, պ, ր, ո, ց *գրերը իրարու քով շարելով. եթէ* դին *տեղը* թ *եւ* ոին *տեղն ալ* օ *գրեմ սխալ գրած կըլլամ և ուրիշ կարդացող մը վրաս կը խնդայ։ Անոր համար պէտք է աշխատիմ որ ամեն բառ ուղիղ գրել սորվիմ։ Ուրեմն բառերը ճիշդ գրերով գրելուն կըսեն* ուղղագրութիւն։

Դասատուն։ *Տղա՛ք, սա տակի տողին վրայ գրուած բառերուն մէջ ո՞ր գիրերը սխալ գրուած են։*

Կարթալ, մէծնան, հաձ, կէնթանի, հոֆ, սիրէմ, մտգիս, ֆրատաղտաֆ, ֆիրգ։

(*Աշակերտները կուղղեն տառասխալները*)։

Դասատուն։ *Տղա՛ք, ի՞նչպէս գիտցաք թէ վերի բառերուն մէջ որ գրերը սխալ են։*

Աշակերտ։ *Որովհետև այդ բառերը այսօրուան դասերնուս մէջ կան և սորված ու կարդացած ատեննիս ուշադրութիւն ըրինք որ սորվինք թէ ամեն մէկ բառ ի՞նչ գրերով կը գրուի։*

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 06:52 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԴԱՍ 2

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ԿՐՕՆՔ

ԱՇԽԱՐՀԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Աշխարհի վրայ ապրող ամեն մարդ, ամեն կենդանի և ամեն տեսակ բոյսեր, ծառեր, ծաղիկներ և պտուղներ ինքնիրեն չեն եղած այլ զօրաւոր մէկը ստեղծած է զանոնք որ կը կոչուի Աստուած:

Բոյսերը և ծառերը չեն զգար և կենդանիներն ալ չեն խօսիր, միայն մենք մարդիկներս ենք որ կզգանք ու կը մտածենք թէ մեզի ստեղծող Աստուածը պէտք է սիրենք և միշտ աղօթք ընելով խնդրենք որ մեզի փորձանքներէ պահէ, հիւանդ չըլլանք և մեր գործած յանցանքները ներէ:

Կրօնքը մեզի կը սորվեցնէ թէ ինչո՞ւ պէտք է Աստուած սիրենք և ինչպէս պէտք է պաշտենք անիկայ:

Հիմայ տեսնենք թէ Աստուած ի՞նչպէս ըստեղծեց աշխարհը:

Աշխարհը դեռ չստեղծուած ձեւ մը չունէր և ամեն կողմը մութ էր:

Առաջին օրը Աստուած հրամայեց որ լոյս ըլլայ և եղաւ. լոյսին անունը ցորեկ և մութին անունն ալ գիշեր դրաւ: Երկրորդ օրը Աստուած երկինքը երկիրէն զատեց: Երրորդ օրը հրաման ըրաւ որ ամեն տեսակ ծառեր և բոյսեր բուսնին: Չորրորդ օրը արեւը, լուսինը և աստղերը ստեղծեց: Հինգերորդ օրը երկինքի թռչունները եւ

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 06:52 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ծովու ձուկերը ստեղծեց։ Վեցերորդ օրը երկրի վրայի բոլոր կենդանիները ստեղծեց, յետոյ գետնէն հող առնելով մարդը շինեց և անոր երեսին փչելով հոգի տուաւ և անունը դրաւ Ադամ։

ԱԴԱՄ ԵՒ ԵՒԱ ԵՐՋԱՆԻԿ ԿԱՊՐԷԻՆ

Երբ Աստուած այս բոլորը վեց օրուան մէջ լմնցուց եօթներորդ օրը հանգիստ ըրաւ. անոր համար մենք ալ պէտք է որ շաբթուան վեց օրը աշխատինք և եօթներորդ օրը սուրբ պահենք։ Յետոյ Աստուած տեսնելով որ Ադամ առան-

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 06:52 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ձին է և օգնական մը չունի, անոր կողէն ոսկոր մը հանեց տեղը միս լեցուց և այդ ոսկորով կինը շինեց և անունը դրաւ Եւա։

Այսպէս Ադամ և Եւա երջանիկ կապրէին եւ կը վայելէին դրախտի բոլոր բարիքները։

ՀԱՐՑՈՒՄ։ Ո՞վ է Աստուած։ Կրօնքը մեզի ի՞նչ կը սորվեցնէ։ Աստուած աշխարհս ի՞նչպէս և քանի՞ օրէն ստեղծեց։ Ադամ և Եւա ինչպէ՞ս ստեղծուեցան։

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Դասատուն։ Տղա՛ք, տետրակնիդ բացէք և գրեցէք հինգ հատ կենդանիի, հինգ հատ պտուղի, և հինգ ալ ծաղիկի անուններ։

(Յետոյ դասատուն գրատախտակին վրայ աշակերտներէն մէկուն գրել կուտայ նոյն անունները և միւսները իրենց տետրակին վրայ կը սրբագրեն սխալներնին)։

ԴԱՍ 3.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿ

Տղաք, աշխարհի վրայ ապրող ամեն ազգեր իրենց համար անուն մը ունին, ինչպէս, Անգլացի, Գաղղիացի, Ռուս, Պուլկար, Յոյն ևն. մենք ալ ունինք մեզի համար սիրելի անուն մը և կը կոչուինք հայ որ մեր ազգի անունն է։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 06:52 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ասկէ 4000 տարի առաջ, ջրհեղեղէն վերջը Նոյի սերունդէն Թորգոմին տղան Հայկ անունով քաջ մարդ մը մեր թագաւորութիւնը հաստատեց և անոր անունով կոչուեցանք հայ։

ՀԱՅԿ

Այն ատենները Բէլ անունով հսկայ մարդ մը կուգէր որ ամեն մարդ զինքը իբր Աստուած պաշտէ. Հայկ չը հնազանդեցաւ և Բէլ լուր ղրկեց

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 06:53 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

որ եթէ չհնազանդի, բոլոր ընտանիքովը պիտի սպաննուի:

Հայկ կարեւորութիւն չտուաւ և Աստուծոյ ապաւինելով պատերազմի սկսաւ Բէլին հետ եւ աղեղով սպաննեց զայն ու բոլոր մարդիկը ազատեց այդ չար և ամբարտաւան մարդէն:

Հայկ շատ մը քաղաքներ շինեց, անոնց մէջ օրէնքներ դրաւ և ժողովուրդը 400 տարիի չափ լաւ կերպով կառավարելէ վերջ մեռաւ:

ՀԱՐՑՈՒՄ: Ո՞վ էր Հայկ: Ո՞վ էր Բէլ և ինչ կուզէր: Հայկ ի՞նչ ըրաւ Բէլին: Ի՞նչպէս ապրեցաւ Հայկ:

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Դասատուն: Տղաք, տետրակներնուդ մէջ գրեցէք շաբթուան 7 օրերուն անունները:

(Յետոյ աշակերտներէն մէկուն նոյն անունները գրել կուտայ տախտակին վրայ և միւսները կը սրբագրեն):

Հիմայ գրեցէք տարուան չորս եղանակներու անունները. (դասատուն թող բացատրէ թէ ի՞նչ ըսել է եղանակ: Եթէ աշակերտներուն կարողութիւնը կը ներէ, այս ուղղութեամբ թող գրել տայ ամիսներու անունները):

Generated on 2016-07-19 06:53 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY

ԴԱՍ 4.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ԾՆՈՂՔԻ ՍԷՐ. ՀԱՑՐԸ

Հայր մը և իր տղաքը նման են ծառի մը՝ իր ճիւղերով մէկտեղ։ Ինչպէս որ ծառը ճիւղերուն հիւթ և սնունդ կուտայ, այնպէս ալ հայր մը իր ունեցածը կը բաժնէ իր զաւակներուն հետ. եթէ պատառ մը հաց ունի անոնց կուտայ. իսկ եթէ հաց ալ չունի իր արիւնը կուտայ անոնց։

Կուզէ՞ք գիտնալ թէ ի՛նչպէս հայր մը իր արիւնը կուտայ զաւակներուն. մտիկ ըրէք սա պատմութիւնը։

Հայր մը կար որ չորս զաւակ ունէր. ինքը շատ թշուառ ըլլալով տունը հաց չէր մնացեր։

Լսելով որ մօտակայ բժշկական դպրոցին մէջ վարձք կուտային անոնց որ իրենց թեւէն արիւն առնել կուտային, ելաւ հոն գնաց, երկու բազուկները երկնցուց և արիւնը վազցուց ու վարձքը առնելով գնաց հաց գնեց ու տղոցը բերաւ որ ուտեն։ Թշուառ հայրը երջանիկ էր հիմայ ինչու որ իր տղաքը այլ եւս անօթի չէին։

Այո, պէտք է սիրէք ու յարգէք ձեր հայրը։ Ով որ իր հայրը չը սիրեր, վատ է։

ՀԱՐՑՈՒՄ։ Գոց պատմէ այս պատմութիւնը։ Հայր մը և իր տղաքը ի՞նչի կը նմանին։ Ինչո՞ւ պէտք է սիրէք ձեր հայրն ու մայրը։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 06:53 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Դասատուն: *Տղաք, տետրակնիդ բացէք և գրեցէք թէ տան մը խոհանոցին մէջ ինչեր կը գտնուին: (Յետոյ աշակերտի մը գրել կուտայ տախտակին վրայ նոյն անունները որպէսզի միւսները սրբագրեն սխալներնին):*

ԴԱՍ 5.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ԿՐՕՆՔ.

ԱԴԱՄԻ ԵՒ ԵՒԱՅԻ ԱՆՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆԸ

ԿԱՅԷՆ ԵՒ ԱԲԷԼ

Աստուած Ադամի և Եւայի հնազանդութիւնը փորձելու համար պատուիրեց որ դրախտին մէջ գտնուած բոլոր ծառերու պտուղներէն ուտեն, միայն ծառ մը ցուցուց և արգիլեց անոր պտուղէն ուտել:

Օր մը օձը Եւային ըսաւ. «Գիտե՞ս ինչու Աստուած այդ ծառին պտուղէն ուտել արգիլեց. որովհետև եթէ ուտէք դուք ալ իրեն պէս Աստուած կըլլաք»:

Եւա օձէն խաբուելով պտուղը կերաւ և Ադամին ալ տուաւ: Այն ատեն իրենց յանցաւոր ըլլալնին հասկնալով գնացին ու պահուըտեցան: Աստուած խմանալով բարկացաւ և անոնց պատիժներ տալով դրախտէն վռնտեց:

Ադամ և Եւա սկսան հողագործութիւն ընելով հացերնին ճարել: Անոնք երկու զաւակ ունեցան Կայէն և Աբէլ: Կայէն բնութեամբ նախան-

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 06:53 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ճոտ ու չար էր իսկ Աբէլ խոհեմ և պարկեշտ էր։ Անգամ մը Աբէլ իր ոչխարներուն ամենէն գեղեցիկը զատելով տարաւ Աստուծոյ մատաղ ըրաւ.

ԿԱՅԷՆ Կ'ՍՊԱՆՆԷ ԻՐ ԱԲԷԼ ԵՂԲԱՅՐԸ

Աստուած ալ ընդունեց և օրհնեց անիկայ։ Կայէն ալ իր բերքերուն ամենէն գէշ պտուղները զատելով Աստուծոյ նուիրեց բայց Աստուած չընդունեց։ Ասոր վրայ Կայէն նախանձելով բարկացաւ և օր մը Աբէլը սպաննեց։ Աստուած պատժեց Կայէնը և անիծեց զայն։

Աստուած Աբէլին տեղ ուրիշ զաւակ մը պարգեւեց Ադամի եւ Եւայի որուն անունը Սէթ էր։ Անոնք ուրիշ զաւակներ ալ ունեցան և այսպէս սկսան շատնալ եւ երկիրը լեցնել։

Ադամ 900 տարի ապրելէ վերջ մեռաւ։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 06:53 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ՀԱՐՑՈՒՄ։ Գոց պատմեցէք այս պատմութիւնը։ Աստուած ի՞նչ պատուիրեց Ադամի և Եւայի։ Եւա ինչո՞ւ կերաւ արգիլուած պտուղը։ Քանի՞ զաւակ ունեցան. Կայէն ինչո՞ւ սպաննեց Աբէլը։ Ուրիշ զաւակ ալ ունեցա՞ն։

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Դասատուն վերի պատմութեան մէկ քանի տողերը կարդալով գրել կուտայ աշակերտներուն և յետոյ անոնց մէ մէկուն գրատախտակին վրայ գրել տալով, միւսներուն ալ սրբագրել կուտայ իրենց տառասխալները։

Դասատուն։ Տղա՛ք, գիտէ՞ք թէ ինչու համար Աստուած, Ադամ, Եւա բառերը գլխագիրով գրուած են. որովհետեւ մարդոց, Աստուծոյ, սուրբերու, երկիրներու, քաղաքներու, լեռներու, գետերու, ծովերու ևն. անունները գլխագիրով կը գրուին։

ԴԱՍ 6.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱՐՄԵՆԱԿԷՆ ՄԻՆՉԵՒ ԱՐԱՄ

Հայկին յաջորդեց իր տղան Արմենակ որ երկիրը բաւական չէնցուց։ Արմենակին յաջորդեց Արամայիս որ քանի մը քաղաքներ չինեց։ Անոր յաջորդեց Ամասիա որուն անունով Արարատ լեռը Մասիս կոչուեցաւ։ Ամասիա Շարայ անունով եղբայր մը ունէր որ Շիրակ քաղաքը կը բնակէր. ասիկայ չափազանց շատ ուտող ըլլա-

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 06:53 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

լուն համար մինչեւ հիմայ առակ եղած է և երբ շատակեր մարդ մը տեսնան կըսեն. «Եթէ դուն Շարայի ստամոքսը ունիս մենք Շիրակի ամբարները (բացատրէ այս բառը) չունինք։

Ամասիային յաջորդեց Գեղամ։ Այն ժամանակները դրացի ազգերը սկսան Հայաստանի վրայ քալել։ Ասոր յաջորդը Արամ որ Հայկի նըման շատ քաջ մէկն էր, Հայաստանը ազատեց թշնամիներէն։ Նախ Նիւքեար անունով թշնամին բռնեց և բարձր աշտարակի մը ծայրը գամել տուաւ, միւսներն ալ սպաննեց և բոլոր թշնամիները ցրուեց։

Նինոս մեծ թագաւորը Արամին քաջութիւնները լսելով վախցաւ և անոր բարեկամութիւնը շահելու համար գեղեցիկ նուէր մը ղրկեց։

Արամ 58 տարի իշխեց և Հայաստանը չէնցուց. օտարները սկսան անոր անունով Արմէնիա (Էրմէնի) կոչել հայերը։

ՀԱՐՑՈՒՄ։ Հայկին ո՞վ յաջորդեց։ Արմենակին ո՞վ յաջորդեց։ Ամասիա ի՞նչ ըրաւ։ Ո՞վ էր Շարա։ Ո՞վ էր Գեղամ և իր ատեն ի՞նչ պատահեցաւ։ Ո՞վ էր Արամ եւ ինչե՞ր ըրաւ։ Ինչո՞ւ համար Արմէնիա (Էրմէնի) կոչուեցանք։

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Դասատուն ագարակ *բառով նախադասութիւն մը կը չինէ և աշակերտներուն գրել կուտայ. յետոյ անոնցմէ մէկուն տախտակին վրայ գրել տալով միւսներն ալ կը սրբագրեն իրենց սխալները։*

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 06:59 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԴԱՍ 7.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ԾՆՈՂՔԻ ՍԷՐ. ՄԱՅՐԸ

Հազիւ թէ ծնած է, մանուկը արցունք թափել կուտայ իր մօրը: Խեղճ մանկիկ: Տեսէ՛ք, տկար, մերկ, պզտիկ արարած մէ, կը պոռայ, կը ճուայ: Ո՞վ պիտի խնամէ զայն:

Իր մա՛յրը, իր անուշի՛կ մայրը:

Պիտի գրկէ զայն իր թեւերուն մէջ, պիտի գգուէ, անոր կաթ պիտի տայ որպէսզի մեծնայ: Իր քով կը քնացնէ, վրան կը հսկէ, կը խնամէ որ չհիւանդանայ:

Մօր մը սիրտը գգուանքի գանձարան մէ իր տղոց համար:

Տղա՛ք, բնաւ չէ՞ք տեսած մայր մը որ գիշերն ի բուն հսկէ, մինչ տնեցիք ամենն ալ խոր քունի մէջ են, և մինաւորիկ նստած ճրագին առջեւ՝ կար կը կարէ կամ գուլպայ կը հիւսէ:

Իր տղոց համար է որ կաշխատի, անոնց սիրուն համար է որ իր հանգիստը կը մոռնայ:

Տղա՛ք, սիրեցէք ձեր մայրը, յարգեցէք

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 06:59 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

զայն. չըլլայ որ անոր փափուկ սիրտը ցաւցնէք։
Եւ երբ տարիքը առնէ, անոր ծերութեանը նեցուկ եղէք, երեսի վրայ մի ձգէք։

ՀԱՐՑՈՒՄ։ Ի՞նչ է մայր մը։ Ի՞նչ կընէ իր տղոց համար։ Տղաք ի՞նչ պէտք է ընեն իրենց մօր։

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Դասատուն։ Հիմայ գրեցէք տետրակներնուդ մէջ թէ ինչ առարկաներ կը գտնուին ձեր տան ննջասենեակին մէջ։ (Նախորդ ձեւով տախտակին վրայ գրել տալով պէտք է սրբագրել տալ)։

ԴԱՍ 8.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ԿՐՕՆՔ.

ՋՐՀԵՂԵՂԸ

Մարդիկ հետզհետէ սկսան շատնալ երկրի վրայ. անոնցմէ Կայէնի սերունդը շատ չար էր և սկսած էր Աստուած մոռնալ։ Սէթի զաւակները բարի էին, մանաւանդ անոնց մէջէն Նոյ անունով մարդ մը կար որ Աստուծոյ շատ սիրելի եղած էր և իր զաւակներն ալ Սէմ, Գամ և Յաբէթ իրենց հօրը պէս բարի էին։

Աստուած տեսնելով որ մարդոց չարութիւնը երթալով կը շատնայ, կանչեց Նոյ և անոր ըսաւ. «Ես չար մարդիկները պիտի պատժեմ ու մեռցնեմ. դուն իմ ըսած ձեւովս մեծ նաւ մը չի-

Generated on 2016-07-19 06:59 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY

նէ (տապան) առ քու կինդ, զաւակներդ ու բոլոր ընտանիքդ, նաև ամեն կենդանիներէն ալ երկերկու զոյգ և տապանը մտիր»։ Նոյ Աստուծոյ հրամանը կատարեց ու բոլոր ունեցածներովը տապանը մտաւ և Աստուած ալ վրաներնուն դուռը գոցեց։

Այն ատեն սկսաւ սաստիկ անձրեւ գալ ու երկրէն ջուր պոռթկալ 40 օր և 40 գիշեր։ Ջուրերը այնչափ շատցան ու բարձրացան որ ամենէն բարձր լեռները ծածկեցին։ Նոյի տապանը միայն կը ծփար ջուրերուն վրայ. մնացեալները մարդ և կենդանի բոլորն ալ խեղդուեցան։ 150 օր վերջը Նոյի տապանը Արարատ լեռան վրայ նստաւ։ Այն ատեն Նոյ պատուհանը բանալով ագռաւ մը թռցուց որ գնաց և ետ չդարձաւ։ Ութ օր վերջ աղաւնի մը թռցուց որ գնաց և ետ դարձաւ։ Ութ օր վերջ դարձեալ աղաւնին թռցուց որ գնաց և իրիկուան ետ դարձաւ կտուցին մէջ ձիթենիի ճիւղով մը։ Նոյ հասկցաւ որ ջուրերը քաշուեր են, բացաւ տապանին դուռը և բոլոր իրեններովը դուրս ելլելով, անմիջապէս սեղան շտկեց, զոհ ըրաւ և փառք տուաւ Աստուծոյ որ զիրենք ազատեց այդ ջրհեղեղէն։

Աստուած օրհնեց Նոյ և անոր զաւակները և խոստացաւ որ անկէ վերջ ալ ջրհեղեղով չպիտի պատժէ մարդիկները և իրեն խոստումին իբրեւ ապացոյց ծիրանի գօտին ցուցուց։

Նոյ սկսաւ երկրագործութեամբ զբաղիլ եւ Աստուծոյ հրամանաւ առաջին անգամ ըլլալով այգի տնկեց և գինի պատրաստեց։

Նոյ 650 տարի ապրելէ վերջ մեռաւ։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 07:00 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ՀԱՐՑՈՒՄ՝ Աստուած ինչո՞ւ պատժեց մարդիկները։ Ջրհեղեղը ի՞նչպէս եղաւ. ո՞վ ազատեցաւ։ Նոյ ի՞նչպէս ապրեցաւ։

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Դասատուն՝ *Տղա՛ք, գրեցէք սա կենդանիներու անունները. (բերանացի ըսելով) Շունը, հաւը, կովը, ոչխարը, առիւծը, կապիկը։*

Զապէ՛լ, շունը *բառով խօսք մը չինէ։*

Աշակերտը՝ Շունը հաւատարիմ կենդանի է։

Դասատուն՝ *Շատ լաւ, ամենքդ ալ գրեցէք այս խօսքը։ (Ցետոյ տախտակին վրայ գրել կուտայ սրբագրութեան համար)։*

ԴԱՍ 9.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱՐԱՑԷՆ ՄԻՆՉԵՒ ՏԻԳՐԱՆ

Արամին յաջորդեց իր որդին Արայ որ շատ գեղեցիկ ըլլալուն համար կոչուեցաւ Արայ գեղեցիկ։ Շամիրամ անուն օտար թագուհի մը Արային գեղեցկութեանը հաւնելով ուզեց անոր հետ ամուսնանալ, բայց Արայ մերժեց և Շամիրամ բարկանալով անոր դէմ պատերազմի ելաւ։ Արայ թէեւ շատ քաջութեամբ կռուեցաւ բայց պատերազմի միջոցին մեռաւ։

Շամիրամ Հայաստանի օդին և տեղին գեղեցկութեանը հաւնելով քաղաք մը չինել տուաւ

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 07:00 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ամառը բնակելու համար որ իր անունով կոչուեցաւ Շամիրամակերտ կամ Վան։

Արայէն վերջ թէեւ շատ մը ուրիշ թագաւորներ եկան բայց կարեւոր բան մը չբրին։

Անոնցմէ ամենէն երեւելին եղաւ Տիգրան Ա. որ Հայաստանը նորոգեց և բոլոր թշնամիները ջնջեց, մանաւանդ Աժդահակը որ ամենէն զօրաւորն էր որ տեսնելով Տիգրանի քաջութիւնը ուզեց խարդախութեամբ բռնել և սպաննել. ասոր համար Տիգրանին քոյրը Տիգրանուհին իրեն կին առաւ և իր միտքը անոր յայտնեց. ան ալ իր եղբօրը իմացուց։ Տիգրան քոյրը ազատելու համար պատերազմը ուշացուց և քոյրը փախցուց։ Պատերազմին տաք ատենը Տիգրան զարկաւ ըսպաննեց Աժդահակը։

Տիգրան շինեց Տիգրանակերտ քաղաքը, ուրիշ շատ մը քաջութիւններ ըրաւ և 45 տարի թագաւորելէ վերջ մեռաւ։

Տիգրանէն վերջ ուրիշ շատ թագաւորներ ալ եկան և Հայոց առաջին թագաւորութիւնը որ Հայկազանց կոչուեցաւ, 200 տարի դիմանալէ ետք վերջացաւ։

ՀԱՐՑՈՒՄ։ Ո՞վ էր Արայ. Շամիրամ ի՞նչ ըրաւ։ Ո՞վ էր Տիգրան Ա. և ինչե՞ր ըրաւ։ Ինչո՞ւ կոչուեցաւ Հայկազանց թագաւորութիւն եւ որչափ դիմացաւ։

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամէն մարդ կը սիրէ բարի և աշխատասէր աշակերտը. ծոյլ տղան բնաւ չսիրուիր եւ երբ մեծնայ, թէ անպատիւ մէկը կըլլայ և թէ շատ ալ թշուառ կը մնայ։

(Դասատուն նախ աշակերտներուն գրել կուտայ իրենց տետրակներնուն մէջ և յետոյ տախտակին վրայ, սրբագրութեան համար)։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 07:00 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԴԱՍ 10.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ԳԵՂԱՑԻՆ ԵՒ ՕՁԸ

Գեղացի մը, ձմեռ ատեն,
Տուն դառնալով իրիկուան դէմ
Իրեն գեղին մօտ անտառէն՝
Ճամբուն վրայ տեսաւ յանկարծ
Երկայն օձ մը որ էր պառկած.
«Սառած է խեղճ—ըսաւ մտքէն—
Տանիմ տունս, ի՞նչ կըլլայ,
Գուցէ նորէն ողջըննայ»:
Խեղճ գեղացին ողորմեցաւ,
Պոչէն բռնած առաւ տարաւ,
Եւ կրակին քով զգոյշ դրաւ:
«Քիչ մը ես ալ հանգչիմ ըսաւ»:
Անցաւ վրան քիչ ժամանակ,
Օձն անիրաւ տաքնալուն պէս՝
Վերցուց գլուխը և նայեցաւ,
Ու ֆշալով օղակ օղակ՝
Դէպի գեղացին բարերար
Սողոսկեցաւ թշնամաբար:
Մարդն արթնցաւ. ի՞նչ տեսնայ,
Իր մահուընէ փրկած գազանն
Պիտի մատնէ զինքը մահուան՝
Եթէ քչիկ մ'ալ ուշանայ:
Աճապարեց առաւ կացին
Ջաղխեց գլուխը չար գազանին:

(Այս ոտանաւորը պէտք է գոց սորվին աշակերտք և դասատուն անոր բարոյականը պէտք է ըսէ անոնց):

Generated on 2016-07-19 07:01 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Դասատուն այս ոտանաւորէն քանի մը տող կը կարդայ որ աշակերտք գրեն իրենց տետրակներնուն մէջ. յետոյ տախտակին վրայ ալ գրել կուտայ սրբագրութեան համար։

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ԿՐՕՆՔ

ԲԱԲԵԼՈՆԻ ԱՇՏԱՐԱԿԸ

Նոյ երեք զաւակ ունէր, Սէմ, Գամ և Յաբէթ որոնց սերունդն են աշխարհի բոլոր մարդիկը։ Անոնք կամաց կամաց բազմացան և Արարատ լեռնէն իջնելով հասան Սենաար կոչուած դաշտը և հոն բնակեցան։ Ամենքն ալ միևնոյն լեզուն կը խօսէին։ Զուզելով իրարմէ բաժնուիլ և վախնալով որ Աստուած դարձեալ ջրհեղեղով զիրենք կը պատժէ, որոշեցին շինել շատ բարձր աշտարակ մը որուն ծայրը մինչեւ երկինք պիտի հասնէր և անոր մէջ պիտի բնակէին ամենքն ալ։

Սակայն Աստուած հասկնալով անոնց միտքը և փափաքելով որ ամբողջ երկիրը բնակուած ըլլայ, անոնց լեզուն խառնակեց. սկսան իրարու ըսած չը հասկնալ և կիսկատար թողուցին այդ աշտարակը որ Բաբելոնի աշտարակ կոչուեցաւ։

Ասոնց ամենքն ալ բարի չեղան. մեծ մասը մոռցաւ Աստուծոյ բարիքը և սկսաւ կուռքեր պաշտել։

Աստուած իր պաշտպանութիւնը վերցուց անոնց վրայէն և իրեն հաւատարիմ մնացած Աբ-

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 07:01 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

բահամ անունով մարդ մը զատելով, որոշեց որ անոր ցեղը պաշտպանէ։ Այդ ժողովուրդը կոչուեցաւ Իսրայէլացի։

ՀԱՐՑՈՒՄ։ Նոյ քանի՞ զաւակ ունէր. ինչո՞ւ աշտարակ չինել ուզեցին։ Յաջողեցա՞ն։ Ո՞վ էր Աբրահամ։

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Վերի պատմութեան առաջին մասը գրել տուէք ուղղագրութեան համար, սրբագրութիւնը վերջը ընելով նախորդ ձեւերու պէս։

ԴԱՍ 12.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՎԱՂԱՐՇԱԿԷՆ — ՄԻՆՉԵՒ ԱՐՏԱՇԷՍ Ա.

Հայոց առաջին թագաւորութիւնը լմննալէն վերջ 150 տարիի չափ հայերը թագաւոր չունեցան։ Պարթեւ կոչուած ազգէն Վաղարշակ անունով մարդ մը հայոց թագաւոր եղաւ և հայոց պատմութիւնը փնտռելով գտաւ և կարդաց, հասկնալու համար թէ հայ ազգը ուրկէ յառաջ եկած է։

Վաղարշակ լաւ մէկը ըլլալուն ուզեց Հայաստանը ազատել թշնամիներէն և անոնցմէ էն գլխաւորը բռնելով սպաննեց։ Յետոյ շատ մը

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 07:04 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

բարեկարգութիւններ ըրաւ և 22 տարի թագաւորելէն վերջ մեռաւ։

Անոր յաջորդեց իր որդին Արշակ Ա. որ հօրը պէս շատ քաջութիւններ ըրաւ։

Անոր ալ յաջորդեց Արտաշէս Ա. որ խիստ քաջ թագաւոր մը եղաւ։ Արտաշէսի զինուորները այնչափ շատ էին որ եթէ մէյ մէկ քար նետէին բլուր մը կը ձևանար և եթէ մէյմէկ նետ նետէին արեւը կը խափանուէր։

Արտաշէս Ա. 25 տարի թագաւորելէն վերջը իր զինուորներէն սպաննուեցաւ։

ՀԱՐՑՈՒՄ։ Ո՞վ էր Վաղարշակ և ի՞նչ ըրաւ։ Ո՞վ էր Արտաշէս Ա.։

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

(Հետեւեալը գրել տալ աշակերտաց և յետոյ տառասրխալները սրբագրել՝ գրատախտակին վրայ գրելով)։

Ամեն հայ տղայ պէտք է որ իր ազգին պատմութիւնը սորվի, և հասկնայ թէ իր ազգը ինչ անցեալ ունեցած է։ Ուստի պէտք է որ պատմութեան դասերնիդ լաւ սորվիք որպէսզի չմոռնաք։

Generated on 2016-07-19 07:10 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY

ԴԱՍ 13.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԳԻՐԵՐԸ

Հայ եկեղեցին տարին անգամ մը կը տօնէ Ս. Սահակի և Ս. Մեսրոպի տօնը: Այդ Սուրբ հայրապետները գտած են մեր հայ լեզուի գիրերը: Լեզուի մը յառաջացման համար ամենէն մեծ միջոցը գիրն է: Եթէ գիր չունենայինք, գրականութիւն ալ չպիտի ունենայինք և իրարու հետ հեռուէն չպիտի կրնայինք հաղորդակցիլ:

Ուստի երբ տղայ մը կարդալ ու գրել սորվի, պէտք է ճանչնայ մեր գիրերուն հեղինակները և երախտիքով յիշէ անոնց անունը:

Ս. Սահակ և Ս. Մեսրոպ ապրած են Քրիստոսէ 500 տարի վերջը: Անոնց օրով հայ լեզուն շատ ծաղկեցաւ և շատ մը գիրքեր և Աստուածաշունչը հայերէնի թարգմանուեցան ու ամեն տեղ դպրոցներ բացուեցան հայերէն սորվեցնելու համար:

ՀԱՐՑՈՒՄ: Ո՞վ էին Սահակ եւ Մեսրոպ. ինչե՞ր ըրին անոնք. անոնց օրով ի՞նչ կարեւոր բաներ պատահեցան:

Generated on 2016-07-19 07:10 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Դռջուններրը կը շինէն իրենց փույնը խոտի շիւղերով և փուրթի թելերով։

Անոնց իրենց ցաքը կը սնուցանէն որթերով եւ դրթուրներով։

(Դասատուն վերի հատուածը նոյնութեամբ օրինակել կուտայ աշակերտներուն, յետոյ իւրաքանչիւր աշակերտի մէկ կամ երկու բառ կարդացնելով կը հարցնէ թէ ինչ տառասխալներ կան և զանոնք ուղղել կուտայ իրենց տետրակներնուն մէջ։

ԴԱՍ 14.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ԿՐՕՆՔ

ԱԲՐԱՀԱՄ ՆԱՀԱՊԵՏ

Աբրահամ Նոյի սերունդէն էր և կը բնակէր Խառան քաղաքը։ Հայրը թէեւ Աստուած մոռցած էր բայց ինք աստուածապաշտ ու արդար մարդ էր։

Օր մը Աստուած կանչեց զայն և ըսաւ. «Ելիր քու երկրէդ և իմ ցուցուցած երկիրս բնակէ, որովհետև կուզեմ որ դուն մեծ ազգի մը նահապետը ըլլաս»։ Աբրահամ հնազանդեցաւ եւ իր կնոջը Սառային ու եղբօրորդւոյն Ղովտին հետ գնաց հոն բնակեցաւ։ Աստուած ըսած էր թէ զինքը մեծ ազգի մը հայրը պիտի ընէ բայց ինքը 90 տարեկան էր և դեռ զաւակ մը չունէր անոր համար շատ տխուր էր։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 07:10 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ամառուան տաք օր մը Աբրահամ տրտում նստած էր իր վրանին առջև երբ հեռուէն երեք անծանօթ մարդեր տեսաւ որ իր կողմը կուգային։ Անմիջապէս ելաւ զանոնք դիմաւորեց և իր վրանը բերելով անոնց ոտքերը լուաց և ուտելիք տուաւ։ Այդ անծանօթներէն մին Աստուած էր և միւս երկուքն՝ալ հրեշտակներ էին։ Երբ ճաշը

ԱԲՐԱՀԱՄԻ ԶՈՀԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ

լմնցաւ, Աստուած ըսաւ իրեն թէ տարի մը վերջը զաւակ մը պիտի ունենայ. յետոյ մեկնեցան։

Աստուծոյ խոստումը կատարուեցաւ և տարին լրանալուն Սառա զաւակ մը ունեցաւ որուն անունը դրին Իսահակ։

Հրեշտակները Աբրահամի քովէն մեկնելով չիտակ Սոդոմ և Գոմոր քաղաքները գացին եւ

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 07:16 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ղովտին ըսին որ իր ընտանիքը և զաւակները առնէ և առանց ետեւնին դառնալու հեռանան, որովհետեւ այդ քաղաքներու մարդիկը շատ չարացած ըլլալնուն Աստուած զանոնք պիտի պատժէ։ Ղովտ հնազանդեցաւ և մեկնեցան։

Հետեւեալ առտուն երկինքէն կրակ և ծծումբ տեղալով այդ քաղաքները մէջի գտնուածներովը այրեց և մոխիր դարձուց։ Ղովտին կինը ճամբան ետին դառնալով ուզեց նայիլ թէ ինչ կը պատահէր բայց իսկոյն աղի արձան կտրեցաւ։

ՀԱՐՑՈՒՄ։ Ո՞վ էր Աբրահամ. ո՞վ էին հիւրերը։ Աստուած ի՞նչ խոստացաւ։ Ինչո՞ւ և ի՞նչպէս պատժեց Սոդոմ և Գոմոր քաղաքներու բնակիչները։

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

(Շարադրութեան ձեւով)

Նաւու մը մէջ ի՞նչ աշխատութիւն ունին նաւապետը, ղեկավարը, հնոցպանը, նաւաստիները, խոհարարը, բժիշկը, սպասաւորները, վերակացուն։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 07:16 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԴԱՍ 15.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՑՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՏԻԳՐԱՆ Բ. — ԱԲԳԱՐ

Արտաշէսին յաջորդեց իր որդին Տիգրան Բ. որ բաւական քաջ ըլլալով Ցոյներուն յաղթեց եւ Ցունաստանէն շատ մը կուռքեր բերելով մեհեաններու (կռապաշտներու եկեղեցի) մէջ դրաւ։

Տիգրան Բ. շատ մը ուրիշ պատերազմներ ալ ըրաւ քաջութեամբ և 54 տարի թագաւորելէն վերջ մեռաւ։

Անոր յաջորդեց իր որդին Արտաւազդ որ ինքզինքը բոլորովին կերուխումի տալով ընաւ օգտակար չեղաւ։

Աբգար, Արտաւազդին թոռը, շատ քաջ եւ խաղաղասէր մէկն ըլլալով Պարսկաստան գացած էր թագաւորին որդւոցը մէջ հաշտութիւն ձգելու համար։ Վերադարձին սարսափելի բորոտութիւն մը ունեցաւ և բժիշկները չկրցան բժշկել։

Աբգար լսած էր որ Քրիստոս շատ մը բժշկութիւններ կընէր և հրաշքներ կը գործէր, նամակ մը գրելով Քրիստոսի աղաչեց որ գայ զինքը բժշկէ։

Քրիստոս տեսնալով Աբգարի հաւատքը, խոստացաւ որ իր Համբարձումէն վերջը առաքեալներէն մէկը կը ղրկէ զինքը բժշկելու համար։ Եւ իրաւ ալ Թադէոս Առաքեալ եկաւ և զայն բժշկեց ու Քրիստոնէութիւնը հաստատեց։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 07:17 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ասոր վրայ Աբգար հաւատաց թէ Քրիստոս Աստուծոյ որդին է և բոլոր իր տնեցիներովը ընդունեց Քրիստոնէութիւնը և 38 տարի թագաւորելէ վերջ սրբութեամբ մեռաւ։

ՀԱՐՑՈՒՄ։ Ո՞վ էր Տիգրան Բ. և ի՞նչ ըրաւ։ Ո՞վ էր Աբգար և ի՞նչ պատահեցաւ։

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Կաթը եփելէ վերջ պէտք է խմել. հում կաթին մէջ փոքրիկ ճճիներ կան որոնք կը վնասեն առողջութեան։

Այս հատուածը դասատուն կարդալով գրել կուտայ աշակերտներուն և յետոյ տախտակին վրայ գրել կուտայ սրբագրութեան համար։ Դասատուն պէտք է թելադրէ որ աշակերտները նախապէս աչքէ անցունեն յաջորդ դասի ուղղագրութեան բաժինը, գաղափար մը ունենալու համար։

ԴԱՍ 16.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ԵՐԳ ԳԱՐՆԱՆ

Գարունն եկաւ զուարթ դէմքով,
Լեցուց դաշտերն հազար բերքով,
Գարի, վարսակ, ցորեն ունինք՝
Ալ ի՞նչ կուզենք, պէտք է հրճուինք։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 07:17 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Այծ ու ոչխար, հաւ, սագ ու բադ,
Գիրուկ կովեր որ տան մեզ կաթ,
Մեր տարեկան պարէնն ունինք,
Ալ ի՞նչ կուզենք պէտք է հրճուինք։

Ձմրան համար տաք հանդերձանք,
Կըլլան մեզի բուրդն ու բամպակ.
Շերամ, մետաքս, զարդեր ունինք,
Ալ ի՞նչ կուզենք պէտք է հրճուինք։

Ահա պատրաստ ճաշ գեղջկական,
Ուտենք համով մեր հացն ու թան.
Կարագ, մածուն հաւկիթ ունինք՝
Ալ ի՞նչ կուզենք պէտք է հրճուինք։

Աստուած ամեն բան ստեղծած է մարդուն օգտին համար։

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Միսը մեր գլխաւոր սնունդներէն մէկն է, անիկայ պէտք է եփել ոչ միայն ախորժահամ ընելու համար, այլ նաեւ եփելով անոր մէջի վնասակար ճճիները կը ջնջուին։ Ուրեմն հում միս ուտելը վնասակար է։

(Նախորդ ուղղութեամբ պէտք է կատարել ուղղագրութեան այս վարժութիւնն ալ։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 07:17 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԴԱՍ 17.

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

ԿՐՕՆՔ

ԻՍԱՀԱԿ

Երբ Իսահակ բաւական մեծցաւ, Աստուած ուզեց փորձել Աբրահամու հնազանդութիւնը եւ օր մը ըսաւ անոր. «Քու մէկ հատիկ զաւակդ Իսահակը առ, իմ ցուցուցած լեռս տար և հոն ինծի զոհէ»:

Աբրահամ հնազանդեցաւ և առտու մը կանուխ փայտ, կրակ և դանակ առնելով, տղուն հետ ճամբայ ելաւ: Երբոր կը քալէին, Իսահակ հարցուց հօրը թէ ո՞ւր է զոհին ոչխարը: Աբրահամ պատասխանեց. «Աստուած կը հոգայ, զաւա՛կս»:

Երբոր Աստուծոյ ցուցուցած լեռը հասան, Աբրահամ զոհի սեղան շինեց, փայտերը դիզեց և Իսահակն ալ կապելով անոնց վրայ դրաւ: Երբ դանակը ձեռքը կը պատրաստուէր զաւակը զոհելու, յանկարծ Աստուծոյ հրեշտակը երևցաւ և ըսաւ. «Աբրահա՛մ, զաւկիդ մի դպչիր, հիմայ գիտցայ թէ դուն Աստուծմէ կը վախնաս, քանի որ չվարանեցար քու մէկ հատիկ զաւակդ անոր զոհելու»:

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 07:17 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Յետոյ հրեշտակը անոր ցուցուց ոչխար մը որուն գլուխը կերեւնար ծառի մը քովիկը։ Աբրահամ առաւ զայն և Իսահակին տեղ զոհելով փառք տուաւ Աստուծոյ։

Աստուած խոստացաւ որ իր զաւակները երկընքի աստղերուն չափ պիտի բազմացնէ։

ՀԱՐՑՈՒՄ։ Աստուած ինչո՞ւ փորձեց Աբրահամը. ի՞նչ ըրաւ Աբրահամ ևն.։

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Դոչունները մէր պարտեզնէրուն երաժիժտներն են։ Անոնց օգտակար են հունցգերուն յամար վասնզի կը բըճաճնէն վնասակար ճրճիները եւ որթէրը։

Դասատուն։ Տղա՛ք այս հատուածին մէջի տառասըխալները, սրբագրելով գրեցէք տետրակնուդ մէջ։

ԴԱՍ 18.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՑՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՍԱՆԱՏՐՈՒԿ — ԱՐՏԱՇԷՍ Բ.

Աբգարու մահէն վերջ թագաւորեց իր քեռորդին Սանատրուկ որու երդում ընել տուին որ Քրիստոնէութիւնը ազատ պաշտուի։ Բայց Սանատրուկ քիչ յետոյ մոռնալով իր երդումը սկսաւ

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 07:17 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

քրիստոնեաները սպաննել և իր արձանը կանգնեցնելով պաշտել տուաւ։

Անոր յաջորդեց Երուանդ որ Սանատրուկին ցեղը սուրէ անցուց. միայն Արտաշէս անունով տղայ մը կրցաւ փախչիլ և ազատիլ։

Երուանդ 20 տարի թագաւորելէ վերջ ըսպաննուեցաւ և անոր յաջորդեց Արտաշէս Բ. որ Հայաստանը շատ ծաղկեցուց թէ արուեստով եւ թէ մշակութեամբ։ Ինքը քաջութեամբ կռուեցաւ և Հայաստանը գրեթէ ազատեց թշնամիներէն։

Արտաշէ՛ս Բ. 41 տարի ժողովուրդը սիրով և խաղաղութեամբ կառավարելէ ետք մեռաւ։ Հայերը անոր մահուան վրայ այնչափ ցաւեցան եւ սգացին որ շատեր ինքզինքին ողջ ողջ թաղեցին Արտաշէսի գերեզմանին քով։

ՀԱՐՑՈՒՄ։ Ո՞վ էր Սանատրուկ և ի՞նչ ըրաւ. ո՞վ էր Երուանդ. ո՞վ էր Արտաշէս Բ.։

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Շերամը օգտակար թրթուր մըն է որ թթենիի տերեւով կը սնանի։ Անիկա մեղի կուտայ խոզակներ որոնցմէ քաշելով կը հանեն մետաքսի բարակ թելեր և անոնցմով կը շինեն ազնիւ կերպասներ։ Մետաքսը շատ յարգի եւ շատ ալ սուղ է։

Generated on 2016-07-19 07:22 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY

ԴԱՍ 19.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ԳՈՒԹ

Ունեցածէդ ողորմութիւն տուր աղքատին և մի՛ երես դարձներ անոր. ասով արժանի կըլլաս Աստուծոյ սիրուն և իր բարիքները կը վայելես:

Ունեցածիդ համեմատ ողորմութիւն տուր. եթէ շատ ունիս շատ տուր. եթէ քիչ ունիս քիչ տուր: Բայց ան քիչն ալ սրտանց տուր և ոչ թէ դժկամակութեամբ:

Գթասրտութիւնը հարստութիւն կը բերէ և ան որ գութ ունի աղքատներուն համար, կարօտութիւն չունենար: Վասնզի Աստուած կը տեսնէ բարի գործերը և զանոնք կը յիշէ, կը վարձատրէ ապագային:

Աղքատին ողորմիլը՝ Աստուծոյ փոխ տալ է: Աւետարանը կըսէ թէ Նոյն իսկ գաւաթ մը ջուրը անվարձ չի մնար:

Անօթի եղողներուն հետ բաժնեցէք ձեր հացը, և մերկ եղողը ծածկեցէք ձեր հագուստներովը:

Երկրագո՛րծ, երբ կը հնձես արտերդ, ետ մի՛ դառնար ձեռքէդ թափած հասկերը ժողվելու, այլ ձդէ՛ որ օտարականը, որբը, այրին՝ քիչ մը վերջը դան ժողվեն զանոնք, որպէսզի

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 07:22 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Աստուծոյ օրհնութիւնը քու վրադ և քու գործերուդ մէջ ըլլայ։

ՀԱՐՑՈՒՄ։ Ի՞նչ է գթութիւնը և ինչո՞ւ գութ ունենալու ենք։

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Դասատուն թող գրել տայ 10 մարդու և կնոջ անուններ, 10 թռչունի, 10 կենդանիի և 10 ծաղիկի անուններ և յետոյ սրբագրել սխալները։

ԴԱՍ 20.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ԿՐՕՆՔ

ԻՍԱՀԱԿԻ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆԸ

Սառայի մեռնելէն ետք, Աբրահամ որ շատ ծերացած էր, իր Եղիազար ծառան ուրիշ երկիր ղրկեց, պատուիրելով որ Իսահակի համար կին մը գտնէ։

Եղիազար իսկոյն ճամբայ ելաւ տասը ուղտերով, որոնք աղուոր ընծաներ կը կրէին և հասաւ Խառան քաղաքը։ Իրիկունը երբ ջրհորի մը քով կը հանգչէր, ծունկի եկաւ և Աստուծոյ աղաչեց որ զինքը առաջնորդէ այդ գործին մէջ։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 07:22 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Ու ըսաւ. «Ո՛վ Աբրահամի Աստուածը, թող Իսահակի կին ըլլայ այն աղջիկը որ ջրհորէն ջուր առնելու եկած ատեն ոչ միայն ինծի ջուր տայ, այլ նաև իմ ուղտերուս»:

Այդ միջոցին Ռեբեկա անունով աղջիկ մը ջրհորէն ջուր առնելու եկաւ: Երբ Եղիազար անկէ ջուր ուզեց, աղջիկը իսկոյն սափորը տուաւ որ խմէ. յետոյ ուղտերուն ալ ջուր տուաւ: Եղիազար շնորհակալութիւն յայտնեց Աստուծոյ իր խնդիրքը կատարած ըլլալուն համար և այն գիշերը աղջկան ծնողաց տունը երթալով իր միտքը յայտնեց:

Աղջկան հայրը հաւանեցաւ և առաւօտուն Եղիազար Ռեբեկան առնելով վերադարձաւ Աբրահամի քով: Այն իրիկունը Իսահակ դաշտ ելած էր երբ յանկարծ տեսաւ տասը ուղտեր: Հասկցաւ թէ Եղիազարն է որ իր հարսնցուն կը բերէ: Յետոյ ամուսնացաւ Ռեբեկայի հետ:

Աբրահամ 175 տարեկան մեռաւ և իր բոլոր ունեցածը Իսահակ ժառանգեց:

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Ի՞նչ տեսակ կենդանիներ են կատուն, շունը, հաւը, աքաղաղը, կրիան, նապաստակը, ձին, թութակը, մրջիւնը, մեղուն:

Աշակերտները այս անուններով նախադասութիւններ թող կազմեն. յետոյ իրենց գրածներուն մէջի տառասխալները սրբագրեն մի առ մի:

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 07:23 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԴԱՍ 21.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՑՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՒԱԶԴ Բ. — ՏՐԴԱՏ

Արտաշէսի յաջորդեց իր որդին Արտաւազդ Բ. որ զբօսասէր և անկարգ կեանք մը ունենալուն օր մը որսի ելած ատեն խորունկ փոսի մը մէջ իյնալով կորսուեցաւ 2 տարի թագաւորելէ վերջ։

Արտաւազդի վրայ առասպելով կը պատմեն թէ, այրի մը մէջ շղթայով կապուած էր և երկու որսի շուներ միշտ կը կրծէին շղթան որպէսզի բրդի և Արտաւազդ ելլէ աշխարհը կործանէ. բայց դարբիններուն երկաթ ծեծելու ձայնէն շղթաները նորէն կը զօրանային։

Արտաւազդէն վերջ թագաւորեց Տիգրան Գ. որ քաջ և արիասիրտ ըլլալով պարսիկներուն հետ միացած Հռովմայեցիներուն յաղթեց եւ սկսաւ Փոքր Ասիոյ կողմերը քալել քաջութեամբ. բայց հոն գտնուող թագուհիէ մը խաբուելով գերի բռնուեցաւ։ Տիգրան 42 տարի թագաւորելով մեռաւ։ Անոր յաջորդեց Վաղարշ որ Վաղարշապատ քաղաքը շինեց։ Անոր ալ յաջորդեց Խոսրով Ա. որ մեծ կոչուեցաւ։ Իր հօրը տեղը անցնելուն պէս սկսաւ պատերազմիլ և թշնամիները փախցուց։ Արտաշիր անունով իշխան մը մեծ պարգևներ

Generated on 2016-07-19 07:23 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY

խոստացաւ Խոսրովը մեռցնողին. այս բանը յանձն առաւ Անակ անունով նախարար մը որ Հայաստան գալու ատեն ճամբան որդի մը ունեցաւ որ է մեր Ս. Գրիգոր Լուսաւորիչը։

Անակ իր չար նպատակին հասաւ և օր մը որսի ելած ատեննին զարկաւ սպաննեց Խոսրովը։ Անոր մեռնելէն վերջ Արտաշիր Հայաստան եկաւ, բոլոր հայերը նուաճեց, Խոսրովին ցեղը ջնջել տուաւ, որոնցմէ Տրդատ անունով մանչ մը եւ քոյրը Խոսրովիդուխտ միայն կրցան ազատիլ։

Տրդատ Հռովմ փախչելով հոն շատ քաջութիւններ ըրաւ և մեծ անուն ստացաւ։ Անգամ մը մէկ ձեռքով երկու վայրենի ցուլերու եղջիւրներէն բռնեց և սպաննեց. ուրիշ անգամ մալ իր հակառակորդին կառքին ետեւէն այնպէս ուժով բռնեց որ ձիերը չկրցան քաշել։

Հռովմայեցւոց կայսրը շատ հաւնեցաւ Տրդատի քաջութեան և իմանալով որ հայոց թագաւորին որդին է, գլուխը թագ դրաւ և թագաւորական զգեստներ հագցնելով Հայաստան ղրկեց ուր զինքը դիմաւորեցին և գահը նստեցուցին։

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Ջուրը շատ օգտակար յէղուկ է, ծառաւնիս կանձընէ, կը մաքրէ, երկիրը կը չրէ, կրակը կը մարէ եւայլն։ Ջուրը կը սարի և կլայ պինթ եւ կամ տագութեամբ չօքի կլայ։ Եթէ չուր չըլայ մարթիք և բույսէր չէն ապրիր. իսք երփ շատ ըլլայ քէտէրը յօրթելով կողոզեն դաժտէրը և կը բճաճնէն հունցգէրը։

(Սրբագրել տալ տառասխալները)։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 07:23 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԴԱՍ 22.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿԻՆ ԵՐԳԸ

Ահա ծագեց կարմիր արեւ,
Տաք ու պայծառ է օդը.
Դէ՛հ, քաշեցէք սիրուն եզներ,
Առաջ տարէք արօրը։

Արտը վարենք, ակօս փորենք,
Խոր ակօսներ հողին մէջ.
Սերմը ցանենք որ հունձ հնձենք,
Ցորեն դիզենք կալի մէջ։

Թէ գայ ձմեռ, մենք վախ չունինք,
Ուրախ կանցնի մեր օրը.
Ուտելու միշտ պաշար ունինք,
Լի և կուշտ է մեր փորը։

Դէ՛հ, քաշեցէք սիրուն եզներ,
Շուտով վարենք արտերը.
Թող չըսեն մեր դրացիներ,
Ծոյլ են հայուն եզները։



Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 07:24 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԴԱՍ 23.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ԿՐՕՆՔ

ԻՍԱՀԱԿԻ ԶԱՒԱԿՆԵՐԸ

Իսահակ երկու զաւակ ունեցաւ, Եսաւ եւ Յակոբ։ Եսաւ շատ մազոտ էր և լաւ որսորդ մը եղաւ, իսկ Յակոբ փափկակազմ տղայ մը ըլլալով մօրը մօտ կը կենար. այս պատճառաւ Ռեբեկա շատ կը սիրէր զինքը. Իսահակ ալ Եսաւը շատ կը սիրէր որովհետեւ իրեն լաւ որսի միս կը բերէր։

Օր մը Եսաւ դաշտէն տուն դարձաւ յոգնած, ու տեսնելով որ եղբայրը ոսպնաթան եփած է, խնդրեց որ իրեն ալ տայ։ Յակոբ ոսպնաթանը տալու համար պայման դրաւ որ Եսաւ իրեն թողու անդրանկութեան իրաւունքը. եղբայրը հաւանեցաւ և երդուընցաւ որ անդրանկութենէ կը հրաժարի։

Այդ միջոցին Իսահակ ծերացած ըլլալով աչքերը չէին տեսներ։ Զգալով որ պիտի մեռնի, կանչեց Եսաւը ըսաւ. «Գնա և ինծի որսի միս բեր որ ուտեմ և քեզ օրհնեմ»։

Ռեբեկա լսեց այս խօսքը և որպէսզի Իսահակի օրհնութիւնը իր սիրած զաւկին բաժին իյնայ, շուտ մը երկու ուլ բերել տուաւ Յակոբի, մորթեց ու եփեց։ Յետոյ Եսաւի հագուստները

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 07:24 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Յակոբի հագցուց, անոր վիզն ու ձեռքերն ալ այծի մորթով պատեց որպէսզի եթէ Իսահակ չօշափէ՝ չհասկնայ Յակոբը ըլլալը։

Յակոբ հօրը տարաւ պատրաստուած կերակուրը. Իսահակ խաբուելով իր օրհնութիւնը անոր տուաւ։ Քիչ ետքը Եսաւ վրայ հասաւ եւ հասկնալով կատարուած խաբէութիւնը ոխ պահեց եղբօրը դէմ։

Ռեբեկա վախնալով որ Եսաւ կսպաննէ Յակոբը, իսկոյն Խառան՝ իր եղբօր քով ղրկեց։

Գոց պատմել այս պատմութիւնը և ըսել թէ ինչո՞ւ Եսաւ կորսնցուց անդրանկութեան և օրհնութեան իրաւունքները։

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Հետեւեալ բառերով մէյմէկ նախադասութիւններ շինեցէք։

Անձրեւ, ձիւն, տաք, ցուրտ, ծաղիկ, հովանոց, ձեռնոց, ածուխ, մոխիր։

(Այս վարժութիւնները պէտք է գրատախտակին վրայ ընել տալով, տառասխալները սրբագրել տալ ուրիշ աշակերտներու)։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 07:24 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԴԱՍ 24.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՏՐԴԱՏ

Տրդատ երբ Հայաստան եկաւ տեսաւ որ Արտաշիրին տղան Շապուհ կը տիրէ, անմիջապէս պատերազմի ելաւ և Շապուհի յաղթելով բոլոր պարսիկները վռնտեց Հայաստանէն և ուրիշ ազգերու սրտին մէջ վախ ձգեց։

Տրդատ հրաման ըրաւ որ ամեն տեղ կուռքեր պաշտեն և իմանալով որ մի քանի տեղեր Քրիստոնեաներ կան, խստիւ հրամայեց որ զանոնք ջնջեն. շատերը նահատակուեցան. ասոնց մէջն էր նաև Ս. Գրիգոր որուն Անակին որդին ըլլալը իմանալով շատ մը չարչարելէն վերջը Արտաշատ քաղաքին խոր վիրապին մէջ նետել տուաւ։

Այդ օրերուն Հռովմի մէջ ալ Քրիստոնեաներուն դէմ հալածանք սկսած ըլլալուն, շատ մը կոյսեր Հռիփսիմէի հետ Հայաստան եկեր էին։ Տրդատ Հռիփսիմէի գեղեցկութեանը հաւնելով ուզեց հետը ամուսնանալ. կոյսը մերժեց. ուստի Տրդատ ալ բարկանալով ամենքն ալ սրէ անցունել տուաւ, բայց ինքն ալ Աստուծմէ պատժուելով օր մը որսի ատեն խոզի կերպարանք մտաւ։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 07:24 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Սուրբ Գրիգոր 14 տարի վիրապին մէջ Աստուծոյ ողորմութեամբը ողջ մնացած էր։ Աստուծոյ հրեշտակը Տրդատին Խոսրովիդուխտ քրոջը երազին մէջ իմացուց թէ մինչեւ որ Ս. Գրիգոր վիրապէն չելլէ անկարելի է որ եղբայրը բժշկուի։ Խոսրովիդուխտ մարդ ղրկեց և Գրիգորը վիրապէն հանել տուաւ. Ս. Գրիգոր Տրդատը բժշկեց, և բոլոր հաւատացողները մկրտեց, յետոյ Ս. Հռիփսիմէի և ընկերուհիներուն վրայ եկեղեցի շինեց և Կեսարիա գնաց։

Տրդատ Քրիստոնեայ ըլլալէն վերջ բոլոր կռատունները կործանեց, եկեղեցիներ շինեց, որոնց ամենէն նշանաւորն է Ս. Էջմիածին։

Ս. Գրիգոր Հայաստանի ամեն կողմերը Քրիստոնէութիւն քարոզեց եւ լուսաւորեց, անոր համար Լուսաւորիչ կոչուեցաւ։

Տրդատ երկիրը շատ չէնցուց. յետոյ նախարարներուն անկարգութիւնները տեսնելով, ձգեց և գնաց Լուսաւորչայ ճգնարանը բնակեցաւ։ Անոր վրայ նախարարները բարկանալով թունաւորեցին զայն և Տրդատ 54 տարի թագաւորելէ ետք քրիստոնէական մահով մեռաւ։

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Մանկութիւնը կեանքի գարունն է, գիտցիր անոր անմեղ հաճոյքները վայելել։

Աստուած ամեն բան ստեղծած է մարդուս օգտին համար. ջանա օգտուիլ անոնցմէ ուղղամտութեամբ։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 07:25 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԴԱՍ 25.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ԿԱՊԻԿ ԵՒ ՈՒՂՏ

Կապիկ մը և ուղտ մը քովէ քով կը քալէին ճանապարհի մը հետ որ զանոնք գեղէ գեղ կը պտտցնէր իբրեւ հետաքրքրաշարժ կենդանիներ։

Ճամբան շատ յոգնելով կապիկը ըսաւ իր ընկերին. «բարեկամս, թող կուտա՞ս որ քիչ մը կռնակդ ելլամ. ես շատ ծանր չեմ. քիչ մը հանգիստ ընեմ և իրիկուան աւելի շուտ հասնինք տեղերնիս»։

Ուղտը հաւանեցաւ։

Կապիկ աղբարը ուզածին պէս տեղաւորուեցաւ իր բարեկամին կռնակը. բայց քիչ մը ետքը, իր չարամիտ սովորութեան համեմատ, ըսկսաւ հաղար և մէկ խաղեր ու խեղկատակութիւններ ընել անոր. կռնակը կը քերէր, կը կըսմըթտէր, կը ճանկռտէր։

Առջի բերան, ուղտը կը համբերէ, բերանը չի բանար. բայց տեսնալով որ կապիկը չափը կանցնէ, ալ չդիմանար. համբերութիւնը կը հատնի և կը պոռայ. «Անպիտա՛ն կապիկ, ա՛լ հերիք է»։ Եւ սաստիկ ցունց մը տալով կռնակէն վար կը նետէ կապիկը, որ քարերուն վրայ իյնալով ծնօտը կը կոտրի։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 07:30 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

«Արժանի պատիժդ գտար, ըսաւ այն ատեն աճպարարը՝ զայն վեր առնելով, թող չընէիր որ չի գտնայիր»։

ՀԱՐՑՈՒՄ։ Այս պատմութենէն ի՞նչ կը հասկնաք։

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամեն մարդու բարիք չենք կրնար ընել, բայց կրնանք ամենուն համար բարի կամք ունենալ։

Եթէ չենք կրնար մէկու մը բարիք ընել, գոնէ չարիք չը հասցունենք անոր։

Դասատուն պէտք է յանձնարարէ աշակերտներուն որ-պէսզի անոնք միշտ յաջորդ դասի ուղղագրութեան մասը կանուխէն պատրաստեն։

ԴԱՍ 26.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ԿՐՕՆՔ.

ՅԱԿՈԲԻ ԵՐԱԶԸ

Յակոբ դէպի Խառան փախած ատենը գիշերը վրայ հասնելով, դաշտին մէջ պառկեցաւ եւ քար մը դնելո վգլխուն տակը քնացաւ։ Գիշերը երազին մէջ տեսաւ շատ մեծ սանդուխ մը որուն մէկ ծայրը երկիրն էր և միւս ծայրն ալ երկինքը, որուն վրայէն անհամար հրեշտակներ կելլէին

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 07:30 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

կիջնէին։ Աստուած ալ այդ սանդուխին կատարը նստած էր և կըսէր իրեն. «Ես Աբրահամի եւ Իսահակի Աստուածն եմ. այդ երկիրը՝ ուր կը գտնուիս քեզի և քու ժառանգներուդ պիտի տամ, որոնք ծովու աւազին չափ շատ պիտի ըլլան»։

Յակոբ երբ առտուն արթնցաւ, հասկցաւ որ նուիրական տեղ մըն է անիկայ, քարը իւղով օծեց և Աստուծոյ Տուն անուանեց զայն։

Յակոբ իր տեղը հասնելով հոն Լաբանի քովը եօթը տարի աշխատեցաւ և անոր աղջկան

Յետոյ ուզեց իր երկիրը վերադառնալ. բայց ճամբան լսեց որ իր եղբայրը Եսաւ 400 մարդոցմով իր վրայ կը քալէ։ Զայն սիրաշահելու համար, Յակոբ գեղեցիկ նուէրներ ղրկեց Եսաւի որպէսզի բարկութիւնը մեղմէ։

Երկու եղբայրներ իրարու հետ հաշտուելով համբուրուեցան ու Յակոբ դարձաւ իր հօր Իսահակի քով որ 170 տարեկան մեռաւ։

ՀԱՐՑՈՒՄ։ Պատմէ Յակոբի երազը։ Յակոբ ի՞նչ կեանք վարեց։

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Շարադրութեան ձեւով

Գրեցէք թէ տարին քանի՞ եղանակ ունի, իւրաքանչիւրը նկարագրելով։

Ի՞նչ է հանրակառքը, չոգեկառքը, ինքնաշարժ կառքը և երկանիւը։

(Իւրաքանչիւր աշակերտի գրածներուն մէջի տառասխալները սրբագրել տալ)։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 07:31 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԴԱՍ 27.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՑՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԽՈՍՐՈՎ — ԱՐՇԱԿ

Տրդատին մեռնելէն ետքը Հայաստան տակն ու վրայ եղաւ։ Նախարարները Վրթանէս Կաթողիկոսին հետ միացած Տրդատին որդին Խոսրովը թագաւոր դրին. բայց Խոսրով իր հօրը քաջութիւնը չունէր և զբօսասէր կեանք մը անցուց։ Իր օրով Թշնամիները դարձեալ սկսան Հայաստանի վրայ քալել, բայց Վահան Ամատունի քաջ զօրավարը անոնց դէմ ելաւ և հալածեց զանոնք։

Խոսրովի յաջորդեց Արշակ որ շատ մոլի եւ անկարգ թագաւոր մը եղաւ։ Սկսաւ Պարսից հետ բարեկամութիւն հաստատել առանց մտածելու թէ անոնք Հայաստանի թշնամիներն էին։ Իր եղբօրորդին սպաննել տալով անոր կնոջ հետ ամուսնացաւ։ Արշակաւան անունով քաղաք մը շինեց և չէնցնելու համար հրաման հանեց որ հոն գացող յանցաւորները ազատ են պատիժէ. այս լսելով չարագործ մարդիկ անմիջապէս հոն դիմեցին և այսպէսով քաղաքը լեցուեցաւ։ Ասոր վրայ նախարարները նեղանալով միացան եւ Արշակաւանը կործանեցին։ Արշակ Վրացիներու օգնութեամբ պատերազմի ելաւ Նախարարնե-

Generated on 2016-07-19 07:31 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY

րուն դէմ. բայց նեղը մնալով դիմեց Սուրբ Ներսէսի որ շատ դժուարութեամբ զանոնք հաշտեցուց:

Սակայն Արշակ Ս. Ներսէսի բացակայութենէն օգտուելով սկսաւ իր ոխը նախարարներէն հանել անոնցմէ շատերը սպաննել տալով:

Քիչ ատեն վերջ տեսնելով որ թշնամիները դարձեալ Հայաստան կը քալեն, յուսահատեցաւ և բերդի մը մէջ ինքզինքը սպաննեց 18 տարի անիրաւութիւններով թագաւորելէն յետոյ:

ՀԱՐՑՈՒՄ: Ո՞վ էր Խոսրով: Ո՞վ էր Արշակ:

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Շարադրութեան ձեւով

Ի՞նչ է ձկնորսը: Ի՞նչ է ուռկանը:

Ի՞նչ է որսորդը: Ի՞նչ է հրացանը:

Որսորդը ինչո՞ւ շուն ունի իրեն հետ: Զուկերը ի՞նչ տեսակ կենդանիներ են:

ԴԱՍ 28.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՆՃԱՐԵՂ ԾԵՐՈՒՆԻՆ

Բարձրաստիճան անձ մը, օր մը, բազմաթիւ հետեւորդներով տեղէ մը կանցնէր: Տեսաւ ծերունի մը որ արմաւենի մը կը տնկէր:

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 07:31 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

«Ինչո՞ւ պարապ տեղը կը յոգնիս ո՛վ մարդ, ըսաւ նոյն անձը, քանի որ քառասուն տարի ետք պտուղ պիտի տայ տնկածդ։ Դուն այսօր կաս վաղը չկաս։

— Տէ՛ր իմ, պատասխանեց ծերունին, ուրիշ մը տարիներ առաջ տնկեց և ես այսօր կերայ, ես ալ տնկեմ որ ուրիշը ուտէ»։

Հարուստը շատ հաւնելով այս խօսքին՝ հազար ոսկի տուաւ անոր։

Ծերունին ընդունելով այս նուէրը՝ փառք տուաւ Աստուծոյ և շատ գոհ երեւցաւ։

«Ինչո՞ւ Աստուծմէ գոհացար և փառք տուիր, հարցուց ազնուականը։

— Վասնզի, պատասխանեց ծերունին, ուրիշներուն տնկած ծառը քառասուն տարիէն պըտուղ կուտայ, իսկ իմ տնկածս մէկ օրուան մէջ պտուղ տալ սկսաւ, ահա՛ ասոր համար փառք կուտամ Աստուծոյ»։

Հարուստը նորէն հազար ոսկի պարգեւ տըուաւ այս գեղեցիկ պատասխանին համար։

Ծերունին դարձեալ գոհացաւ և փառաբանեց Աստուած։

Հարուստը հարցուց. «Ինչո՞ւ նորէն գոհացար։

— Վասնզի, ըսաւ ծերունին, ամեն մարդու ծառ տարին մէկ անգամ պտուղ կուտայ, իսկ իմ ծառը մէկ օրուան մէջ երկու անգամ պտուղ տըուաւ, ինչո՞ւ չգոհանամ»։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 07:31 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Հարուստը զմայլած այս հանճարեղ պատասխանէն՝ շատ սիրեց Ծերունին և տարաւ վերակացու կարգեց իր պալատին, որպէսզի խրատէ և կրթէ իր զաւակները։

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Շարադրութեան ձեւով

Ի՞նչ ըսել է Ծերունի։ Ի՞նչ տարբերութիւն կայ երիտասարդի մը և Ծերունիի մը մէջ։ Ի՞նչ տարբերութիւն կայ հարուստին և աղքատին մէջ։ Ի՞նչ ըսել է պալատ. խրճիթ։ Ի՞նչ վիճակ կունենան ծառերը ամառ և ձմեռ ատեն։

(Դասատուն բերանացի պատասխանել կուտայ աշակերտներուն եւ լաւագոյն պատասխանը գրել և յետոյ տառասխալները սրբագրել կուտայ իրենց տետրակներնուն մէջ)։

ԴԱՍ 29.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ԿՐՕՆՔ

ՅՈՎՍԷՓ

Յակոբ տասներկու զաւակներ ունեցաւ, անոնց մէջէն ամենէն աւելի կը սիրէր պզտիկը որ Յովսէփ կը կոչուէր և անոր գոյնզգոյն աղուոր վերարկու մը շինել տուած էր։ Այդ պատճառաւ եղբայրները կատէին զինքը։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 07:32 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Օր մը Յովսէփ պատմեց անոնց հետևեալ երազը. «Ձեզի հետ դաշտին մէջ որայ կը կապէի. յանկարծ իմ որաս ելաւ կանգնեցաւ և ձեր կապած որաները անոր երկրպագեցին»:

Ուրիշ անգամ մըն ալ Յովսէփ պատմեց թէ երազին մէջ տեսած էր որ արևը, լուսինը և տասնըմէկ աստղերը իրեն երկրպագութիւն կընէին: Ասոր վրայ եղբայրները ըսին թէ «հայրդ, մայրդ և քու տասնըմէկ եղբայրներդ քեզի երկրպագութի՞ւն պիտի ընեն», և սկսան չափազանց ատել զայն:

Օր մը Յովսէփ և իր եղբայրները ուրիշ քաղաք գացած էին իրենց ոչխարները արածելու: Յակոբ Յովսէփը ղրկեց անոնց քով հասկնալու համար թէ ինչո՞ւ ուշացած են: Եղբայրները երբ հեռուէն տեսան Յովսէփը, ըսին. «Ահա երազատեսը կուգայ, եկէք սպաննենք զայն»: Մէջերնուն Ռուբէն որ ամենէն մեծն էր, ըսաւ. «Ինչո՞ւ ոճիր գործենք. եկէք ջրհորի մը մէջ նետենք զինքը»: Ռուբէնի նպատակն էր ,յետոյ զայն հանել ջրհորէն: Եղբայրները հաւանեցան և վերարկուն հանելով ջրհորի մը մէջ ձգեցին Յովսէփը. բայց քիչ յետոյ տեսան որ խումբ մը վաճառականներ կուգան դէպի իրենց կողմը: Յովսէփը ջրհորէն հանեցին և անոնց ծախեցին դրամով: Յետոյ ուլ մը մորթեցին և Յովսէփի վերարկուն արիւնին մէջ թաթխելով տարին իրենց հօրը Յակոբի ցուցուցին ըսելով որ ճամբան գտած են վերարկուն:

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 07:32 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Յակոբ ճանչցաւ Յովսէփի վերարկուն եւ սկսաւ լալ ողբալ ըսելով թէ ճամբան գազաններ բզքտեր են իր սիրելի զաւակը։

Յակոբ սեւեր հագաւ և երկար ատեն լալով սուգ պահեց իր զաւկին մահուան համար ու թէև իր միւս տղաքները եւ ուրիշներ գացին զինքը մխիթարելու, բայց Յակոբ չէր մխիթարուէր։

ՀԱՐՑՈՒՄ։ Ի՞նչ է նախանձը։ Եղբայրները ինչո՞ւ նախանձեցան Յովսէփին։ Ի՞նչ ըրին անոր։

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Հետեւեալ բառերուն նշանակութիւնը ունեցող բառերը կը կոչուին հոմանիշ։

Դարձեալ, ահարկու, ամայի, պայծառ, խաւար, հէգ, շողոքորթ, նուրբ, մրցանակ, մերժել, ահիլ, ուրեմն, ճոխ, շուրջ, բուրել, շարունակ, ժպտիլ։

ԴԱՍ 30.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՊԱՊ — ԱՐՏԱՇԷՍ

Արշակին յաջորդեց իր որդին Պապ. այդ միջոցին պարսիկները Յունաց դէմ ելած էին ու քիչ էր մնացած որ յաղթէին անոնց, բայց Ս. Ներսէս Նպատ լերան վրայ ելլելով սկսաւ Աստուծոյ աղօթել. սաստիկ քամի մը ելլելով պարսիկները

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 07:32 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ետ կը դարձնէր և ամպ մըն ալ արեւը կը խաբանէր. ասանկով հայերը յաղթեցին պարսիկներուն։

Պապ և բոլոր նախարարները երդում ըրին Ս. Ներսէսի առջեւ որ հաւատարիմ մնան. բայց քիչ վերջը Պապ իր երդումը դրժեց և Ս. Ներսէսը թունաւորելով մեռցուց և Յունաց դէմ ելաւ, սակայն Յունաց թագաւորը գերի բռնեց Պապը և գլխատել տուաւ։

Պապի յաջորդեց Վարազդատ որ չափազանց քաջ և ճարպիկ մէկն էր։ Կը պատմուի թէ անգամ մը ճամբան գողերու հանդիպելով Եփրատ գետին վրայէն ցատկեց որու լայնութիւնը 22 կանգուն էր, և գողերը բռնեց։

Անկէ վերջ յաջորդեցին Արշակ, Վաղարշակ, Խոսրով ու յետոյ Վռամշապուհ, որու ժամանակ Ս. Սահակ Պարթեւ, Մովսէս, Եղնիկ, Կորիւն, Եղիշէ անուն վարդապետներու հետ աշխատելով հայերէն գիրերը գտան, դպրոցներ բացին և շատ մը գիրքեր թարգմանեցին։

Անոր յաջորդեց Արտաշէս որ դեռ պզտիկ ըլլալուն իր եղբայրը Խոսրով թագաւոր եղաւ, բայց տարի մը վերջը մեռաւ։ Այն ժամանակ Պարսից Յազկերտ թագաւորը իր Շապուհ անունով տղան հայոց վրայ թագաւոր դրաւ որ հայերը կրակապաշտ ընէ։

Հայերը իմանալով Յազկերտի միտքը սկսան Շապուհի հետ արհամարհանքով վարուիլ և

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 07:32 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

նեղութիւններ տալ անոր։ Շապուհ չկրնալով համբերել փախաւ բայց ճամբան սպաննուեցաւ ու Արտաշէս թագաւոր եղաւ 18 տարեկան հասակին մէջ։

Արտաշէս անկարգ, մոլի և վատ մէկը ըլլալով ամենուն ատելի եղաւ այնպէս որ հայերը ձանձրանալով աւելի լաւ սեպեցին թագաւոր չունենալ ու Պարսից թագաւորն ալ Արտաշէսը աքսորել տուաւ և այսպէսով վերջացաւ հայոց երկրորդ թագաւորութիւնը 583 տարի դիմանալէ վերջ։

ՀԱՐՑՈՒՄ։ Ո՞վ էին Պապ, Վարազդատ, Վռամշապուհ և Արտաշէս։

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Հետեւեալ բառերուն հակառակները գրեցէք. բարութիւն, ագահութիւն, քնանալ, արշալոյս, պաղ, շռայլ, հպարտութիւն, ատելութիւն, տկարութիւն, վնասել, անկանոն, աշխատասէր, պատուել, վարձատրել, չոր, կարծր, բարակ, արագ, մեծ, հայրենասէր կրօնասէր, գնել, քնանալ, ուժով, գէր։

ԴԱՍ 31.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

«ԲԱՑՑ ՆՇԱՆՆԵՐԸ ԿԸ ՄՆԱՆ»

Հին պատմութիւն մը կայ, որ շատ օգտակար է թէ մեծերու և թէ պզտիկներու համար։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 07:33 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Անգամ մը հայր մը ըսաւ իր տղուն. «Զաւա՛կս, ամեն անգամ որ չար գործ մը կամ խօսք մը ընելու ըլլաս, մէկ մէկ գամ պիտի գամեմ դրան վրայ»։ Դուռը այն ժամանակէն սկսաւ կամաց կամաց գամերով լեցուիլ։ Տղան, գամերով ծածկուած դրան տեսքէն չախորժելով, ըսաւ իր հօրը. «Հա՛յր, չեմ սիրեր որ մեր դուռը այսպէս գամերով լեցուն ըլլայ։

— Շատ աղէկ, պատասխանեց հայրը, այսուհետեւ որքան հնազանդ ըլլաս, վարքդ ու խօսքերդ լաւ ըլլան, ամեն մէկ անգամուան համար գամ մը պիտի հանեմ»։

Այնուհետեւ հայրը, այս պայմանին համեմատ, սկսաւ գամերը մի առ մի հանել, մինչեւ որ մէկ հատ միայն մնաց։

Տղան ուրախ սրտով կանչեց իր հայրը որ վերջին գամն ալ հանէ։ Վերջին գամն ալ երբ ելաւ, «ոհ հայրիկ, ըսաւ տղան, և աչքերը ծակ ծակ եղող դրան վրայ տնկելով, բա՛յց նշանները մնացին, ըսաւ»։

Երբէք չարութիւն մի ըներ, խորհելով թէ ուզած ատենդ կրնաս ներուիլ։ Այո, թերևս այնպէս ըլլայ, բայց աւա՛ղ— նշանները պիտի մնան։

Մաքուր կեանք մը ունենալու համար, ապահով միջոցը կեանքը մաքուր պահելն է։

Թող ամեն տղայ այս պատմութենէն խրատ առնէ և ըստ այնմ վարուի։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 07:33 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԴԱՍ 32.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ԿՐՕՆՔ

ՅՈՎՍԷՓԻ ԿԵԱՆՔԸ

Վաճառականները Եգիպտոս տարին Յովսէփը և Փարաւոնին դահճապետին ծախեցին։ Յովսէփ չուտով սիրելին եղաւ դահճապետին որ զայն իրեն տանը մատակարար կարգեց, բայց անոր կինը չարութեամբ բանտ նետել տուաւ Յովսէփը։

Աստուած միշտ կը պաշտպանէր Յովսէփը։ Բանտին մէջ իրեն ընկեր ունեցաւ Փարաւոնին երկու պաշտօնեաները։ Դիշեր մը երկուքն ալ երազ տեսան և առտուն պատմեցին Յովսէփին որ իսկոյն մեկնեց անոնց երազը։ Առաջինին ըսաւ. «Դուն երեք օրէն պիտի կախուիս. երկրորդին ալ ըսաւ «Դուն ալ երեք օրէն նորէն քու պաշտօնիդ պիտի անցնիս. կը խնդրեմ որ ինծի համար բարեխօսես Փարաւոնին»։

Երեք օր վերջը Յովսէփի մեկնութիւնը կատարուեցաւ։

Երկու տարի կար որ Յովսէփ բանտն էր, երբ Փարաւոն երկու երազներ տեսաւ։ Անգամ մը երազին մէջ տեսաւ եօթ պարարտ կովեր և եօթն ալ վտիտ կովեր որոնք առաջինները կերան։ Միւս երազին մէջ տեսաւ եօթը լեցուն հասկեր

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 07:33 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ու եօթն ալ պարապ հասկեր որոնք առաջինները կլլեցին։

Փարաւոն կանչել տուաւ Եգիպտոսի բոլոր երազ մեկնողները, բայց մէկն ալ չկրցաւ մեկնել։ Այն ատեն բանտէն ազատուող պաշտօնեան յիշեց Յովսէփը և Փարաւոնին պատմեց բանտին եղածը։ Յովսէփ իսկոյն կանչուեցաւ Փարաւոնի առջեւ և սապէս մեկնեց երազները. «Եօթը պարարտ կովերը եւ եօթը լեցուն հասկերը ցոյց կուտան թէ եօթը տարի առատութիւն պիտի ըլլայ Եգիպտոսի մէջ. իսկ եօթը վտիտ կովերը և եօթը պարապ հասկերն ալ ցոյց կուտան թէ յետոյ եօթը տարի ալ սով պիտի ըլլայ». ու Յովսէփ խորհուրդ տուաւ Փարաւոնի որ խելացի կառավարիչ մը դնէ։

Փարաւոն անմիջապէս Յովսէփը Եգիպտոսի կառավարիչ կարգեց։ Յովսէփ առատութեան եօթը տարիներուն մէջ ահագին քանակութեամբ ցորեն ամբարեց եւ երբ հասան սովի եօթը տարիները, ժողովուրդը չնեղուեղաւ և նոյնիսկ օտար երկիրներէն Եգիպտոս կուգային ցորեն գընելու համար։

ՀԱՐՑՈՒՄ։ Յովսէփը ի՞նչ ըրին վաճառականները։ Ինչո՞ւ բանտ դրուեցաւ։ Բանտին մէջ ի՞նչ պատահեցաւ։ Բանտէն ի՞նչպէս ազատեցաւ։ Ինչպէ՞ս մեկնեց Փարաւոնին երազները. յետոյ իրականացա՞ն անոնք։

Generated on 2016-07-19 07:34 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY

ԴԱՍ 33.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՑՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՎԱՐԴԱՆ, ՎԱՍԱԿ

Արշակունեաց թագաւորութիւնը վերջանալէն ետք Պարսից թագաւորը իր կողմէ հայ իշխան մը դրաւ Վասակ անունով որ շատ չարիք հասցուց հայոց։ Պարսիկները կուզէին որ Հայոց կրօնքն ալ ջնջեն, ուստի Յազկերտ հրաման ըրաւ որ հայերը կրակապաշտութիւնը ընդունին. բայց երբ հայերը մերժեցին, այն ատեն Յազկերտ հայոց բոլոր մեծերը Պարսկաստան կանչեց և բանտարկել տուաւ։ Ասոնք տեսնելով որ թէ իրենք պիտի նահատակուին և թէ Հայաստան ոտնակոխ պիտի ըլլայ, առ երեսս ընդունեցին և պարսից մոգերով Հայաստան դարձան։ Երբ հայերը տեսան մոգերը, ամենքն ալ միացած Ս. Ղեւոնդի եւ ուրիշ եկեղեցականներու հետ լաւ ջարդ մը տուին մոգերուն և փախցուցին զանոնք։

Ասոր վրայ Յազկերտ չափազանց բարկանալով անմիջապէս շատ մը զօրքով սկսաւ Հայաստանի վրայ քալել։ Վասակ ուրանալով իր հայ անունը, պարսից կողմը անցաւ անոնց օգնելու համար։

Generated on 2016-07-19 07:34 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY

Հայերը 60000 հոգիի չափ Աւարայրի կողմը ժողվուեցան որոնց մէջ կային քահանաներ, վարդապետներ և եպիսկոպոսներ և Վարդան Մամիկոնեան անուն քաջի մը առաջնորդութեամբ սկսան քալել Պարսից դէմ։ Բոլորն ալ, կտրիճ հայեր, Ս. հաղորդութիւն առնելով ինքզինքին Աստուծոյ յանձնեցին։

ՍԱՐՄԻՐՆ ՎԱՐԴԱՆ

Հետեւեալ առտու Տղմուտ գետին եզերքը սկսաւ Վարդանանց պատերազմը։ Քաջն Վարդան կայծակի պէս ամեն կողմ կը հասնէր և անխընայ կը ջարդէր պարսիկները. բայց վերջապէս ինքն ալ նետէ մը զարնուելով հերոսաբար ինկաւ և իրեն հետ նահատակուեցան 1036 քաջեր, իսկ պարսիկներէն 3500 հոգիէ աւելի մեռան։

Այսպէս թէեւ Վարդան և իր ընկերները մեռան, բայց հայերը ազատ մնացին իրենց Քրիս-

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 07:34 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

տոնէութեան մէջ և ազատեցին հայ եկեղեցին։

Իսկ Վասակ յանցանքներ գործած ըլլալուն համար Ցազկերտ բանտարկել տուաւ և բանտին մէջ որդնոտելով մեռաւ։

Պատմել տալ Վարդանանց պատերազմը։

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Հետեւեալ բառերուն հականիշները գրեցէք։ Խելացի, հեռատես, փորձառու, ազդասէր, սկսիլ, խնամել, միշտ, խռովութիւն, չինել, սիրելի, տկարանալ, ընդունիլ, գերի, միաբանիլ, հագնիլ, կապել, մօտենալ, յայտնել, արգիլել, արդար։

ԴԱՍ 34.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ԳՈՒԹ

Ոտքը բոպիկ, գլուխը բաց
Փորն անօթի, դէմքը դեղնած,
Զունէր հայր, մայր և ոչ ալ տէր,
Դռնէ ի դուռ կը պտտէր,
Աչքերը միշտ լալէն ուռած՝
Ան կը խնդրէր հագուստ ու հաց։
Իր վիշտերը ամէն մէկուն
Ան կը պատմէր առտու իրիկուն,
Փուշ փուշ եղաւ մարդոց մարմին

Generated on 2016-07-19 07:35 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY

Ականջ դնելով անոր ձայնին,
Եւ բարեսիրտ տղաք անոր
Տուին բաներ հինցած կամ նոր։
Ան որ տեսաւ բարի Զաքէն,
Ցօղն արցունքի սրբեց աչքէն,
Վազեց գնաց և իր մօրկան,
Ըսաւ. «Մայրիկ, ա՛խ ան որքան
Որբ տղաքներ կը տառապին...
Ունեցածներս տո՛ւր սա որբին։
Ապրիս որդեակ ըսաւ հայրը,
Եւ համբուրեց զայն իր մայրը։
Քիչ վերջ Զաքէն մէկ մեծ ծրար
Ցանձնեց որբին, որ կը դողար։
Ուրախ եղաւ որբը յուզուած,
«Կեցցես» ըսաւ վերէն Աստուած։

———

Գոց ընել տալ այս ոտանաւորը։

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Հետեւեալ բառերուն հոմանիշները գրեցէք։ Ճարտասան, կը համարուի, գրաւել, մաքառիլ, խիստ, անշուշտ, յուսահատիլ, պակասութիւն, անհետացնել, մըխել, սոսկալի, պատանի, չփոթիլ, իրօք ալ, պատկեր, ողջութեանը, հաստատ, ծաղրել։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 07:35 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԴԱՍ 35.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ԿՐՕՆՔ

ՅՈՎՍԷՓ ԵՒ ԻՐ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ

Քանանացւոց երկիրն ալ սովի մատնուած ըլլալով, Յովսէփ լսած էր որ Եգիպտոսի մէջ պաշար կայ, ուստի իր զաւակները ղրկեց որ երթան ցորեն գնեն. իր քով պահեց միայն կրտսեր զաւակը Բենիամին, կասկածելով որ անոր ալ չարիք մը կը պատահի։

Յովսէփ եղբայրները տեսնալով ճանչցաւ զանոնք բայց չյայտնեց ու տեսնելով որ Բենիամին չկայ, ըսաւ որ երթան ու զայն ալ բերեն եւ Շմաւոնը իբր պատանդ իր քով պահեց։

Յակոբ չուզեց ղրկել Բենիամինը, վախնալով որ անոր ալ փորձանք մը կը պատահի. սակայն տեսնալով որ սովը հետզհետէ կը սաստկանայ, ստիպուեցաւ ղրկել։ Այս անգամ Յովսէփ սիրով ընդունեց իր եղբայրները և այլ եւս չկըրնալով համբերել, ինքզինքը ճանչցուց անոնց։ Յետոյ առատ նուէրներով և կառքերով ղրկեց զանոնք որպէսզի երթան և հայրերնին բերեն։

Յակոբ նախ չուզեց հաւատալ թէ Յովսէփ ողջ է եւ Եգիպտոսի կառավարիչն է. բայց երբ ղրկուած կառքերը տեսաւ, ուրախութեամբ համբայ ելաւ իրեններով։

Generated on 2016-07-19 07:42 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY

Յովսէփ մեծ ուրախութեամբ ընդունեց հայրը և զայն Փարաւոնին ներկայացուց, որ իրեն երկիր մը տուաւ ապրելու համար։

147 տարեկան էր երբ զգաց թէ պիտի մեռնի. իսկոյն իր քով կանչեց Յովսէփը, օրհնեց և բոլոր իր զաւակները և պատուիրեց որ մեռնելէ ետքը իր մարմինը իր երկիրը փոխադրեն և հօրը քով թաղեն։ Յովսէփ կատարեց հօրը պատուէրը և մեծ հանդէսով տարաւ թաղեց։

Երբ հայրերնին մեռաւ, Յովսէփի եղբայրները վախցան թէ զիրենք կը պատժէ, բայց Յովսէփ ըսաւ անոնց. «Մի վախնաք, թէեւ դուք ինծի չարութիւն ըրիք, բայց այդ չարիքը ամենուս ալ օգտակար եղաւ»։

Յակոբի մեռնելէն ետք, Յովսէփ 50 տարի ալ ապրելով 110 տարեկան մեռաւ։ Մեռնելէն առաջ պատուիրեց իր եղբայրներուն որ Եգիպտոսէն ելած ատեննին իր ոսկորներն ալ հետերնին տանին. անոնք ալ մարմինը զմռսելով պահեցին տապանի մը մէջ։

ՀԱՐՑՈՒՄ։ Յովսէփի եղբայրները ինչո՞ւ Եգիպտոս եկան։ Յովսէփ ինչո՞ւ վար դրաւ Շմաւոնը։ Ինչպէ՞ս ճանչցուեցաւ. Յակոբ ի՞նչ ըրաւ։ Ի՞նչ պատուիրեց Յովսէփի եւայլն։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 07:43 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԴԱՍ 36.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՑՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՎԱՀԱՆ

Ցազկերտ մեռնելով իրեն յաջորդեց իր որդին Պերոզ որ հայ նախարարները ութը տարի իր գործերուն ծառայեցուց. անոնց մէջ կար Վարդանին եղբօրորդին Վահան որ իր քաջութեամբ և խելացիութեամբը սիրելի եղած էր Պերոզի. միւս նախարարները նախանձելով ամբաստանեցին Վահանը և այն ալ Պերոզի աչքէն չիյնալու համար հաւատքը ուրացաւ:

Ժամանակ մը վերջ սակայն հայերը յորդորեց որ ապստամբին և Քրիստոնէութեան համար պատերազմին. հայերն ալ ընդունելով, Վահանը սպարապետ կարգեցին: Պերոզ երբ լսեց Վահանայ ապստամբութիւնը, անմիջապէս շատ մը զօրք ղրկեց, ապսպրելով որ ողջ բռնեն Վահանը: Վահան քաջութեամբ կռուելով յաղթեց և պարսիկները փախցուց և միշտ Աստուծոյ ապաւինելով իրեն դէմ ղրկուած՝ բոլոր պարսիկ մեծերուն կը յաղթէր:

Պերոզ մեռած և իր եղբայրը Վաղարշ թագաւորած էր: Վաղարշ տեսնալով որ Վահանը

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 07:43 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

յաղթել անկարելի է, մարդ ղրկեց և հաշտութիւն խնդրեց: Վահան ընդունեց պայման դնելով որ Հայաստանի մէջ Քրիստոնէութիւնը ազատ պաշտուի: Վաղարշ հաւանութիւն տուաւ և Վահան պալատ երթալով Վաղարշէն երդում առնելով Հայաստան դարձաւ և 26 տարի հայրենասիրութեամբ Հայաստանը կառավարելէ ետք մեռաւ:

ՀԱՐՑՈՒՄ: Ո՞վ էր Վահան. ինչո՞ւ հաւատքը ուրացաւ. ինչո՞ւ պարսից դէմ ապստամբեցաւ: Վահան ինչպէ՞ս հաշտութիւն կնքեց պարսից հետ:

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Հետեւեալ բառերուն հոմանիշները գրեցէք: Ընդունիլ, տէրութիւն, իմաստութիւն, ընդարձակել, զօրք, օժանդակել, տղայ, ետքը, պզտիկ, մեռնիլ, աւարտել, կարգուիլ, ստակ, հագուստ, անուշ, յիմար:

ԴԱՍ 37.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ՄԱՐԴԿԱՑԻՆ ՑԵՂԵՐ

Մարդիկ, որ կը բնակին երկրիս վրայ, ամէնքն ալ միևնոյն գոյնը ու կերպարանքը չունին. հապա կան սպիտակ, դեղին, պղնձագոյն, սեւ գոյնով մարդիկ:

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 07:43 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Մի կարծէք սակայն որ երկրիս վրայ գտնը-ւող մարդիկ միայն գոյնով կամ կերպարանքով կը տարբերին իրարմէ։ Անոնք բարքով, վարքով, կրթութիւնով, կրօնքով և լեզուով ալ կը զանազանին իրարմէ։

Այն ժողովուրդները որ քաղաքակրթութեան մէջ յառաջացած են և երկրի մը մէջ հաստատուն բնակութիւն ունին, կըսուին քաղաքակրթեալ ժողովուրդ։ Անոնք ունին իրենց համար կառավարութիւն, օրէնք, աստուածապաշտ են, ուսման և գիտութեան մէջ յառաջացած են արհեստով ու վաճառականութիւնով կը զբաղին։

Կան ժողովուրդներ ալ որ հաստատուն բնակութիւն չունին, վրաններու տակ կը բնակին, խաշնարած և որսորդ են. ասոնք ալ կը կոչուին թափառական կամ վաչկատուն։

Կան նաեւ վայրենիները որոնք խումբ խումբ կապրին, արհեստ և ուսմունք չեն գիտեր, կառավարութիւն, օրէնք և կրօնք չունին։ Ասոնց մէջ մարդակերներ ալ կան։

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Դասատուն։ Գրեցէք տետրակներնուդ մէջ թէ ի՞նչ ըսել է, ժամացոյց, բանալի, ինքնահոս գրիչ, ինքնաշարժ կառք (օթոմոպիլ), հաւնոց, պաղպաղակ, տոլար, քերականութիւն, հանրակառք (car)։

(Գրելէ վերջ, իւրաքանչիւրին կարդացնել և տառասխալները սրբագրել տալ)։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 07:44 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԴԱՍ 38.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ԿՐՕՆՔ

ՄՈՎՍԷՍ

Յովսէփի մեռնելէն 430 տարի ետքը, Եգիպտոսի վրայ իշխող Փարաւոն մը տեսնելով որ Իսրայէլացիք բազմացած են ու կրնան իրենց դէշութիւն ընել հրամայեց որ ծանր աշխատութիւններ տան անոնց որպէսզի տկարանան և չաճին։

ՄՈՎՍԷՍ ՋՈՒՐԷՆ ԿԸ ՀԱՆՈՒԻ

Generated on 2016-07-19 07:44 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY

Ասով ալ գոհ չըլլալով, Փարաւոն հրաման ըրաւ որ իսրայէլացիներուն բոլոր նոր ծնած արու տղաքը Նեղոս գետը ձգուին։

Կին մը միայն իր զաւակը պահեց երեք ամիս. յետոյ, վախնալով որ երեւան կելլէ, եղեգէ հիւսուած և կուպրով ծեփուած սակառի մը մէջ դնելով գետը ձգեց զայն։ Տղուն քոյրը գետին եզերքը կեցած կը դիտէր։

Փարաւոնին աղջիկը անկէ անցնելով տեսաւ սակառը և իր սպասուհիներուն հրամայեց ջրէն դուրս հանել. բացին ու տեսան գեղեցիկ մանուկ մը որ կը ճչէր. առաւ իր պալատը տանելու բայց ստնտու չկար։ Այն ատեն տղուն քոյրը մօտենալով ըսաւ թէ ինք կը ճանչնայ ստնտու կին մը ու գնաց կանչեց իր բուն մայրը։

Փարաւոնին աղջիկը տուն տարաւ տղան եւ մայրը, առանց գիտնալու թէ տղուն մայրն է և սկսաւ դիեցնել իր զաւակը։

Տղուն անունը դրին Մովսէս որ ջուրէն հանուած ըսել է։

Այսպէս Մովսէս սկսաւ մեծնալ պալատին մէջ և հետզհետէ ժամանակին գիտութիւնները սորվելով, իմաստուն մարդ մը եղաւ։

ՀԱՐՑՈՒՄ։ Փարաւոն ինչո՞ւ կը չարչարէր իսրայէլացիները։ Մովսէս ի՞նչպէս ջուրէն հանուեցաւ ու յետոյ ի՞նչ եղաւ։

Generated on 2016-07-19 07:44 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY

ԴԱՍ 39.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՑՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՑ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Վարդանանց պատերազմէն վերջ Հայաստան սկսաւ կառավարուիլ Մարզպան, Պատրիկ և Ոստիկան անունը կրող պաշտօնեաներով, մինչեւ որ հայերը միաբանելով Աշոտը իրենց վրայ թագաւոր դրին, որ ամեն կողմ հանդարտեցնելէն ու կարգադրելէն վերջը Պօլիս գնաց և վերադարձին Շիրակ հասնելով հիւանդացաւ և մեռաւ 54 տարի թագաւորելէն ետքը:

Աշոտին յաջորդեց իր որդին Սմբատ: Պարսից ոստիկանը նախանձելով Սմբատի մեծնալուն վրայ շատ մը զօրքով պատերազմի ելաւ բայց յաղթուեցաւ:

Սմբատ շատ քաջութիւններ ըրաւ և Հայաստանի վրայ յարձակող զանազան թշնամիներուն բոլորին ալ յաղթեց: Բոլոր այն նախարարները որ իրմէ կապստամբէին, կը յաղթէր և զանոնք բռնելով չարաչար կը պատժէր:

Սմբատին քեռորդին Գագիկ Արծրունի ևս ապստամբելով գնաց Պարսից ոստիկանին՝ Ցուսուփի միացաւ: Ցուսուփ լաւ գիտէր որ հայոց զօրութիւնը տկարացնելու համար անոնց մէջ

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 07:44 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

երկպառակութիւն ձգել պէտք էր, անոր համար Գագիկին շատ պատիւներ ընելով զայն թագաւոր դրաւ և յետոյ անոր հետ միացած պատերազմի ելաւ Սմբատի դէմ որ անօգնական մնալով փախաւ։

Սմբատ երբ իմացաւ որ իրեն Աշոտ և Մուշեղ անունով զաւակները յաղթուեր են, յուսահատելով կապոյտ անուն բերդը քաշուեցաւ։ Յեսուփ բերդը պաշարեց և Սմբատ տեսնալով որ ալ ուրիշ ճար չկայ, անձնատուր եղաւ երդում առնելով Յուսուփէն թէ իր կեանքին պիտի չդպչի։

Յուսուփ թէեւ ազատ թողուց բայց յետոյ շատ տանջանքներով նահատակեց Սմբատը որ 30 տարի թագաւորեց հայոց վրայ։

ՀԱՐՑՈՒՄ։ Ի՞նչպէս սկսաւ Բագրատունեաց թագաւորութիւնը. ի՞նչ գիտես Սմբատի վրայ։

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Խօզանակը որով կը մագրէնգ մէր սքեզտնէրը, ձիեու մազով չինված է։ Սանրը կը չինվի կէնթանինէրու եղջիւրով։ Նաեւ թանակի կոդէրը և հօւանօցի գլուղնէրը կը չինվին եղջիւրով։

(Տառասխալները սրբագրեցէք)։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 07:44 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԴԱՍ 40.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

Ղուկաս, որ ածխավաճառի մը որդին էր, օր մը ծառին տակ նստած կուլար։

Շքեղ հագուստներով պարոն մը անկէ կանցնէր։ Լսեց տղուն լալը, քովը եկաւ և հարցուց. «Տղա՛ս, ինչո՞ւ կուլաս»։

«Ա՜խ, պատասխանեց Ղուկաս, չատոնց է որ մայրս հիւանդ է։ Հայրս պզտիկ քսակի մը մէջ ստակ դրաւ և ինծի տուաւ որ քաղաք տանիմ եւ դեղագործին հաշիւը վճարեմ։ Բայց քիչ մը առաջ, նա առուին քովէն անցած ատենս, նայեցայ որ քսակը գրպանէս ինկեր, կորսուեր է»։

Պարոնը գրպանէն քսակ մը հանեց, մետաքսէ կարմիր քսակ մը, որուն մէջ լեցուն ոսկի կար։ Ղուկասին ցոյց տալով հարցուց. «Աս չէ՞ կորսնցուցած քսակդ։

— Չէ, պարոն, ատ իմ քսակս չէ, ըսաւ Ղուկաս։ Իմինս ատոր չափ աղուոր չէր, մէջն ալ ոսկի չկար մինակ 3 մէճիտ կար։

— Անանկ է նէ, աս է քու քսակդ, ըսաւ պարոնը, գրպանէն հանելով ուրիշ պզտիկ քսակ մը՝ որ Ղուկասինն էր և զոր գտած էր ճամբուն վրայ։

— Այո, պարոն, ա՛ս է, գոչեց Ղուկաս ուրախութեամբ։ Պարոնը զայն Ղուկասին տուաւ ըսելով.

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 07:45 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

— Տղա՛ս, քանի որ ճշմարիտ խօսեցար, քեզի կուտամ աս աղուոր քսակն ալ՝ մէջի ոսկիներով։ Ա՛ռ»։

Ուրիշ տղայ մալ, Սուրէն, լսելով Ղուկասին պատմութիւնը, գնաց նոյն ծառին տակ նստաւ, սկսաւ լալ ու ողբալ։

«Ա՜խ, քսակս, վա՜խ քսակս, կորսուեցա՜ւ քսակս»։

Նոյն պարոնը, որ հոնկէ կանցնէր, Սուրէնին մօտեցաւ, և անոր ցոյց տալով կապոյտ մետաքսէ քսակ մը, մէջը լեցուն ոսկի, հարցուց անոր.

— Ա՞ս է կորսնցուցած քսակդ։

— Այո՛, պատասխանեց Սուրէն, ա՛ս է։

Ու ձեռքը երկնցուց որ աղուոր քսակը առնէ, բայց պարոնը ըսաւ.

— Ստախօս քեզի, դիս խաբե՞լ կուզես։ Կեցիր անանկ է նէ, քեզի ուրիշ բան մը տամ։

Աս ըսելով պարոնը աղուոր տփոց մը քաշեց ստախօս Սուրէնին։

ՀԱՐՑՈՒՄ։ Ի՞նչ է ճշմարտասիրութիւնը։ Ղուկասի և Սուրէնի մէջ ի՞նչ տարբերութիւն կայ։

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Հետեւեալ խօսքերը ամբողջացնել յարմար բառեր դնելով և յետոյ սխալները ուղղել։

Թուղթը կը գործածեն ....
Հայրս կաշխատի ....
Ոսկիով կը շինեն .....
Գետին ջուրը երբ սառի ....
Ոչխարին բուրդը կը խուզեն և յետոյ .....
Մեր գլխաւոր սնունդներն են ....

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 07:45 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԴԱՍ 41.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ԿՐՕՆՔ

ԱՍՏՈՒԱԾ ՄՈՎՍԷՍԻ ԿԸ ԽՕՍԻ

Մովսէս թէեւ Փարաւոնի պալատին մէջ կր մեծնար, բայց չէր մոռնար իր ազգակիցները ա-նոնց տառապանքները տեսնելով։

Օր մը տեսաւ որ եգիպտացի մը իսրայէլացի մը սաստիկ կը ծեծէ, բարկացաւ և սպաննեց ե-գիպտացին։

Ուրիշ օր մըն ալ տեսաւ որ երկու եգիպտացի իրարու հետ կը կռուին, մօտեցաւ և ըսաւ թէ եր-կուքն ալ հայրենակից են ու պէտք չէ կռուին։ Ա-նոնցմէ մին պատասխանեց. «բարեկամ, քեզի մեր վրայ ո՞վ դատաւոր դրաւ. չէ թէ մեզի ալ սպաննել կուզես անցեալ օրուան եգիպտացիին պէս»։

Մովսէս այս խօսքը լսելով սաստիկ վախցաւ որ չըլլայ թէ Փարաւոն լսած ըլլայ ու զինքը պատժէ. ուստի պալատը ձգեց ու անապատ փա-խաւ։ Հոն հանդիպեցաւ հովիւներու և անոնց քով ծառայութեան մտնելով, անոնցմէ մէկուն աղ-ջիկանը հետ ամուսնացաւ։

Օր մը երբ Մովսէս Քորեբ լերան վրայ ոչ-խարները կարածէր, յանկարծ տեսաւ մորենի մը որ շարունակ կայրէր առանց հատնելու։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 07:45 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Հետաքրքրութեամբ սկսաւ մօտենալ հասկընալու համար թէ ինչ է եղածը։ Այդ միջոցին ձայն մը լսեց մորենիին մէջէն որ կըսէր. «Մովսէս, ես Աբրահամի, Իսահակի և Յակոբի Աստուածն եմ. այդ տեղը ուր կեցեր ես, սուրբ է, կօշիկներդ հանէ և այնպէս մօտեցիր և ինձ լսէ։ Իմ ժողովուրդիս քաշած տառապանքը տեսայ Եգիպտոսի մէջ. քեզի պիտի ղրկեմ որ զայն ազատես»։

Մովսէս ըսաւ թէ ինքը անկարող է այդ գործը կատարելու համար, բայց Աստուած յուսադրեց զինքը, յայտնելով թէ միշտ իրեն պիտի օգնէ և ըսաւ որ իր Ահարոն եղբայրն ալ հետը առնէ։

Ասոր վրայ Մովսէս հրաժեշտ առաւ ընտանիքէն և ճամբայ ելաւ։ Անապատին մէջ հանդիպեցաւ Ահարոնին և երկուքը մէկ գացին Եգիպտոս։

ՀԱՐՑՈՒՄ։ Մովսէս ինչո՞ւ փախաւ Եգիպտոս։ Անապատին մէջ ի՞նչ պատահեցաւ։ Քորեբ լերան վրայ ի՞նչ տեսաւ։ Աստուած ի՞նչ հրամայեց իրեն։

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Հետեւեալ բառերուն հոմանիշները գրեցէք։

Վերջ, ժամանակ, նորէն, յարգել, նեղութիւն, բաւական, համարեց, ցեղ, ազատել, ջահ, աղաղակել, վախ, խաղաղ, զաւակ, անուանեց, ապահով, ապաննել, պզտիկ, փրկուիլ, ջախջախել, մաս։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 07:45 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԴԱՍ 42.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ՈՐԴԻԱԿԱՆ ՍԻՐՈՅ ՕՐԻՆԱԿ

Հռովմայեցի կին մը յանցանքի մը համար կը դատապարտուի խեղդամահ ըլլալու։ Եռապետը կը ցաւի վրան և կը հրամայէ որ փոխանակ խեղդելու, թողուն որ բանտին մէջ անօթութենէ մեռնի։

Կինը աղջիկ մը ունէր Տարէնդիա անունով որ շատ մը աղաչելէ վերջ կրցաւ հրաման առնել ուզած ատենը երթալ մայրը տեսնալու այն պայմանաւ որ ամեն անգամ վրան խուզարկեն որպէսզի մօրը ուտելիք չտանի։

Շատ օր կանցնի, և կը տեսնեն որ մայրը անօթութենէ չտկարանար։ Եռապետը զարմացած՝ կսկսի անձամբ քննել պատճառը և գաղտնի պահուելով բանտին մէջ հիացումով կը տեսնէ որ աղջիկը Տարէնդիա ծիծ տալով կը կերակրէ իր մայրը։ Անմիջապէս իրողութիւնը կը պատմէ դատաւորներուն որոնք որդիական այս գեղեցիկ սիրոյն վրայ զմայլած մօրը կը ներեն։

Այսչափն ալ բաւական չհամարելով, գանձէն մօրն ու աղջկան մշտնջենաւոր թոշակ մը կը սահմանեն որպէսզի կարենան իրենց մնացեալ օրերը հանգիստ ապրիլ։

Կըսուի նաեւ թէ այդ բանտն ալ կործաններ և

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 07:45 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

տեղը տաճար կանգներ են, նուիրեալ որդիական սիրոյն։

Պատմել տալ այս պատմութիւնը։

Ի՞նչ կը նշանակեն. հռովմայեցի, խեղդամահ, եռապետ, խուզարկել, մշտնջենաւոր, տաճար, հիացում, դատաւոր բառերը։

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Շարադրութեան ձեւով

Նկարագրեցէք հետեւեալ առարկաները, ըսելով թէ 1. ի՞նչ է, 2. ի՞նչէ շինուած է և 3. ինչի՞ կը գործածուի։

Ասեղ, մատնոց, զմելին, դանակ, սղոց, ժամացոյց, ածելի։

ԴԱՍ 43.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ԿՐՕՆՔ

ԻՍՐԱՑԷԼԱՑԻՈՑ ԱԶԱՏՈՒԻԼԸ. ՏԱՄՆԱԲԱՆԵԱՑ ՊԱՏՈՒԻՐԱՆՔ. ՄՈՎՍԷՍԻ ՄԱՀԸ

Մովսէս և Ահարոն Փարաւոնին ներկայացան և Աստուծոյ անունով ըսին որ իսրայէլացիները արձակէ։ Փարաւոն մերժեց և Աստուած ծանր պատիժներ ղրկեց եգիպտացւոց վրայ, նոյնիսկ անոնց բոլոր անդրանիկ զաւակները մեռցուց որոնց մէջ էր նաեւ Փարաւոնին տղան.

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 07:45 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ասոր վրայ Փարաւոն վախնալով իսրայէլացի-
ները արձակեց և անոնք Մովսէսի առաջնորդու-
թեամբ Կարմիր ծովէն անցան։ Մովսէս Աստու-
ծոյ հրամանաւ գաւազանով ջուրերը երկուքի
բաժնեց և երբոր միւս եզերքը անցան նորէն ջու-
րերը միացան։ Փարաւոն որ զղջացած էր իսրա-
յէլացիները թողած ըլլալուն, ետեւնուն հասաւ
և իր բոլոր մարդոցմով ջուրերուն մէջ մնալով
խեղդուեցաւ։ Իսրայէլացիք տեսնելով փառք
տուին Աստուծոյ և շատ նեղութիւններով հա-
սան Սին անապատը։

Հոն Աստուած կանչեց Մովսէսը և երկու քա-
րէ տախտակներու վրայ գրուած հետեւեալ 10
պատուէրները տուաւ որպէսզի ժողովուրդը ա-
նոր համեմատ վարուի։

1.— Ինձմէ զատ ուրիշ Աստուած չը պաշտես։
2.— Կուռք չը շինես և անոր երկրպագութիւն
չընես։
3.— Իմ անունս պարապ տեղը բերանդ չառնես և
սուտ երդում չընես։
4.— Վեց օր աշխատէ և եօթներորդ օրը սուրբ
պահէ։
5—. Հայրդ և մայրդ յարգէ և պատուէ։
6.— Մարդ մի՛ սպաններ։
7.— Անբարոյականութիւն մի՛ ըներ։
8.— Գողութիւն մի՛ ըներ։
9.— Ընկերոջդ համար սուտ վկայութիւն մի՛
ըներ։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 07:46 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

10.— Ընկերոջդ ունեցածին աչք մի՛ տնկեր։

Իսրայէլացիք ամեն անգամ որ նեղութեան մէջ կը մնային, Աստուած կը մոռնային և կռկըսէին կուռքեր չինել և պաշտել. Աստուած ալ ամեն անգամուն զանազան պատիժներ կուտար անոնց։

Իսրայէլացիք 40 տարի անապատին մէջ թափառելէ վերջ հասան Աստուծոյ խոստացած Աւետեաց երկիրը. իսկ Մովսէս ծերացած ըլլալով չկրցաւ անոնց ընկերանալ և 120 տարեկան մեռաւ։ Իսրայէլացիք երեսուն օր սուգ պահեցին։

ՀԱՐՑՈՒՄ։ Իսրայէլացիք ինչպէ՞ս ազատեցան։ Որոնք են 10 պատուէրները։

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Շարադրութեան ձեւով՝

Բացատրեցէք թէ ի՞նչ տեսակ կենդանի է հաւը, կատուն, աքաղաղը, ծիեռնակը մուկը, կրիան, բուն, շունը, թութակը։

Իւրաքանչիւր աշակերտի գրածը կարդացնել և յետոյ տառասխալները սրբագրել տալ։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 07:46 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԴԱՍ 44.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՑՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱՇՈՏ Բ.

Ցուսուփ Հայաստանի ամեն կողմը արիւնլլուայ ընելէն ետքը, պահապաններ ձգելով Պարսկաստան դարձաւ: Սմբատին որդին Աշոտ Բ. որ Աշոտ Երկաթ ըսուեցաւ, հօրը մահուանլուրը առնելուն պէս անմիջապէս 600 հոգիի չափ մարդ ժողվեց և վազեց պահապաններուն վրայ և սաստիկ ջարդ մը տալով փախցուց: Նախարարները Աշոտի քաջութիւնները տեսնելով զինքը թագաւոր դրին:

Աշոտ Երկաթ օտար թշնամիներէ զատ հայեր ալ ունեցաւ իրեն թշնամի, որովհետև անկըրթութիւնը այն աստիճան տիրած էր հայոց մէջ որ ամենքն ալ ինքնիշխան թագաւորել կուզէին: Աշոտ թէեւ բոլոր թշնամիներուն յաղթեց բայց իր քովի տգէտ և փառամոլ պաշտօնեաներէն յուսահատելով Սեւան կղզին քաշուեցաւ:

Ցուսուփ իմանալով անմիջապէս մարդ ղրրկեց Հայաստան ու շատ չարիք հասցուց հայոց. յետոյ Սեւան կղզին ալ պաշարել տուաւ Աշոտը բռնելու համար բայց Աշոտ իր քով ունեցած 100 մարդերովը այն աստիճան կտրճութեամբ պատերազմեցաւ որ շատ մարդ սպաննեց և բոլորը

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 07:52 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

փախցունելով ինքն ալ նորէն Հայաստան եկաւ և թագաւորութիւնը ձեռք առաւ, ու 24 տարի թագաւորելէ ետք մեռաւ։

Աշոտին յաջորդեց իր եղբայրը Աբաս որ շատ քաջ ըլլալով բոլոր թշնամիներուն յաղթեց և Հայաստան քիչ մը հանդարտելով սկսաւ ծաղկիլ ու 24 տարի թագաւորելով մեռաւ։

Իրեն յաջորդեց իր որդին Աշոտ Գ. որ շատ աղքատասէր մէկը ըլլալուն համար «Աշոտ Ողորմած» կոչուեցաւ։ Իր օրով Հայաստան բաւական խաղաղ էր և շատ մը բարեկարգութիւններ ընելով 26 տարի թագաւորեց և մեռաւ խաղաղութեամբ։

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Ի՞նչ տարբերութիւն կայ հետևեալներուն մէջ։ Ամառուան և ձմեռուան մէջ։ Գիւղացիին և քաղաքացիին մէջ։ Տգէտին և ուսեալին մէջ։ Քրիստոնեային և հեթանոսին մէջ։ Երկաթին և ոսկիին մէջ։

ԴԱՍ 45.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ԵՐԿՈՒ ՃԱՄԲՈՐԴՆԵՐ

Թովմաս աղբար և Թորոս քաջ բարեկամ,
Օր մը մօտի քաղաքն երթալ սկըսան.
Թովմաս տեսաւ մէջտեղ ճամբուն,
Ոսկիի քսակ մը լեփլեցուն.
Վար ծռեցաւ առաւ զայն,

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 07:53 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Արտորնօք դրաւ իր գրպան։
Թորոս ըսաւ ուրախ սրտով,
«Բաղդերնիս լա՛ւ յաջողեցաւ։
—Չէ՛, կրկնեց Թումաս պաղուկ նայուածքով,
«Բաղդերնիս այստեղ չը յարմարեցաւ.
«Թէ կուզես, ըսէ՝ բաղդը բանեցաւ»։
Տրտմեցաւ սիրտը Թորոսին,
Պաղ խօսքերով բարեկամին,
Թէեւ լսեց իբր անտարբեր
Սակայն արիւնը զարկաւ վեր։
Յետոյ դաշտէն անտառ մտած ժամանակ
Վազեցին յանկարծ
Թումասի դիմաց

Արիւնկզակ երկու կտրիճ աւազակ։
Խեղճը վախէն լեղապատառ
«Կորանք, կանչեց, Թորո՛ս աղբար»։
Աղբար Թորոս անտարբեր՝
«Կորանի՞, ըսաւ մի զրուցեր,
«Այդ տեղ, կորայ կուգայ յարմար»։
Խոտորելով իր ճամբան՝
Գնաց մտաւ ծառաստան։
Թումաս մինակ ի՞նչ ընէր,
Սիրտը մեռնիլ չէր ուզեր.
Ուստի շուտով քսակն հանեց՝
Աւազակներուն ձեռքն յանձնեց։

Թէ որ յաջող ու լաւ օրիդ,
Բարեկամդ չը յիշես,
Քու բարեկամդ ալ նեղ օրիդ՝
Զը նայիր բնաւ քու երես։

ՎԱՐԺ. Այս ոտանաւորը արձակի ձեւով պատմել տալ և անոր բարոյական նշանակութիւնը բացատրել։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 07:59 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԴԱՍ 46.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ՍԱՄՓՍՈՆ ԵՒ ԴԱՒԻԹ

ԿՐՕՆՔ

Աստուած Իսրայէլացւոց վրայ դատաւոր կարգեց Սամփսոն անունով մէկը, որ չափազանց զօրաւոր էր։ Անգամ մը Սամփսոն ամուսնանալու համար ուրիշ քաղաք գացած ատեն, ճամբան առիւծի մը հանդիպելով, բռնեց և իր թեւերուն մէջ խեղդեց զայն և յետոյ կզակները իրարմէ բաժնեց. վերադարձին տեսաւ որ մեղուները առիւծին բերնին մէջ մեղր շիներ են, առաւ եւ հարսնեստուն տարաւ։

Սամփսոն տեսնելով որ փղշտացիները իր կինը ուրիշի մը հետ ամուսնացուցեր են, բարկանալով, 300 հատ աղուէս բռնեց, պոչերնուն իրարու կապեց և մէջտեղերը վառած ջահեր դնելով, թշնամիներուն արտերը արձակեց զանոնք և բոլոր ձիթենիի, ծառերը և հունձքերը այրեց։

Ուրիշ անգամ մը փղշտացւոց քաղաքը կը գտնուէր, երբ դուռը վրայէն գոցեցին որ չփախչի. բայց Սամփսոն գիշերը այդ ծանր դռները շալկեց և մօտակայ լեռ մը տարաւ ձգեց։

Փղշտացիք հասկնալով որ Սամփսոնի ուժը

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 07:59 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

իր երկար մազեր ունենալէն է, կինը կաշառելով մազերը կտրել տուին ու երբոր ուժը սպառեցաւ, բռնեցին և իրենց տաճարին սիւներուն կապեցին և աչքերը փորեցին։ Սամփսոնի մազերը սկսած էին աճիլ, ուստի իր բոլոր ուժը հաւաքելով, սիւները այնպէս ուժով սարսեց որ ամբողջ տաճարը փլաւ և մէջը գտնուող բոլոր փղշտացիներուն հետ ինքն ալ մեռաւ։

Փղշտացիք իսրայէլացիներէն պահանջեցին որ իրենց ամենէն կտրիճը գայ և կռուի իրենց պետին Գողիաթին հետ, որ շատ հսկայ մարդ մըն էր։

Դաւիթ անուն երիտասարդ մը Աստուծոյ ապաւինելով, իր պարսատիկը շարժեց եւ մէջի քարը հսկային ճակտին զարնելով, գետին փռեց զայն և մօտենալով գլուխը կտրեց սուրով։

Դաւիթ լաւ քնար կը զարնէր և սաղմոսներ յօրինելով Աստուծոյ կաղօթէր։ Ինք անառակ կեանք մը ունենալուն Աստուած կարգ մը պատիժներ տուաւ անոր, բայց Դաւիթ զղջալով ապաշխարեց և Աստուած ներեց անոր։

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Հետեւեալ հարցումներուն պատասխանեցէք գրաւոր։ Ի՞նչ տեսակ կենդանի է աղուէսը։ Ի՞նչ է ջահը։— Ի՞նչ տեսակ ծառ է ձիթենին։— Ի՞նչ ըսել է կաշառել։— Ի՞նչ է կուռքը։— Ի՞նչ է տաճարը։— Ի՞նչ է պարսատիկը։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 08:00 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԴԱՍ 47.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՑՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՍՄԲԱՏ Բ.-ԷՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՑ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՎԵՐՋԱՆԱԼԸ

Աշոտին յաջորդեց իր որդին Սմբատ Բ. որ իր հօրը պէս քաջութեամբ և իմաստութեամբ կառավարեց ազգը: Անոր յաջորդեցին հետզհետէ Գագիկ Ա. որ շատ օգտակար եղաւ երկրին: Յովհաննէս Սմբատ որ գործունեայ չըլլալուն շատ չարիքներ պատահեցաւ Հայաստանի մէջ: Յունաց կայսրը իրեն օգնելուն համար Անի քաղաքը խոստացաւ անոր տալ: Իր մահուանէն վերջ Յունաց Միքայէլ կայսրը բազմաթիւ զօրքով եկաւ պաշարեց Անին, բայց հայերը զանոնք ջարդելով ետ մղեցին և Գագիկ Բ.-ը թագաւոր դրին:

Յունաց կայսրը կեղծ բարեկամ եղաւ Գագիկի և հայ նախարարները իր կողմը շահեցաւ Անին գրաւելու համար: Գագիկ Բ. հաւատալով նախարարներու երդումին Պոլիս գնաց ուր մեծ պատուով ընդունուեցաւ կայսրէն և նախարարներն ալ Անիի բանալին կայսեր դրկեցին:

Կայսրը եկաւ ու Հայաստանի տիրեց ու ամեն տեսակ թշնամիներ Հայաստանի վրայ վա-

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 08:00 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ցելով մտքէ չանցած չարիքներ հասուցին հայոց գլխուն։

Գագիկ Ցունաստանի մէջ թէեւ ազատ կը պտտէր, բայց յոյները միշտ կը ծաղրէին զինքը, այնպէս որ օր մը Ցունաց եպիսկոպոս մը իր շունը Արմէն-Արմէն ըսելով կանչելուն վրայ Գագիկ բարկանալով իր ծառաներուն հրամայեց եւ անոնք ալ եպիսկոպոսը և շունը տոպրակի մը մէջ դնելով այնքան ծեծեցին որ շունը եպիսկոպոսը խածելնով երկուքն ալ մեռան։

Օր մը Գագիկ պարտէզի մը մէջ մինակը պտտած ատեն յոյները բռնելով չարաչար տանջանքներով մեռցուցին և այսպէս վերջացաւ Հայոց Բագրատունեաց թագաւորութիւնն ալ։

ՀԱՐՑՈՒՄ։ Ցոյները ինչո՞ւ պահանջեցին Անին։ Ո՞վ էր Գագիկ Բ. ինչպէ՞ս Անին առին Ցոյները. ինչպէ՞ս վերջացաւ Բագրատունեաց թագաւորութիւնը։

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Հետեւեալ բառերուն հոմանիշները գրեցէք։ Տաճար, ընծայել, պատուիրել, համաձայն, հարուստ, զոյգ, ատենները, մեռնիլ, խաղաղութեամբ, շրջակայից, մեռցընեն, այսպէսով, ապահով, փախի՛ր, իմաց տալ, որովհետև, մանուկը, կոչուեցաւ, նուիրել, փայլիլ։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 08:01 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԴԱՍ 48.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Հայր Յակոբոս ծեր ու տկար է. գիւղին մէկ անկիւնը կիսափուլ խրճիթի մը մէջ միայնակ կապրի։ Ցնցոտիներ հագած, պարկը ուսը նետած, կը շրջի դռնէ դուռ մուրալով։

Ստեփան անուն հարուստ ագարակապանի մը տունը կը հասնի. ներս կը մտնէ, կը բարեւէ և կսպասէ։ «Է՛հ, դո՞ւն ես, կըսէ ագարակապանին կինը, նեղսիրտ մէկու մը ձայնով»։ Եւ տիկինը կերթայ կուգայ զբաղած դէմքով, կարասիները չտկելով առանց ուշադրութիւն դարձնելու ծերունիին։ Հայր Յակոբոս դրան քովիկը կեցած, գլխարկը ձեռքը, ամօթահար՝ չը գիտեր թէ ի՛նչ ընէ, երթա՞յ թէ մնայ։

Վերջապէս տիկինը շերտ մը հաց կը կտրէ և «ա՛ռ սա հացը ու գնա՛ բանդ» կըսէ։ Խեղճ ծերուկը կը հասկնայ որ գինքը վռնտելու համար ողորմութիւն կուտան։ Շնորհակալութիւններ կը մրմնջէ և սիրտը կոտրած կը հեռանայ։ Երկու օր ուտելու կը բաւէ տրուած հացը։ Բայց այն հացը որ առանց անուշ խօսքի կը տրուի դառն է։

Հայր Յակոբ Մարկոսի տունը կուգայ, խեղճուկ տուն։ Հայրը գործաւոր է, տղաքը շատ

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 08:01 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

են. բայց այս դուռն է զոր խեղճ մուրացիկը ամենէն նախամեծար կը համարի:

«Բարի լոյս, հա՛յր Յակոբ, ըսաւ տանտիկինը, եկուր կրակին քով նստէ, այս առտու օդը զով է»: Ծերուկը կը տաքնայ ու կը հանգչի. տանտիկինը՝ աշխատելով մէկտեղ խօսքին կապը ձեռք կառնէ, ծերունին իր դժբախտութիւնը կը պատմէ և կը մխիթարուի ղգալով որ իր վըրայ կը գթան:

Ողորմութեանց լաւագոյնը գութն է:

Ծերունին ոտք կելլէ, մեկնելու կը պատրաստուի:

«Հայր Յակոբ, երէկ տղոց համար բաղարջ չինեցի, ահաւասիկ քու բաժինդ, քեզի համար պահած էի: Կեցիր թուղթը փաթթեմ», ըսաւ տիկինը:

«Շատ շնորհակալ եմ, տիկին, ցտեսութիւն» ըսաւ ծերունին:

«Ցտեսութիւն, հա՛յր Յակոբ» պատասխանեց տիկինը:

Ծերունին կը մեկնի խնդումերես: Բաղարջին կտորը խոշոր չէ, բայց իրեն կերեւայ որ պայուսակին մէջ անկէ լաւ բան չկայ: Նոյն իրիկունը զայն ուտելով պիտի մտածէ թէ կեանքը տաժանելի է բայց աշխարհի մէջ բարեսիրտ անձեր ալ կան:

ՀԱՐՑՈՒՄ: Ի՞նչ է բարեգործութիւնը: Ի՞նչ տարբերութիւն կը տեսնէք երկու կիներուն ողորմութիւն տալու ձեւին մէջ:

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 08:01 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Հետեւեալ խօսքերը ամբողջացուցէք։

Հարուստները պէտք է որ ....
Երկրագործը երկիրը հերկելէ վերջ .....
Հայրենասէր մարդ մը պէտք է որ .....
Կիրակի օրեր ամեն մարդ ....
Եթէ կուզէք առողջ ապրիլ .....
Դպրոցը օգտակար է որովհետեւ .....
Առանց տառասխալի գրելու համար ....

ԴԱՍ 49.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ԿՐՕՆՔ

ՍՈՂՈՄՈՆ ԻՄԱՍՏՈՒՆ ԵՒ ԴԱՆԻԷԼ

Սողոմոն իր հօրը պէս բարեպաշտութեամբ և արդարութեամբ սկսաւ կառավարել։ Աստուած երազին մէջ անոր երևցաւ և ըսաւ. «Խնդրէ՛ ինչ որ կուզես»։ Սողոմոն պատասխանեց. «Տէ՛ր, քու ծառայիդ խելք տուր որպէսզի կարենայ չարը բարիէն զանազանել»։

Օր մը մինչդեռ արդարութիւնը կը բաշխէր, երկու կիներ ներկայացան իրեն։ Անոնցմէ մէկը ըսաւ՝ իր ընկերուհին ցոյց տալով. «Այս կինը և ես մէկ տան մէջ կը բնակէինք. երկուքս ալ մէյ մէկ զաւակ ունեցանք։ Գիշերը անոր զաւակը կը մեռնի և ինք իր մեռած տղան իմ անկողնիս մէջ

Generated on 2016-07-19 08:01 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY

դնելով, իմ զաւակս կառնէ իր քով. առտուն մի-այն հասկցայ որ փոխեր է զաւակս»։ Միւս կինը սակայն սկսաւ պնդել թէ ողջ տղան իրօք իրն է։

Այն ատեն Սողոմոն ըսաւ. «Սուր մը բերէք, երկուքի բաժնեցէք տղան և մէյ մէկ կտոր տուէք այս կիներուն»։ Իսկոյն բուն մայրը ըսաւ. «Մի՛ սպաննէք զայդ տիկս, թող անոր ըլլայ, կը բաւէ որ ողջ մնայ»։ Մինչդեռ միւս կինը կուզէր որ տղան կիսեն։ «Տղան առաջին կնոջ տուէք, հրամայեց Սողոմոն, որովհետև ան է բուն մայրը»։ Այս իմաստուն դատաստանը ամենքը զմայլեցուց։

Ասորեստանի Նաբուգոդոնոսոր թագաւորը իր ոսկիէ արձանը չինել տալով հրամայեց որ ամեն մարդ զայն պաշտէ և չպաշտողները հնոցի մը մէջ նետուին։ Իսրայէլացիք որ անոր իշխանութեան տակ էին, ստիպուեցան այդ հրամանը կատարել։ Միայն անոնցմէ Դանիէլ և իր երեք ընկերները, Սեդրաք, Միսաք և Աբեթնագով, հակառակ այդ սպառնալիքին, ծունկի չեկան արձանին առջեւ։

Նաբուգոդոնոսոր իմանալով, հնոցը նետել տուաւ Դանիէլի երեք ընկերները, որոնք սակայն ողջ մնացին։ Այն ատեն Նաբուգոդոնոսոր համոզուեցաւ թէ անոնց պաշտած Աստուածը ճըշմարիտ և զօրաւոր է և մեծ պատիւներ ըրաւ անոնց։

Ուրիշ անգամ մը Նաբուգոդոնոսոր երազ մը տեսաւ և այնքան վախցաւ որ իսկոյն կանչեց բո-

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 08:02 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

լոր մոգերը ու հրամայեց որ երազը մեկնեն։ Մոգերը ուզեցին հասկնալ թէ ինչ էր տեսած երազը, բայց Նաբուգոդոնոսոր մոռցած էր, որով մոգերը չկրցան գոհացնել։

Դանիէլ սակայն, Աստուծոյ աղօթելով, գտաւ երազին ինչ ըլլալը և մեկնութիւնն ալ տըւաւ, գուշակելով որ Նաբուգոդոնոսորէ վերջ թագաւորութիւնը պիտի տկարանայ և ամենէն վերջը երկրի վրայ պիտի սկսի ուրիշ թագաւորութիւն մը, Քրիստոսի թագաւորութիւնը որ բնաւ չպիտի վերջանայ։

Թագաւորը այս մեկնութեան վրայ երեսի վրայ իյնալով երկրպագութիւն ըրաւ Դանիէլի և խոստովանեցաւ որ անոր պաշտած Աստուածն է ճշմարիտ Աստուածը։

ՀԱՐՑՈՒՄ։ Սողոմոն Աստուծմէ ի՞նչ խնդրեց և ինչո՞ւ։ Ի՞նչ նշանաւոր դատաստան տեսաւ։

Դանիէլի ընկերները ինչո՞ւ հնոց նետուեցան և ինչպէս ազատեցան։

Նաբուգոդոնոսոր ի՞նչ երազ տեսած էր և Դանիէլ ի՞նչ մեկնութիւն տուաւ։

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Հետևեալ հարցումներուն ղրաւոր պատասխանեցէք։ Ի՞նչ ըսել է թագաւոր։ Պատերազմի ատեն ի՞նչ տեսակ զէնքեր կը գործածեն։ Ի՞նչ ըսել է աղգադաւ։ Ի՞նչ է վանքը։ Ի՞նչ է բանտը։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 08:02 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԴԱՍ 50.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՑՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՌՈՒԲԻՆԵԱՆՑ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

Բագրատունեաց թագաւորութեան կործանումէն 34 տարի ետքը Ռուբէն անունով իշխան մը որ Գագիկի ազգականներէն էր և անոր հետ կը բնակէր Ցունաստանի մէջ, Կիլիկիոյ կողմերը երթալով, հոն բնակող հայոց սիրտը վաստկեցաւ, քանի մը հարիւր կտրիճ գլուխը ժողվեց իրեն օգնական ունենալով նաև գող Վասիլ կոչուած քաջ և հայրենասէր իշխանը, և սկսաւ իշխել հայոց վրայ։

Ռուբէն մէկ քանի քաղաքներու տիրեց, Ցունաց դէմ ալ քանի մը քաջութիւններ ընելէն ետքը մեռաւ 16 տարի իշխելէն վերջ։ Իրեն յաջորդեց իր որդին Կոստանդին Ա. որ իր քաջութեամբ տէրութիւնը մեծցուց և Երուսաղէմը Եգիպտացիներու ձեռքէն ազատելու գացող Եւրոպացիներուն ալ օգնելուն համար Հայոց իշխան կոչուեցաւ և 5 տարի իշխելէն վերջ մեռաւ։

Իրեն յաջորդեց Լեւոն Ա. որ քանի մը անառիկ բերդերու տիրելուն համար մինչև Ցունաց սիրտը վախ ձգեց բայց բռնուելով բանտարկուեցաւ։ Ուստի ազատելու համար քանի մը քա-

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 08:02 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ղաք և իր մէկ տղան պատանդ տալով ազատելէն յետոյ, Կիլիկիա եկաւ, մէկէն զօրք ժողվեց եւ տուած քաղաքներ ետ առնելէն զատ այնչափ նեղը դրաւ զինքը բանտարկող իշխանը, որ Լեւոնին պատանդներ տալով հազիւ ազատեցաւ։

ՀԱՐՑՈՒՄ։ Ո՞վ էր Ռուբէն. որո՞նք յաջորդեցին իրեն։ Ինչե՞ր ըրաւ Լեւոն Ա.։

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Շարադրութեան ձեւով

Ի՞նչ բանի օգտակար են հետեւեալ կենդանիները։ Ձին, ուղտը, շունը, կատուն, եզը, կովը, աղուէսը, արջը, կէտ ձուկը, ոչխարը և այծը։

ԴԱՍ 51.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ՏՂԱՔ ԻՆՉՊԷՍ ՕԳՆԵԼՈՒ ԵՆ ԻՐԵՆՑ ԾՆՈՂՔԻՆ

Պէտք է մեր կարողութեան չափով օգնենք մեր ծնողքին. երախտագիտութիւնը այդ պարտքը կը դնէ մեր վրայ։ Երբ պէտք ունին մեզի, փութանք անոնց քով երթալու և մեր օգնութիւնները սրտանց կատարենք որպէսզի աւելի ընդունելի ըլլայ։

Եթէ մեր ծնողքը հիւանդ են, պէտք է զանոնք խնամենք։ Պիտի յիշենք այն գիշերները որ մեր

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 08:22 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

անկողինին մօտ անցուցեր են անոնք՝ մեզ խնամելու համար։

Եթէ ծերութեան պատճառով չկրնան աշխատիլ, պարտաւոր ենք հոգալ անոնց պէտքերը։ Աւելի լաւ է որ մենք մեզ զրկենք, քան թէ ուզենք որ անոնք զրկուին իրենց պէտք եղած բաներէն։

Բայց միայն հիւանդ կամ ծեր եղած ատենին չէ որ պէտք է խնամենք և օգնութիւն հասցընենք անոնց։ Երբոր ուժերնիս ներէ, պարտաւոր ենք անոնց աշխատանքին մասնակցիլ։

Կա՞յ աւելի շնորհալի բան մը քան թէ տեսնել գործաւորի մը տղան որ իր հօրը հետ կաշխատի գործարանին մէջ, կամ տեսնել փոքրիկ գիւղացին որ կառաջնորդէ եզներուն, մինչդեռ իր հայրը կը հերկէ, սպասելով որ օր մըն ալ ինք կարենայ վարել արօրը։

Ի՞նչ զմայլելի է տեսնել աղջիկ մը որ իր մօր տնական աշխատութեանց մասնակցելով կաւլէ տունը, ճերմակեղէններն ու հագուստները կը կարկտէ, կերակուրին կօգնէ ևն.։

Այս քաղցր աշխատակցութիւնը երջանիկ և բարեյաջող կընծայեն ընտանիքը։

ՀԱՐՑՈՒՄ։ Ինչո՞ւ պէտք է օգնենք մեր ծնողքին եւ ի՞նչ կերպով։

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Հետեւեալ բառերուն հոմանիշները գրեցէք։ Բոլոր, ժամանակ, դարձեալ, զաւակ, կոչուիլ, աղուոր, որպէսզի, յանկարծ, զանազան, շատ, ուղի, մեռցնել, հուր, հաճիլ, ծախել, մէկէն իմէկ, տեսնալ, ճանչնալ, ատեն, միշտ, մերթ ընդ մերթ, եկեղեցական, թագաւոր, գէր, նիհար, տուն, խոյն, չափ, շատութիւն։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 08:23 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ԿՐՕՆՔ

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

ԳՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉԻ ԾՆՈՒՆԴԸ

Հերովդէս Թագաւորին օրով Հրէաստանի մէջ կապրէր Զաքարիա անունով արդար քահանայ մը, իր կնոջ Եղիսաբէթի հետ։ Երկուքն ալ ծեր էին և զաւակ չունէին։

Օր մը մինչդեռ Զաքարիա կաղօթէր, Աստուծոյ հրեշտակը իրեն երևցաւ և ըսաւ. «Դուն զաւակ մը պիտի ունենաս որուն անունը Գովհաննէս պիտի դնես. անիկա քեզի և ուրիշ շատերու համար ուրախութիւն պիտի ըլլայ և անհաւատները Աստուծոյ ճամբուն պիտի վերադարձնէ։

Զաքարիա չուզեց հաւատալ, որովհետև ինք և իր կինը ծեր էին։ Այն ատեն հրեշտակը ըսաւ. «Ես Գաբրիէլ հրեշտակապետն եմ, Աստուած զիս ղրկեց որ քեզի այս աւետիսը տամ, բայց դուն չը հաւատացիր, անոր համար դուն համր պիտի ըլլաս մինչեւ այն օրը որ ըսածս կատարուի»։ Իրաւ ալ Զաքարիա տաճարէն ելլեէն վերջ չկրցաւ խօսիլ։

Հրեշտակի խոստման համաձայն Եղիսաբէթ զաւակ մը ծնաւ. ազգականները լսելով ե-

Generated on 2016-07-19 08:24 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY

կան անոնց ուրախութեան մասնակցելու. և փափաք յայտնեցին որ տղան հօրը պէս Զաքարիա կոչուի։ Բայց Եղիսաբեթ հրեշտակին պատուէրը միտքը բերելով պնդեց թէ Յովհաննէս պիտի կոչէ։

Այն ատեն որոշեցին հօրը հարցնել և Զաքարիա ալ տախտակի մը վրայ գրեց թէ տղուն անունը Յովհաննէս պիտի դրուի։ Ասոր վրայ իսկոյն լեզուն բացուեցաւ։

Զաքարիա նորածին մանուկը բազուկներուն մէջ առնելով մարգարէացաւ և ըսաւ. «Ո՛վ պըզտիկ տղայ, դուն մարգարէ պիտի կոչուիս որովհետև Տիրոջ ճամբան պիտի պատրաստես»։

ՀԱՐՑՈՒՄ։ Ո՞վ էր Զաքարիա և ինչո՞ւ համար եղաւ։ Լեզուն ինչպէ՞ս և ե՞րբ բացուեցաւ։

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Հետևեալ բառերուն մէջի տառասխալները ուղղեցէք։ Ծուլլ, օքտակար, յիսուս, գիւղաձի, տէտրակ, հաւէր, կարթալ, երդալ, ամերիկա, միշդ անչուր, կաղնապուր, դաւիթ, գիրգ, կերթանգ, աղվէս, աղավնի, դաղաք, պօսթօն, գէրեզման, ըսկսիլ, դրաձի, աքարակ, զմելի, հավկիթ։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 08:24 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԴԱՍ 53.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԼԵՒՈՆ Ա. — ԹՈՐՈՍ

Յունաց կայսրը Լեւոնի այս աստիճան զօրանալը իմանալով, մեծ պատրաստութեամբ Լեւոնի վրայ պատերազմի ելաւ։ Լեւոն կայսեր զօրքերուն բազմութենէն վախնալով ընտանիքը առաւ և փախաւ. կայսրն ալ Կիլիկիան անտէր գտնալով, շատ քաղաքներու տիրեց և Լեւոնն ալ բռնելով Պոլիս գերի տարաւ։

Հոն տարի մը բանտարկելէն վերջ գթալով բանտէն հանեց և պալատին մէջ պահեց, բայց քանի մը տարի վերջ դարձեալ բանտ դրաւ անոր Թորոս որդւոյն հետ ուր Լեւոն սրտին ցաւէն մեռաւ 14 տարի իշխելէն և 4 տարի բանտը մնալէն ետքը։

Թորոս որ բանտէն ելած էր, փախչելով Կիլիկիա եկաւ և յայտնեց իր ով ըլլալը. իշխաններն ալ միաբանելով իրենց վրայ իշխան դրին որ մէկէն սկսաւ քաջութիւններ ընել, և շարունակ յաղթելով Յոյները վռնտեց Կիլիկիայէն։

Թորոս Իկոնիոյ Գըլըճ Ասլան Սուլթանին ալ յաղթեց որ Յունաց կայսրէն գրգռուած իր վրայ պատերազմի ելած էր։ Յետոյ երբ տեսաւ թէ Յունաց կայսրը դարձեալ մեծ պատրաստու-

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 08:27 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

թեամբ Կիլիկիոյ վրայ կուգար, հաշտուեցաւ հետը և 24 տարի իշխելէն վերջը մեռաւ։

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Շարադրութեան ձեւով

Ի՞նչ կընէ ատամնաբոյժը, պատկերահանը, սափրիչը, դերձակը, մշակը, սպասուհին, կօշկակարը։

ԴԱՍ 54.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ԵՂԲԱՑՐՍԻՐՈՒԹԻՒՆ

Ժամանակաւ Հնդկաստան մեկնող նաւ մը աղեկոծութեան հանդիպելով, խրեցաւ ցամաքի մը վրայ։

Նաւաբեկեալները խորտակուած նաւուն կտորներէն նաւակ մը շինեցին և անով սկսան շարունակել իրենց ճամբորդութիւնը։

Նաւավարը տեսնալով որ նաւակը շատ բեռնաւորուած է, յայտնեց թէ պիտի ընկղմին եթէ տասներկու հոգի ծովը չձգուին։ Վիճակ ձգեցին և որոշուեցաւ որ տասներկու անձեր ծովը ձըգուին։ Ասոնց մէջ կար երիտասարդ մը որ նաւակին մէջ ունէր փոքրիկ եղբայր մը։ Սա նաւավարին ոտքը ինկաւ և լալով աղաչեց որ զինքը ծովը նետեն եղբօրը տեղ։ «Եղբայրս ինձմէ աւելի քաջ

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 08:27 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

է, հայրս ու մայրս ա՛ն կը պահէ. եթէ ինք կորսըւի ծնողքս ալ թշուառութեամբ պիտի մեռնին. կաղաչեմ, փրկեցէ՛ք եղբօրս կեանքը որով փրկած կըլլաք ծնողքս. զիս նետեցէք անոր տեղը, կըսէր»:

Նաւավարը հնազանդեցաւ և կրտսերը նետել տուաւ ծով: Երիտասարդը իբր վեց ժամ լողալով հետեւեցաւ նաւուն և վերջապէս անոր հասաւ:

Զինքը սպաննել կսպառնային եթէ փորձէր նաւ մտնել: Ան կը մօտենայ: Կուզեն իրեն զարնել թուրով մը, թուրը կը բռնէ և թող չի տար մինչև որ կը յաջողի նաւուն մէջ մտնալ: Իր յարատեւութիւնը ամենուն սիրտը կը շարժէ եւ թոյլ կուտան որ նաւուն մէջ մտնէ: Այսպէսով, այդ եղբայրասէր տղան կը յաջողի փրկել իր կեանքն ալ, եղբօրը կեանքն ալ:

ՀԱՐՑՈՒՄ: Ի՞նչ է յարատեւութիւնը: Ի՞նչ է նշանակութիւնը սա բառերուն. ալեկոծութիւն, խրեցաւ, նաւաբեկեալ, վիճակ ձգել, կրտսեր, հետեւիլ, սպառնալ, սիրտ շարժել:

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Հետեւեալ բառերուն հոմանիշները գրեցէք: Բոլոր, երթալ, վերստին, բայց, արքայ, վասնզի, պարգև, աղերսագիր, տուն, վաճառել, ստակ, ուղի, խաղաղեցունել, պնդել, միջոց, փախչիլ:

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 08:27 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԴԱՍ 55.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ԿՐՕՆՔ

Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՑ ԱՒԵՏՈՒՄԸ

Այն ատենները Գալիլիայի Նազարէթ քաղաքին մէջ կը բնակէր Դաւիթի ցեղէն Մարիամ անուն կոյս մը որ Յովսէփ անունով նշանած մը ունէր։

Գաբրիէլ հրեշտակապետ Զաքարիայի ե-

ԱՒԵՏՈՒՄԸ

ռեւնալէն վեց ամիս վերջ Մարիամին երևցաւ և ըսաւ անոր. «Ուրախացիր Մարիամ, որովհետև Աստուած քեզի հետ է»։

Մարիամ չհասկցաւ թէ ի՞նչ կը նշանակէր այդ ողջոյնը և չվոխեցաւ։ Հրեշտակը ապահովեց զայն ըսելով. «Մի վախնա՛ր, Մարիամ, Ս. հոգին քու վրադ պիտի իջնէ և դուն զաւակ մը պիտի ունենաս որուն անունը Յիսուս (փրկիչ)

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 08:27 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

պիտի դնես. Անիկա Աստուծոյ Որդի պիտի կոչուի, պիտի տիրէ Դաւիթի աթոռին, և իր թագաւորութիւնը վերջ չպիտի ունենայ»:

Հրեշտակը Մարիամին յայտնեց նաև թէ իր ազգականը Եղիսաբեթ ալ զաւակ մը պիտի ունենայ: Ատոր վրայ Մարիամ հաւատաց և ըսաւ. «Ես Տիրոջը աղախինն եմ, թող քու ըսածիդ պէս ըլլայ»:

Երբոր հրեշտակը մեկնեցաւ, Մարիամ ելաւ Զաքարիայի տունը գնաց՝ Եղիսաբեթին այցելութիւն տալու: Եղիսաբեթ հասկցաւ թէ անիկա Աստուծոյ Որդիին մայր պիտի դառնայ, գոչեց. «Օրհնեա՛լ ես դուն կիներուն մէջ և օրհնեա՛լ է քու ունենալիք զաւակդ. դուն իմ Տիրոջս մայրըն ես, և ես երջանիկ եմ որ Աստուած քու այցելութիւնդ ընդունելու ուրախութիւնը տուաւ ինծի»:

Մարիամ Եղիսաբէթի քով երեք ամիս կեցաւ և յետոյ իր տունը դարձաւ:

ՀԱՐՑՈՒՄ: Ո՞վ էր Մարիամ և հրեշտակը ինչո՞ւ անոր երևցաւ: Մարիամ որո՞ւ գնաց այցելութեան: Եղիսաբեթ ի՞նչ ըսաւ Մարիամի:

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Ի՞նչ տեսակ տեղ է, անտառը, դաշտը, անապատը, ովասիսը: Բացատրեցէք գրաւոր:

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 08:28 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԴԱՍ 56.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԼԵՒՈՆ Բ. — ՀԵԹՈՒՄ

Ռուբինեանց թագաւորութեան առաջին թագաւորը եղաւ Լեւոն Բ. որ իր իմաստութեամբ և օտարներու դէմ տարած յաղթութիւններովը, տէրութիւնը ընդարձակեց և ծաղկեցուց և Երուսաղէմի վրայ գացող խաչակիր զօրքերուն օգնելով, անունը ամբողջ Եւրոպա տարածուեցաւ։ Վերջապէս Գերմանացւոց կայսրէն թագաւորական թագ և Պապէն ալ դրօշ մը ընդունելով, Գրիգոր Տղայ կոչուած Կաթողիկոսէն Սսոյ մէջ թագաւոր օծուեցաւ։

Լեւոն Բ. թագաւոր օծուելէն վերջն ալ քանի մը մեծ յաղթութիւններ ըրաւ և 34 տարի թագաւորելէ ետք մեռաւ։

Լեւոնի յաջորդեց իր աղջիկը Զապէլ զոր Փիլիպոս անուն Լատինացիի մը հետ ամուսնացուցին։ Փիլիպոս՝ միայն մօր կողմէ հայ ըլլալուն, երկու տարիէն Սսոյ հարստութիւնները սկսաւ Անտիոք կրել։ Հայ իշխանները բարկանալով բանտարկեցին զինքը ուր մեռաւ երկու տարի իշխելէն ետքը։

Փիլիպոսի յաջորդեց Հեթում Ա. որ Զապէլի հետ կարգուելով թագաւոր եղաւ։ Ան Հայաս-

Generated on 2016-07-19 08:28 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY

տանը զարդարեց և տեսնալով որ թաթարները շատ չարիք կը հասցնեն՝ ելաւ Թաթարիստան գնաց անոնց մեծին (Խանին). հոն սիրով ընդունուեցաւ և բարեկամութեան դաշինք դնելով Կիլիկիա դարձաւ։

Այդ միջոցին Եգիպտոսի Սուլթանը զօրանալով, պահանջեց որ Հեթում Եգիպտացիներէն առած քաղաքները ետ դարձնէ։ Հեթում յանձն չառաւ և իր երկու զաւակները Հայոց բանակին հրամանատար կարգելով պատերազմի ղրկեց բայց յաղթուեցան, որոնցմէ Թորոս սպաննուեցաւ և Լեւոն գերի բռնուեցաւ։

Հեթում շատ դրամով գնեց Լեւոնը և թագաւորութիւնը անոր յանձնելով ինք վանք քաշուեցաւ ուր մեռաւ 45 տարի թագաւորելէն ետք։

ՀԱՐՑՈՒՄ։ Ինչպէ՞ս թագաւոր եղաւ Լեւոն Բ.։ Փիլիպոս ի՞նչ ըրաւ։ Ի՞նչ գիտես Հեթումի մասին։

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Հետեւեալ բառերուն հակառակները գրեցէք։ Ծերունի, հասարակաց, նստած, չարժել, ձգել, մօտերը, դըժուարութիւն, ծռիլ, շուտ, ամեն անգամ, բնական, ազնիւ, սիրական, յարգել, պատուասիրել, հաճելի, իրաւունք ունիս։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 08:28 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԴԱՍ 57.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ՄԱՐՄԻՆԻՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԳԱՐՏՔԵՐ

Մարմինը հոգիին գործիքն է։ Որպէսզի հոգին լաւ պահուի, պէտք է որ մարմինը աղէկ վիճակ ունենայ, և ասոր համար շատ օգտակար են առողջապահութիւնը և մարմնամարզը։

Առողջապահութիւնը մաքրութեամբ և չափաւորութեամբ կըլլայ։ Մաքրութիւնն է կանոնաւորապէս և յաճախ լուալ մարմինը։ Անմաքրութիւնը թէ մեզի և թէ ուրիշներուն անհանգըստութիւն կը պատճառէ և շատ մը հիւանդութիւններ անկէ կը ծագին։ Աղտոտ մարմինը կը նմանի բերդի մը որուն պատերը ծակ են, ուրկէ թշնամին, այսինքն հիւանդութիւնը ուզածին պէս ներս կը մտնէ։ Աղտոտ մարդը զզուելի է եւ մէկը չուզեր անոր մօտենալ. ուստի պէտք է միշտ հոգ տանիլ մաքրութեան թէ մարմիններուն և թէ մեր զգեստներուն մասին։

Չափաւորութիւնը երկրորդ պայմանն է առողջապահութեան և մարդիկ պէտք է որ չափ մը դնեն միշտ իրենց ապրելակերպերուն մէջ։ Չափազանց ուտելը մարմինը կը ծանրացնէ և միտքը կը բթացնէ. իսկ ոգելից ըմպելիներու գործածութիւնը, մարմինը կը թունաւորէ, որով-

Generated on 2016-07-19 08:29 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY

հետև ալքոլը մեր թշնամին է: Ամեն բանի մէջ չափաւորութիւնը լաւ է նոյնիսկ քնանալու, խաղալու, աշխատելու և ամեն բանի մէջ պէտք է որ չափ մը դնէ և այնպէս վարուի:

Մարմնամարզը ուժ կուտայ մարմինին անդամներուն: Քալելը, վազելը, լողալը, զանազան խաղերը, գործիքներով մարմնամարզ ընելը ևն., օգտակար միջոցներ են զարգացնելու մեր մարմինը:

ՀԱՐՑՈՒՄ: Ի՞նչ է առողջապահութիւնը և ի՞նչ կերպով պէտք է հոգ տանիլ մեր մարմինին:

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Հետեւեալ հատուածին մէջի տառասխալները սրբագրեցէք:

Ծննթավայր կը կոչվի այն տէղը ուր ծընած և ապրած են մէր հայրէրը: Այդ տէղը կամ հողը մէզի յամար սիրէլի է: Հօն ապրող բոլոր ընտանիգները միևնույն ազքին կը պատկանին և կըսուին հայրէնակից, երկրակիճ, ցէղակից, ասգակից, քաղաքակից ևն.: Պէտք չէ որ մոռնանգ մէր հայրէնիքը և աշխատինգ զայն չենցնէլու:

ԴԱՍ 58.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ԿՐՕՆՔ

ՑԻՍՈՒՍԻ ԾՆՈՒՆԴԸ

Հռոմայեցւոց Օգոստոս կայսրը հրամայեց որ իր հպատակներուն մարդահամարը կատարուի և անոր համար ամեն մարդ իր ծնած քաղաքը երթայ անունը արձանագրել տալու:

Generated on 2016-07-19 08:29 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY

Յովսէփ և Մարիամ, Դաւիթի ցեղէն ըլլալով, ճամբայ ելան իրենց ծննդավայրը Բէթղէէմ երթալու։ Երբ հոն հասան, պանդոկները լեցուած էին. այս պատճառաւ ստիպուեցան գոմի մը մէջ անցընել գիշերը։

ՅԻՍՈՒՍԻ ԾՆՈՒՆԴԸ

Նոյն գիշերը ծնաւ Յիսուս, զոր Մարիամ խանձարուրով պատելով մսուրին մէջ դրաւ։

Բէթղէէմի հովիւները հովիւներ իրենց հօտերը կը պահպանէին այդ գիշերը, երբ յանկարծ փառաւոր լոյս մը ծագեցաւ երկինքէն։ Հովիւները սկսան վախնալ, բայց Աստուծոյ հր-

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 08:30 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ընչտակը իրենց երևնալով ըսաւ. «Մի վախնաք, որովհետև մեծ աւետիս մը պիտի տամ ձեզի. Դաւիթի քաղաքին մէջ այսօր ձեզի Փրկիչ մը ծնաւ»:

Յետոյ երևցան ուրիշ բազմաթիւ հրեշտակներ, որոնք «Փառք Աստուծոյ՝ երկինքի բարձրութեան մէջ, խաղաղութիւն երկրի վրայ եւ հաճութիւն մարդոց մէջ» երգը կերգէին:

Երբ հրեշտակները անհետացան, հովիւները ըսին իրարու. «Երթանք Բէթղէէմ, տեսնենք թէ ի՞նչ է եղածը»:

Եւ երբ հոն գացին, տեսան մսուրին մէջ պառկած մանուկը և երկրպագեցին անոր: Յետոյ իրենց տեղերը դարձան՝ Աստուծոյ փառք տալով:

ՀԱՐՑՈՒՄ: Մարիամ ինչո՞ւ Բէթղէէմ գնաց: Ի՞նչ է մարդահամարը: Ամենէն առաջ որո՞նց յայտնուեցաւ Յիսուսի ծնունդը և ի՞նչպէս:

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Հետեւեալ բառերուն հակառակները գրեցէք: Աւարտել, ծնած, լեցուն, գիշեր, լոյս, ծագիլ, վախնալ, տալ, բազմաթիւ, բարձր, խաղաղութիւն, անհետանալ, ուրախացիր, իջնել, տէր, վրայ, լալ, բացուիլ, անհաւատ, ծերանալ, կարճ, գիտուն, շնորհքով:

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 08:34 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԴԱՍ 59.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՑՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԼԵՒՈՆ Գ. — ՀԵԹՈՒՄ Բ.

Լեւոն Գ. բարեպաշտ և ուսումնասէր ըլլալուն սկսաւ դպրոցներ բանալ և գիտութիւնը յառաջացնել. բայց քիչ ատենէն բոլորն ալ ջնջուեցան, որովհետև ազգավնաս հայեր թշնամիները Լեւոնի դէմ գրգռեցին. անոնցմէ մէկը շատ մը զօրքով Կիլիկիա եկաւ. բայց երկրին դէշ վիճակը տեսնալով չկրցաւ համբերել և քիչ մը զօրք ժողվելով իր Սմբատ անուն ծեր զօրապետին հետ միացաւ եկաւ ու յաղթեց թշնամիներուն և զանոնք երկրէն վռնտելէ վերջ մեռաւ 19 տարի թագաւորելէն ետք:

Անոր յաջորդեց Հեթում Բ. որ կրօնասէր ըլլալուն վանք մը քաշուեցաւ և իր տեղը թագաւորեցուց Թորոս Գ.-ը. Թորոս ալ 3 տարիէն վանք քաշուելով ստիպեց Հեթումը որ դարձեալ ինք թագաւորէ, բայց իր միւս եղբայրը Սմբատ յափշտակեց թագաւորութիւնը և Թորոսը ըսպաննեց ու Հեթումին ալ աչքերը կուրցուց. սակայն միւս եղբայրնին Կոստանդին սաստիկ բարկանալով պատերազմի ելաւ Սմբատայ վրայ եւ յաղթելով բռնեց զայն և բանտարկեց եւ ինքն ալ անոր տեղ թագաւորեց. Հեթումն ալ բանտէն

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 08:34 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

հանելով քովը կը պահէր։ Սակայն երբ հրաշքով Հեթումի աչքերը բացուեցան, ժողովուրդն ուզեց որ նորէն Հեթում թագաւորէ. Կոստանդին լսելով ուզեց խռովութիւն հանել. ուստի Հեթում զինքը և Սմբատը Պոլիս ղրկեց։

Հեթում Բ. քանի մը անգամ Եգիպտացւոց և ուրիշներու յաղթելէ յետոյ, թագաւորութիւնը իր եղբօրորդւոյն Լեւոնի յանձնելով վանք քաշուեցաւ. բայց Լեւոն Դ. երկու տարի թագաւորելէ ետք սպաննուեցաւ։

ՀԱՐՑՈՒՄ։ Ի՞նչ գիտես Լեւոն Գ.-ի և Հեթում Բ.-ի վրայ։

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Շարադրութեան ձեւով

Ըսէք թէ ի՞նչ է, մայրաքաղաք, նահանգ, քաղաք, գիւղ, գետ, ծով, կղզի, լիճ, լեռ, հրաբուխ։

Գրելէ վերջ տառասխալները ուղղել տալ։

ԴԱՍ 60.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ՃԳՈՒՌՆ ԵՒ ՄՐՋԻՒՆ

Ճպուռը ճռճռալով
Էր զբաղած ամառն ի բուն,
Զմեռուան ցուրտը որ կոխեց
Իրաւի ձիւն եկաւ գլխուն։
Ուտելու բան մը չունէր,

Generated on 2016-07-19 08:40 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY

Ո՛չ ճըճի, ոչ ալ ճանճի տոտիկ։
Ելաւ գնաց իր դրացնին
Որ տանտիկին էր մրջիւնիկ։
«Մայրիկ, ըսաւ, հոգիդ սիրես,
Աս չարիս ճար մը ըրէ.
Քիչ մը բան փոխ տուր ինծի,
Հաշուեսեսորիդ մէջը գրէ.
Առածս քիչ ատենէն
Շահով հանդերձ կը դարձնեմ,
Գլխուս վրայ երդում կընեմ»։
Եկուր նայէ որ մեր մրջնիկ խաթուն
Ուրիշի բան փոխ տալ բնաւ չէր գիտեր.
— Ի՞նչ քար սիրտ կին է եղեր։—
Դարձաւ հարցուց ճպուռին.
«Քա, դուն ամառը ի՞նչ ըրիր։
—Ի՞նչ ընէի, հոգիս, այն տաք ատենին.
Զայնս ձգած խաղ կանչեցի։
— Խաղ կանչեցիր հա՛,
Ա՛տ ալ գէշ բան չէ.
Տէ գնա, ուրեմն, հիմայ ալ պարէ»։

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Գտէք հետևեալ բառերուն հոմանիշները։ Ցանցանք, հրահանգ, յօրինել, սրտմտիլ, հսկայ, ձայն, սուր, ակնարկ, յստակ, շուտ, ուժգին, ճերմակ, նուէր, վնասակար, օգտակար, հաւաքել, դեռ, նպատակ, աղաչել, բաշխել, ծառայ։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 08:40 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԴԱՍ 61.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ԿՐՕՆՔ

ՄՈԳԵՐԸ

Յիսուսի ծնած ատենը Արեւելքի կողմը բնակող մոգեր փայլուն աստղ մը տեսան և անոր հետեւելով եկան մինչև Երուսաղէմ, ուր աստղը աներեւութացաւ։ Մոգերը որոնք գուշակած էին թէ մեծ թագաւոր մը կը ծնի, կը հարցնէին թէ «Ո՞ւր է հրէաներու նորածին թագաւորը որուն երկրպագելու եկած ենք»։

Հերովդէս, ասիկա լսելով, շփոթեցաւ, կանչեց բոլոր քահանայապետները և անոնց հարցուց թէ ո՞ւր պիտի ծնէր Քրիստոս. անոնք ալ ըսին թէ մարգարէին գուշակութեան համեմատ, Բէթղէէմի մէջ պիտի ծնի։

Այն ատեն Հերովդէս իր մօտ բերել տուաւ մոգերը, անոնց յայտնեց թէ նորածին թագաւորը Բէթղէէմ կը գտնուի, ու պատուիրեց որ եթէ զայն գտնեն, վերադարձին գան իրեն իմաց տան, որպէսզի ինք ալ անոր երկրպագէ։

Երբ մոգերը ճամբայ ելան, փայլուն աստղը նորէն երևցաւ և զիրենք առաջնորդեց մինչեւ այն տեղը ուր ծնած էր Յիսուս։

Մոգերը շատ ուրախացան որ իրենց նպատակին հասան, ծնրադրեցին Յիսուսի առջեւ, և

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 08:40 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

անոր մատուցին առատ նուէրներ, ոսկի, կընդ-
ռուկ և զմուռս, զոր հետերնին բերած էին։

Ասդին Հերովդէս մեծ անհամբերութեամբ
անոնց վերադարձին կսպասէր։ Վախնալով որ
նորածին թագաւորը իր իշխանութեան վերջ
կուտայ, որոշած էր զայն սպաննել։ Մոգերէն
պիտի հասկնար թէ իրօք ո՞ւր կը գտնուի։

Բայց Աստուած երազի մէջ մոգերուն երև-
նալով պատուիրեց որ Հերովդէսի մօտ չդառնան
և անոր չիմացնեն Յիսուսի ուր գտնուիլը. մո-
գերն ալ ուրիշ ճամբով մը դարձան իրենց երկի-
ը առանց Հերովդէսի հանդիպելու։

ՀԱՐՑՈՒՄ։ Մոգերը ի՞նչ գուշակեցին։ Ինչո՞ւ վախ-
ցաւ Հերովդէս և ի՞նչ ընել կուզէր։ Աստուած ի՞նչպէս
արգիլեց անոր մտածած չարութիւնը։

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Հետևեալ բառերուն սահմանները տուէք։ Ի՞նչ է աջ-
սորավայրը — Ի՞նչ է մայրապետը։— Ի՞նչ ըսել է երկ-
պառակութեան որոմ ցանել։— Ի՞նչ ըսել է փառասէր եւ
փառասէր մարդ մը ի՞նչ կընէ։

ԴԱՍ 62.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՑՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՌՈՒԲԻՆԵԱՆՑ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

Լեւոն Դ.-ի յաջորդեց իր եղբայրը Օշին որ
մէկէն զօրք գումարելով յաղթեց Թշնամիներուն
որոնք մեծ բազմութեամբ Կիլիկիոյ վրայ եկած

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 08:40 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

էին։ Օշին 12 տարի մեծ քաջութեամբ և խելքով ազգը կառավարելէն ետք մեռաւ։

Օշինի յաջորդեց Լեւոն Ե.։ Իր ատենը, Եգիպտացիք, Թիւրքմէնք և Թաթարք սկսան Կիլիկիոյ վրայ յարձակիլ։ Ասոր պատճառը Լեւոնն էր որ Լատին իշխաններու հետ կը Թղթակցէր և այսպէսով Թագաւորութեան կործանելուն պատճառ եղաւ։

Լեւոն Ե. 24 տարի խեղճութեամբ Թագաւորելէն ետք մեռաւ։ Անոր յաջորդեց Յովհաննէս Պայլ անուն Լատին իշխան մը որ հայերը ատելուն համար սպաննուեցաւ։ Անոր յաջորդեց իր եղբայրը Գուիտոն որ հայոց եկեղեցիին մէջ Լատին ծեսեր մտցնել ուզելուն համար երկու տարի վերջ այն ալ սպաննեցին։ Անոր յաջորդեց Կոստանդին Դ. որ Թէև Լատին էր, բայց 18 տարի խելացութեամբ կառավարեց և Եգիպտացիներն ալ յաղթելէ վերջ մեռաւ։ Քիչ մը ատեն Կիլիկիա անտէր մնալէն վերջ, իշխանները միանալով Լեւոն Զ. Լուսինեանը Թագաւոր դրին, որուն միայն մայրը հայ էր։

Լեւոն Զ. իր խելացութեամբը լաւ պիտի կառավարէր ազգը, բայց աւա՜ղ որ ժամանակը չօգնեց ու Թշնամիները զօրացած սկսան յարձակիլ երկրին վրայ։ Եգիպտոսի Սուլթանը անհամար զօրքով Կիլիկիա եկաւ և Լեւոնը բռնելով գերի տարաւ Եգիպտոս։ Հոն 7 տարի բանտը մնալէն վերջ ազատեցաւ ու նախ Երուսաղէմ գը-

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

նաց և իր ընտանիքը հոն ձգելով Եւրոպայ գնաց և Փարիզի մէջ մեռաւ 1393 թուականին եւ հոն թաղուեցաւ։

Հայոց վերջին թագաւորին գերեզմանը մինչեւ այսօր կը մնայ Փարիզի մէջ։

ՀԱՐՑՈՒՄ։ Ի՞նչ պատճառաւ կործանեցաւ Ռուբինեանց թագաւորութիւնը։ Լեւոն Զ.-ի վրայ ի՞նչ գիտես։

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Հետեւեալ բառերուն հակառակները գրեցէք։ Ատելութիւն, ջերմութիւն, հանդարտ, յիմար, վազել, աչխատիլ, սուր, ուղիղ, շռայլ, նոր, կուշտ, քաղցր, աղտոտ, հեռանալ, ծախել, զօրանալ, լռել, հանդարտիլ, հաշտուիլ, կորսնցնել, ծառայ, հիւանդանալ։

ԴԱՍ 63.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ԳԱՑԼ ԵՒ ԳԱՌՆՈՒԿ

(Իրաւունքը զօրաւորինն է)

Անմեղ գառնուկ մը առուակի1 մը եզերքը կեցած՝ յստակ2 ջրով իր ծարաւը կը յագեցնէր3։ Ցանկարծ վրայ կը հասնի սովալլուկ4 գայլ մը որ որս կը փնտռէր, խեղճ գառնուկը տեսնելուն պէս, անօթի գայլը կը գոչէ. «Թշուառական, ի՞նչ յանդգնութիւն որ իմ խմելիք ջուրս կը պղտորես։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

— Տէր իմ, կը պատասխանէ գառնուկը մեղմ6 ձայնով, մի՝ բարկանաք. կաղաչեմ, չնորհ ըրէք նայեցէ՛ք. ծառանիդ ձեզմէ քսան քայլ վարէն կը խմէ. հետեւաբար կարելի չէ որ ձեր վեհափառութեան7 ըմպելիքը8 պղտորէ:

— Քեզ քաշէ լեզուդ, անպիտա՛ն, կը պղտորես ըսի, գոչեց անգութ գայլը: Սա ալ կայ որ դուն զիս բամբասեր9 ես անցեալ տարի:

— Կարելի՞ բան է այդ, յարեց10 գառնուկը, քանի որ անցեալ տարի ծնած չէի. դեռ կաթ կուտեմ:

— Եթէ դուն չէիր՝ եղբայրդ էր:

— Ներեցէք Տէ՛ր, եղբայր չունիմ:

— Ուրեմն քու ազգականներէդ մէկն էր, վասնզի դուք ամենքդ ալ՝ հովիւ, շուն, ոչխար՝ ինծի անհաշտ11 թշնամի էք և անխնայ12 կը շարախօսէք իմ վրաս. ես այսպէս համոզուած եմ և հիմայ առիթն է վրէժս լուծելու»:

Այսպէս վճռեց գայլը. ալ ուրիշ պատասխանի չսպասեց. խածաւ անմեղ գառնուկը, անտառը տարաւ և հոն լափեց13 զայն:

ՀԱՐՑՈՒՄ: Ի՞նչ բարոյական պէտք է հանել այս առակէն: Վրան թիւեր դրուած բառերը բացատրեցէք:

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Շարադրութեան ձեւով

Բացատրեցէք թէ ի՞նչ օգտակարութիւն ունին հետեւեալները.

Երկաթ, փղոսկր, կիր, յարդ, մեղու, ոչխար, ածուխ, չերամ, կատու, ալր, սառ, ձի, ուղտ, կաթ, խաղող, բուրդ:

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԴԱՍ 64.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ԿՐՕՆՔ

ՅԻՍՈՒՍԻ ԸՆԾԱՑՈՒՄԸ

Յովսէփ և Մարիամ, ծնելէն քառասուն օր ետքը Յիսուսը տարին Երուսաղէմի տաճարը, Աստուծոյ ընծայելու։ Այդպէս կը պատուիրէր Մովսէսի օրէնքը, որուն համաձայն, հարուստ-

ՅԻՍՈՒՍԻ ՓԱԽՈՒՍՏԸ

ները իբր ընծայ զոյգ մը գառնուկ կը տանէին նորածինին հետ, և աղքատներն ալ զոյգ մը տատրակ։ Յիսուսի ծնողքը աղքատ էին և զոյգ մը տատրակ տարին։

Այն ատենները Երուսաղէմի մէջ Սիմէօն ա-

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

նունով արդար և աստուածավախ ծերունի մը կար: Ս. հոգին անոր խոստացած էր որ Փրկիչը չտեսած չմեռնի: Երբ Յիսուս տաճարը կը գտնուէր, Սիմէոն եկաւ, մանուկը գիրկը առաւ և ըսաւ. «Տէր, հիմայ խաղաղութեամբ առ հոգիս, որովհետև աչուքներս տեսան Փրկիչը զոր պատրաստեցիր բոլոր ազգերուն համար»:

Այդ միջոցին Հերովդէս, հասկնալով թէ Մոգերը չպիտի դառնան իր քով, հրամայեց որ Բէթղէէմի և շրջականերուն մէջ գտնուող երկու տարեկանէն պզտիկ բոլոր տղաքը մեռցնեն. այսպէսով կը յուսար Յիսուսը ապահով կերպով սպաննել տալ:

Բայց Աստուծոյ հրեշտակը, երազի մէջ Յովսէփին երեւնալով ըսաւ. «Ելի՛ր, ա՛ռ տղան ու մայրը, փախի՛ր Եգիպտոս և հոն մնացիր մինչև որ ես քեզ իմաց տամ, որովհետև Հերովդէս մանուկը կը փնտռէ սպաննելու համար»: Յովսէփ ելաւ գիշերանց, առաւ Մարիամն ու Յիսուսը և փախաւ Եգիպտոս և հոն մնաց մինչև Հերովդէսի մահը, ուրկէ վերջ, հրեշտակին հրամանով, դարձաւ Իսրայէլացւոց երկիրը և հաստատուեցաւ Նազարէթ քաղաքը: Այնտեղ բնակելուն համար է որ Յիսուս Նազովրեցի կոչուեցաւ:

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Հետևեալ հատուածին մէջի տառասխալները ուղղեցէք:

Ամեն մարթ պետք է իր ազգին պատմութիւնը կարթայ ու քիտնա: մէր պատմութեան մէջ կը տէսնէնք որ թավաճան հայէր ալ քտնվէր են որ ազգին վրնաս հասուցած և անօր թշվառուդեան պատճառ եղած են: Ասիկա հայրէնասիրուդիւն չէ բնավ:

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 08:41 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ԴԱՍ 65.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԼԷՆԿԹԻՄՈՒՐ

Ռուբինեանց Թագաւորութեան կործանումէն վերջ, բոլոր Հայաստան պատերազմի դաշտ դարձաւ, որովհետև մէկ կողմէն պարսիկները և միւս կողմէն Եգիպտոսի Սուլթանը կուգէին Հայաստանի տիրել: Նոյն միջոցին արիւնկզակ թշնամի մը Լէնկթիմուր որ Թաթարներուն թագաւորն էր, անհամար զօրքով Հայաստան եկաւ և սկսաւ հասած տեղերը սոսկալի անգթութիւններ ընել. Կարս քաղաքը առնելով շատ մարդ ջարդեց, յետոյ առաւ Սեբաստիա քաղաքը, եւ որովհետև երդում ըրած էր սուրով մարդ չըսպաննել, ուստի նախ քաղաքին զօրքերը ողջ ողջ թաղել տուաւ, յետոյ տղաքը և ծերերը ձեռքերնին ու ոտքերնին կապած դաշտի մը մէջ ձգելով կատղած ձիերու կոխկռտել տուաւ և հիւանդ ու տկարներն ալ խեղդել տուաւ:

Այդ միջոցին Թուրքերու Թագաւորը Ֆաթիհ Սուլթան Մէհմէտ Պոլիսը Յունաց ձեռքէն տուաւ և Պոլսոյ զանազան կողմերը բնակեցուց և ծաղկեցնելու համար շատ երեւելի հայեր բերել տուաւ և Պոլսոյ զանազան կողմերը բնակեցուց և անոնց գլուխ կարգեց Պատրիկ (պատրիարք) մը 1461 թուականին:

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 08:42 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Սուլթան Մէհմէտ բոլոր Ցունաստանի տիրելէն վերջ կուզէր նաև տէր ըլլալ Հայաստանի. ուստի իրեն նախկին բարեկամներէն Պրուսա քաղաքի առաջնորդը Ցովակիմ եպիսկոպոսը Պօլիս կանչելով հայոց վրայ պատրիարք դրաւ եւ կարգ մը իշխանութիւններ տուաւ անոր, որպէսզի սիրտը շահի իր նպատակին հասնելու համար։

ՀԱՐՑՈՒՄ։ Ի՞նչ գիտես Լէնկթիմուրի վրայ։ Ի՞նչ եղաւ Հայաստանի վիճակը և ինչպէ՞ս սկսաւ հայերու բնակութիւնը Պօլսոյ մէջ։

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Շարադրութեան ձեւով

Հետեւեալ բառերուն սահմանը տուէք ըսելով թէ 1. ի՞նչ են, 2. ինչէ՞ շինուած են և 3. ի՞նչ բանի կը ծառայեն։

Սղոց, ուրագ, կացին, հրացան, թնդանօթ, մատիտ, ծխախոտ, աղամանդ, հովանոց, հայելի, ածելի, օճառ, խոզանակ։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 08:42 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Հետեւեալ մէկ քանի էջերուն մէջ համառօտ կերպով կը ներկայացնենք Յիսուսի կեանքի գլխաւոր մասերը մինչեւ Անոր Համբարձումը, թերի ձգած չըլլալու համար Նոր Ուխտի պատմութեան մասը։

ՅԻՍՈՒՍ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ

Յովսէփ և Մարիամ ամեն տարի Զատկուան տօնին Երուսաղէմ կերթային։ Երբ Յիսուս տասներկու տարեկան էր, նորէն գացած էին Զատիկը Երուսաղէմ անցնելու։ Վերադարձին Յիսուս Երուսաղէմ մնաց, մինչդեռ Յովսէփ եւ Մարիամ կը կարծէին թէ իրենց ճամբու ընկերներուն հետ կը գտնուի։

Օրուան մը ճամբայ երթալէ վերջ, յանկարծ տեսան որ Յիսուս չկայ, իսկոյն փնտռեցին ամեն կողմ, ու չը գտնելով՝ վերադարձան Երուսաղէմ։ Ամբողջ երեք օր զայն փնտռելէ ետք, վերջապէս գտան տաճարին մէջ, նստած վարդապետներուն հետ, որոնց հարցումներ կուղղէր։ Բոլոր լսողները կը հիանային իր իմաստութեան և տուած պատասխաններուն վրայ։

Յովսէփ և Մարիամ զարմացան զինքը այդտեղ տեսնելով. «Զաւակս, ի՞նչ ըրիր, ըսաւ Մարիամ, երեք օր է որ քեզ կը փնտռենք և շատ չարչարուեցանք քեզի համար»։ Այն ատեն Յիսուս պատասխանեց. «Ինչո՞ւ զիս կը փնտռէիք, չէ՞իք գիտեր թէ ես պէտք է հօրս տան մէջ ըլլամ»։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 08:42 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Մարիամ և Յովսէփ չհասկցան այս խօսքին իմաստը։ Յիսուս անոնց հետ վերադարձաւ Նազարէթ։ Միշտ կը հնազանդէր անոնց խօսքին, կը զարգանար իմաստութեամբ և հասակով եւ Աստուծոյ ու մարդոց առջեւ աւելի շնորհալի կը դառնար։

ՀԱՐՑՈՒՄ։ Յովսէփ և Մարիամ ինչպէ՞ս կորսնցուցին Յիսուսը և ո՞ւր գտան զայն։ Ի՞նչ կը նշանակէր Յիսուսի տուած պատասխանը։ Յիսուս ի՞նչ տեսակ յատկութիւններով նշանակելի կը դառնար։

ՅԻՍՈՒՍԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ

Զաքարիայի որդին Յովհաննէս, անապատին մէջ կապրէր, երբ Աստուած հրամայեց որ երթայ քարոզելու Յորդանանի կողմերը։ Յովհաննէս ուղտի բուրդէ հագուստ կը հագնէր, կաշիէ գօտի կը կապէր և մարախ և վայրի մեղր կուտէր։

Երբ Յորդանան եկաւ, սկսաւ քարոզել. «Ապաշխարեցէք, որովհետև երկնքի թագաւորութիւնը կը մօտենայ. ահա ինձմէ աւելի զօրաւոր մէկը կուգայ, որուն ոտքին կօշիկները անգամ քակելու արժանի չեմ ես. ես ձեզ ջուրով կը մկրտեմ, բայց Ան Ս. Հոգիով պիտի մկրտէ»։

Ու կը մկրտէր բոլոր ապաշխարողները։ Հրէաստանի ամեն կողմերէն մարդիկ կուգային իր մօտ. կը խոստովանէին իրենց մեղքերը եւ կը մկրտուէին Յորդանանի մէջ։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 08:42 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Յիսուս որ այն ատենները երեսուն տարեկան էր, նոյնպէս Նազարէթէն Յորդանան եկաւ Յովաննէսէն մկրտուելու համար: Յովհաննէս չուզեց մկրտել, ըսելով. «Ես պէտք է քեզմէ մկրտուիմ, դո՞ւն ինծի կուգաս»: Բայց Յիսուս պատասխանեց. «Թող որ մկրտուիմ հիմայ. պէտք է որ ընենք ինչ որ արդար է»: Յովհաննէս այլեւս դէմ չկեցաւ և մկրտեց Յիսուսը:

ՅԻՍՈՒՍԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ

Այդ միջոցին երկինքը բացուեցաւ և Յովհաննէս տեսաւ որ Ս. Հոգին աղաւնիի կերպարանքով կիջնէ Յիսուսի վրայ:

Միևնոյն ժամանակ երկինքէն ձայն մը լսուեցաւ որ կըսէր. «Այդ է իմ սիրելի որդիս որուն հաւնած եմ»:

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 08:42 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ՅԻՍՈՒՍԻ ԱՌԱՔԵԱԼՆԵՐԸ

Մկրտուելէն վերջ Յիսուս Գալիլիա գնաց։ Օր մը երբ ծովեզերքը կը պտտէր, երկու նաւակներ տեսաւ և խումբ մը ձկնորսներ որոնք իրենց ուռկանները կը լուային։

Ձկնորսները կը տրտնջային թէ ամբողջ գիշերը աշխատեցան և չկրցան բան մը որսալ։ Այն ատեն Յիսուս մտաւ նաւակներէն մէկուն մէջ, որուն տէրը Սիմոնն էր և հրամայեց որ նորէն ուռկան նետեն։ Այս անգամ ձուկերը այնքան առատ լեցուեցան ուռկաններու նմէջ որ Սիմէօն նաւակին ձկնորսները ստիպուեցան միւս նաւակին մարդիկը օգնութեան կանչել ուռկանը քաշելու համար, ու երկու նաւակներն ալ ընկղմելու աստիճան լեցուեցան։

Սիմօն և իր ընկերները զարմացան այդ արդիւնքը տեսնելով, և հասկցան որ սուրբ մարդ մըն էր Յիսուս։ Երբոր ցամաք ելան, Յիսուս ըսաւ անոնց. «Ինծի հետեւեցէք և ես մարդու որսորդ պիտի ընեմ ձեզ»։ Ձկնորսները թողուցին իրենց ուռկանները և Յիսուսի հետեւեցան։

Գալիլիոյ մէջ, ժողովուրդը միշտ կուգար կը հաւաքուէր Յիսուսի շուրջը, անոր քարոզութիւնները մտիկ ընելու համար. շատեր կուզէին բնաւ չը բաժնուիլ իրմէ։ Յիսուս տասներկու հոգի ընտրեց որոնք իր առաքեալները եղան։ Առանք էին, Սիմօն որ Պետրոս կը կոչուէր, իր եղբայրը Անդրէաս, Յակոբոս և եղբայրը Յովհան-

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 08:43 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

նէս, Փիլիպպոս, Բարթողիմէոս, Թովմաս, Մատթէոս, Յակոբոս, Սիմոն Կանանացի, Թադէոս և Յուդա Իսկարիովտացի:

Յիսուս կը քարոզէր թէ արքայութիւն մըտնելու համար պէտք է մկրտուիլ, թէ ինք մարդիկը փրկելու համար աշխարհ եկած է և թէ պէտք է հաւատալ իր աստուածութեան:

Ամեն կողմէ հիւանդներ կը բերէին Յիսուսի, որ անմիջապէս կը բժշկէր: Կը բաւէր որ իրեն հաւատան, և բժշկութիւնը կը կատարուէր:

ՀԱՐՑՈՒՄ: Ծովեզերքը ի՞նչ պատահեցաւ: Ի՞նչ ըսել է թէ մարդու որսորդ պիտի ընէ զիրենք: Որո՞նք էին ընտրուած առաքեալները: Ի՞նչ կը քարոզէր Յիսուս:

ՅԻՍՈՒՍԻ ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Յիսուս միշտ կը շրջէր ժողովուրդին մէջ և կը քարոզէր անոնց երկնքի արքայութեան վրայ: Ամեն կողմերէ խուռն բազմութեամբ կուգային իրեն խօսքերը մտիկ ընելու: Ամեն անգամ Յիսուս իր քարոզութիւնները առակներով կը բացատրէր որպէսզի ժողովուրդը լաւ հասկնայ:

Այդ երկրին մէջ սով ծագեցաւ և ինքն ալ սուս: Մարդ մը երկու զաւակ ունէր. օր մը պզտիկը ըսաւ հօրը. «Հայր, քու հարստութենէդ ինծի ինկած բաժինը տուր»: Հայրը իր ունեցածը տղոցը բաժնեց: Պզտիկ տղան իր բաժինը առնելով հեռու երկիր գնաց և հոն անառակութեամբ ապրելով ունեցածը վատնեց:

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 08:43 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Այդ երկրի նմէջ սով ծագեցաւ և ինքն ալ անօթի մնալով, գնաց ագարակի մը մէջ խոզեր արածելու։ Այնքան խեղճ էր որ խոզերուն կերած եղջիւրները ուտել կուզէր, բայց չէին տար իրեն։

Այն ատեն մտածեց թէ իր հօրը տունը շատ մը ծառաներ կան որ հանգիստ կապրին ու հաց կուտեն, մինչդեռ ինք այնտեղ անօթի մեռնելու վրայ է. ուստի որոշեց երթալ հօրը ոտքը իյնալ և խնդրել որ զինքը գոնէ իբր ծառայ ընդունի։ Այնպէս ալ ըրաւ։

Երբ հայրը իր զաւակը տեսաւ, վազեց գըրկեց զայն և համբուրեց։ Տղան ըսաւ. «Հա՛յր, մեղք գործեցի, ասկէ վերջը արժանի չեմ քու զաւակդ կոչուելու»։ Բայց հայրը իսկոյն հրամայեց ծառաներուն որ անոր հին հագուստները հանեն և նորեր հագցունեն, մատանի դնեն մատը և եզ մը մորթեն ուրախանալու համար։

Մեծ եղբայրը, արտէն տուն դառնալուն տեսաւ և հասկցաւ եղածը, ու բարկանալով ըսաւ. «Հայր, այսչափ տարի է քեզի կը ծառայեմ եւ քու պատուէրներդ կը յարգեմ, ինծի ուլ մը անգամ չզոհեցիր. մինչդեռ պզտիկ եղբօրս համար ամենէն լաւ եզը մորթեցիր»։ Հայրը պատասխանեց. «Զաւակս, դուն ամեն ատեն քովս ես և ունեցածս քուկդ է. բայց պէտք է ուրախանայ պըզտիկ եղբօրդ համար, որովհետև անիկա մեռած էր՝ կենդանացաւ, կորսուած էր՝ գտնուեցաւ»։

(Բացատրել այս առակին նշանակութիւնը)։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 08:43 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Օր մը Առաքեալները ըսին Յիսուսի որ իրենց աղօթել սորվեցնէ։ Յիսուս ըսաւ. «Երբ աղօթքի կենաք, շատ բան մի խնդրէք Աստուծմէ, այլ միայն երկնքի Արքայութիւնը ուզեցէք և ձեզի պէտք եղած բոլոր բաները ձեր հայրը կը պարգեւէ ձեզի»։

Ու հետեւեալ աղօթքը սորվեցուց.

Հայր մեր որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո, եկեսցէ արքայութիւն քո, եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի. զհաց մեր հանապազորդ՝ տուր մեզ այսօր. և թող մեզ զպարտիս մեր՝ որպէս և մենք թողումք մերոց պարտապանաց և մի տանիր զմեզ ի փորձութիւն այլ փրկեա ի չարէ զի քո է արքայութիւն և զօրութիւն եւ փառք յաւիտեանս. ամեն։

ՅԻՍՈՒՍԻ ՀՐԱՇՔՆԵՐԸ

ՀԱՑԸ ԿԸ ՇԱՏՑՆԷ

Ժողովուրդը վարժուած էր Յիսուսի և ուր որ երթար, անկէ չէր բաժնուեր։ Օր մը երբ քարոզը լմնցաւ, աշակերտները տեսնելով որ իրիկուն եղած է, ըսին իրեն. «Տէ՛ր, արձակէ ժողովուրդը որ երթայմօտակայ գիւղերը և կերակուր գտնէ, որովհետև այս անապատին մէջ ուտելիք չի կայ։ Յիսուս ըսաւ. «Դուք կերակրեցէք զանոնք»։

Աշակերտները պատասխանեցին թէ միայն հինգ հաց և երկու ձուկ ունին։ Ատոր վրայ Յի-

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 08:48 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

սուս պատուիրեց աշակերտներուն որ, ժողովուրդը, յիսունական հոգի կարգ կարգ նստեցունեն։ Յետոյ հինգ հացերը և երկու ձուկերը առնելով, աղօթեց, կտրեց և աշակերտներուն տուաւ որ բաժնեն։ Աշակերտները բաժնեցին և վերջը չեկաւ։ Հինգ հազար ժողովուրդ կար այնտեղ ամենքն ալ կերան կշտացան։

Ժողովուրդը երբ այս հրաշքը տեսաւ, սկըսաւ աղաղակել թէ «Այս է ճշմարիտ մարգարէն»։

Յիսուս առաքեալները նաւը դրաւ և ինք ալ հեռանալով լեռան մը վրայ ելաւ աղօթելու։

Առաքեալները ծովուն վրայ փոթորիկի բռնուեցան և սկսան ողբալ, վախնալով որ պիտի խեղդուին։ Յիսուս իսկոյն ծովուն վրայէն քալելով, անոնց մօտեցաւ։ Առաքեալները կարծեցին թէ տեսիլք մըն է ասիկա, բայց Յիսուս ճանչցուց ինքզինքը։ Այն ատեն Պետրոս ըսաւ իրեն. «Եթէ իրօք դուն ես, հրաման ըրէ որ ջուրերուն վրայէն քալելով քեզի գամ»։ Յիսուսի հրամանին վրայ Պետրոս ջուրը մտաւ, սակայն հովը սաստիկ ըլլալուն վախցաւ և սկսաւ աղաչել Յիսուսի որ ազատէ զինքը։ Յիսուս բռնեց անոր թեւէն ու նաւը տարաւ, ուր աշակերտները երկրպագեցին իրեն, ըսելով որ իրօք Աստուծոյ Որդին է։

ՂԱԶԱՐՈՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Մարթա և Մարիամ անուն երկու քոյրեր կային որոնք Ղազարոս անունով եղբայր մը ունէին զոր Յիսուս շատ կը սիրէր։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 08:49 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Օր մը Ղազարոս հիւանդացաւ և քոյրերը Յիսուսի լուր ղրկեցին որ գայ և բժշկէ։ Բայց երբ Յիսուս եկաւ, Ղազարոս մեռած և չերս օրէ ի վեր գերեզման դրուած էր արդէն։

Մարթա ըսաւ Յիսուսի. «Տէ՛ր, եթէ դուն այստեղ ըլլայիր, եղբայրս չէր մեռներ, բայց ես գիտեմ թէ հիմայ ինչ որ Աստուծմէ խնդրես, կուտայ քեզի»։

Յիսուս ըսաւ անոր որ եղբայրը Յարութիւն պիտի առնէ։ Յետոյ Ղազարոսի գերեզմանին քով երթալով, վերցնել տուաւ գերեզմանաքարը ու բարձր ձայնով կոչեց. «Ղազարո՛ս, դուրս եկուր»։

Մեռեալը, իրօք ողջնցաւ։ Յիսուս հրամայեց որ կապերը քակեն, և երբ քակեցին, Ղազարոս ոտքի ելաւ ողջ առողջ։

Շատ հրէաներ որոնք Յիսուսի չէին հաւատար, այս հրաշքը տեսնելով ծունկի եկան անոր առջեւ և սկսան հաւատալ թէ իրօք Աստուծոյ Որդի է։ Իսկ շատեր ալ գացին փարիսեցիներուն և քահանայապետներուն պատմեցին եղածը. անոնք ալ սկսան բարկանալ և միտքերնին դրին որ անպատճառ սպաննեն Յիսուսը։

ՅԻՍՈՒՍԻ ՄՈՒՏՔԸ ԵՐՈՒՍԱՂԷՄ

(ԾԱՂԿԱԶԱՐԴ)

Յիսուս Երիքովէն Երուսաղէմ անցաւ։ Երբ Զիթենեաց լերան մօտեցաւ, իշու մը վրայ հեծաւ և անանկ մտաւ Երուսաղէմ։ Ժողովուրդէն

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 08:49 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

չատեր՝ իրենց հագուստները գետինը կը փռէին, որպէսզի Յիսուս անոնց վրայէն անցնի. ուրիշ-



ՅԻՍՈՒՍԻ ՄՈՒՏՔԸ ԵՐՈՒՍԱՂԷՄ

ներ՝ ձիթենիի և արմաւենիի ոստեր կը կտրէին ու կը սփռէին անոր անցած ճամբուն վրայ։ Իսկ աշակերտները Աստուած կը փառաբանէին ըսե-

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 08:49 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

լով. «Փա՛ռք Դաւիթի զաւկին, օրհնեա՛լ ըլլայ Աստուծոյ անունով եկող թագաւորը. խաղաղութիւն երկինքը և փա՛ռք բարձունքներուն մէջ»:

Բազմութեան մէջէն քանի մը փարիսեցիներ եկան ըսին Յիսուսի. «Վարդապե՛տ, յանդիմանէ աշակերտներդ որ լռեն»: Որովհետև չէին ուզեր Աստուծոյ որդի ճանչնալ Յիսուսը:

Յիսուս անոնց պատասխանեց «եթէ անոնք լռեն, քարերը պիտի աղաղակեն»:

Յիսուս երբ Տաճարը մտաւ, տեսաւ որ շատ մը առևտուր ընողներ հաւաքուած են հոն. իսկոյն խարազան մը առաւ և բոլորն ալ դուրս վռնտեց ըսելով. «Իմ տունս աղօթքի տուն պիտի ըլլայ և դուք աւազակներու որջ դարձուցեր էք»:

ԽՈՆԱՐՀՈՒԹԵԱՆ ԴԱՍԸ

(ՈՏՆԱԼՈՒԱՑ)

Զատկի օրը հասած ըլլալով, Յիսուսի աշակերտները հարցուցին թէ ո՞ւր պիտի ընէ զատկուան ճաշը: Յիսուս քաղաքին մէջ տուն մը ցոյց տուաւ և պատուիրեց որ երթան իմաց տան:

Իրիկունը Յիսուս իր տասներկու առաքեալներուն հետ այնտեղ գնաց և սեղան նստաւ: Բայց ընթրիքի միջոցին ոտքի ելաւ, ղենջակ մը առնելով մէջքին կապեց և կոնքին մէջ ջուր դնելով սկսաւ լուալ իր աշակերտներուն ոտքերը:

Պետրոս չուզեց հնազանդիլ ըսելով. «Տէ՛ր, դո՞ւն պիտի լուաս իմ ոտքերս»:

Սակայն Յիսուս պնդեց և բոլոր առաքեալներուն ոտքերը լուալէ վերջ ըսաւ անոնց. «Ես

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 08:49 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ձեր վարդապետը ու տէրը ըլլալով ձեր ոտքերը լուացի, պէտք է որ դուք ալ իրարու ոտքերը լուաք. դուք ալ ինծի պէս ընէք ձեզմէ խոնարհներուն։ Այն որ կուզէ մեծ ըլլալ, պէտք է որ ամենէն պզտիկին պէս ըլլայ»։

Մէջերնուն Յուդա անունով առաքեալը շատ արծաթասէր էր։ Փարիսեցիները տեսնալով որ ժողովուրդը Յիսուսը կը սիրէ և անոր խօսքերուն կը հետեւի, սկսան նախանձիլ և զայն ըսպաննելու համար Յուդայի 30 չափ արծաթ դրրամ խոստացան որ Յիսուսը իրենց մատնէ։ Յուդա ալ խոստացաւ և յարմար ատենի մը կըսպասէր Յիսուսը մատնելու։

ԸՆԹՐԻՔԸ ԵՒ ՄԱՏՆՈՒԹԻՒՆԸ

Ոտնալուայէն վերջ ընթրիքը շարունակուեցաւ։ Յիսուս տխուր էր և երբ աշակերտները պատճառը հարցուցին Յիսուս ըսաւ. «Գիտցէք որ ձեզմէ մէկը պիտի մատնէ զիս»։

Ասոր վրայ ամենքը զատ զատ հարցուցին թէ ո՞վ է մատնողը։ Յուդա ալ մօտենալով հարցուց. «Միթէ ե՞ս եմ». Յիսուս ալ պատասխանեց. «դուն ըսիր» և պատառը թրջելով անոր տուաւ։ Յուդա անմիջապէս մեկնեցաւ անկէ։

Այն ատեն Յիսուս առաւ հացը, օրհնեց, կտրեց և աշակերտներուն տուաւ ըսելով. «Առէ՛ք, կերէ՛ք, ասիկա իմ մարմինս է»։ Յետոյ գինին առնելով օրհնեց և անոնց տալով ըսաւ. «Ամենքդ ալ խմեցէք, ասիկա իմ արիւնս է որ

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 08:49 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ձեզի և բոլոր մարդոց համար պիտի թափուի»։

Ընթրիքէն վերջ Յիսուս և իր աշակերտները Զիթենեաց լեռը բարձրացան և սկսան աղօթել։ Յիսուս անոնց ըսաւ թէ ամենքն ալ այն գիշերը զինքը պիտի ձգեն ու փախչին։ Պետրոս բողոքեց այս խօսքին դէմ։ Յիսուս ալ ըսաւ թէ «Պետրոս, այս գիշեր դեռ աքաղաղը չխօսած, դուն երեք անգամ պիտի ուրանաս զիս»։

Յետոյ լեռնէն իջնելով մտան Գեթսեմանիի պարտէզը. հոն Յիսուս սկսաւ առանձին աղօթել, մինչդեռ առաքեալները քնացած էին։

Այդ միջոցին քահանայապետներու և փարիսեցիներու ծառաներէն մեծ խումբ մը, իրենց գլուխը ունենալով Յուդան, եկաւ զինքը շրջապատեց։

Յուդա Քրիստոսի մօտենալով զայն համբուրեց որովհետև խումբին ըսած էր թէ համբուրելիք մարդն է Յիսուսը։

Բազմութիւնը մօտեցաւ Յիսուսի զայն բռնելու համար. Պետրոս իր սուրը քաշեց և ծառայի մը ականջը կտրեց։ Բայց Յիսուս արգիլեց Պետրոսի սուր գործածել և ծառային մօտենալով ականջը փակցուց, ու յետոյ թողուց որ զինքը ձերբակալեն։

Խումբը Յիսուսը բռնեց, կապեց և ճամբայ ելաւ, մինչդեռ բոլոր առաքեալները վախնալով փախան Յիսուսի քովէն։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 08:50 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ՅԻՍՈՒՍԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ ԵՒ ՋԱՐՁԱՐԱՆՔԸ

Հրէաները նախ Աննա քահանայապետին տունը տարին Յիսուսը որ մէկ քանի հարցումներ ընելէ վերջ կապեց և Կայիափայի ղրկեց։ Հոն շատ մը սուտ վկաներ զրպարտութիւններ բերին Յիսուսի վրայ. հոն գտնուողները լսելով Յիսուսի վրան յարձակելով սկսան ապտակել, երեսը թուքնել և ծեծել։ Այդ միջոցին Պետրոս դուրսը նստած կրակին քով կը տաքնար. քանի մը հոգի իրեն մօտենալով ըսին թէ ինքն ալ Յիսուսի հետեւողներէն է. բայց Պետրոս վախնալով երեք անգամ ուրացաւ ըսելով թէ չճանչնար Յիսուսը, և այդ միջոցին աքաղաղը խօսեցաւ ու Պետրոս Յիսուսի խօսքը յիշելով զղջաց և սկսաւ լալ։

Յուդա ալ զղջալով իր ըրածին վրայ, գնաց ետ տուաւ իր առած դրամը և անձնասպան եղաւ ինքզինքը կախելով։

Յաջորդ առտու կանուխ հրէաները Պիղատոսին տարին Յիսուսը որ դատէ։ Պիղատոս հարցումներ ընելով տեսաւ որ Յիսուս անմեղ է եւ ուզեց արձակել, բայց հրէաներուն բողոքէն վախնալով մահուան դատապարտեց զայն։ Անոնք ալ ուրախանալով առին Յիսուսը և ծեծելէ վերջ կարմիր հագուստ մը հագցուցին, ձեռքը եղէգ մը տուին և գլուխն ալ փուշէ պսակ մը դնելով սկսան ծաղրել և ըսել. «Բարև, հրէաներու թագաւոր»։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 08:50 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Յիսուս համբերութեամբ կը կրէր ամեն չարչարանք։ Զինուորները մահապարտներու յատուկ խաչափայտը Յիսուսի ուսը տուին և փոդոցներէն անցունելով սկսան Գողգոթա լեռը երթալ, հոն զայն խաչելու համար։

ՓՈՒՇԷ ՊՍԱԿ ՄԸ ԴՐԻՆ ՅԻՍՈՒՍԻ ԳԼՈՒԽԻՆ

Յիսուս խաչին ծանրութենէն չէր կրնար քալել. այդ միջոցին Սիմոն անուն մարդ մը կանցնէր, խաչը անոր տուին որ լեռը տանի եւ իրենք ալ սկսան յառաջանալ։ Մեծ բազմութիւն մը Յիսուսի կը հետեւէր և շատ մը կիներ կուլային Յիսուսի վիճակը տեսնելով։

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 08:50 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

ՅԻՍՈՒՍԻ ԽԱՉԵԼՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԹԱՂՈՒՄԸ

Երբ Գողգոթա ելան, հոն լեղիի խառնուած քացախ խմցնել ուզեցին Յիսուսի, որպէսզի ցաւ չզգայ. բայց Յիսուս միայն ճաշակեց։ Յետոյ խաչին վրայ հանելով ձեռքերէն եւ ոտքերէն գամեցին խոշոր գամերով գլխուն կողմն ալ տախ-



ՅԻՍՈՒՍԻ. ԽԱՉԵԼՈՒԹԻՒՆԸ

տակ մը դրին որուն վրայ գրուած էր «Յիսուս Նազովրեցի, թագաւոր հրէաներու»։ Յիսուսի երկու կողմերն ալ երկու չարագործներ խաչեցին որոնցմէ մէկուն ներեց Յիսուս։

Այսպէս քանի մը ժամ խաչին վրայ մնաց Յիսուս. իրիկուան դէմ Յիսուս աղաղակեց. «Հայր հոգիս քու ձեռքդ կը յանձնեմ», և գլուխը ծռելով հոգին աւանդեց։

Այդ միջոցին Տաճարին վարագոյրը ինքնիրեն վերէն վար պատռելով երկու կտոր եղաւ, երկրաշարժ մը տեղի ունեցաւ, արեւը ծածկուեցաւ և շատ մը գերեզմաններ բացուելով, արդարներ յարութիւն առին։ Հոն գտնուող հարիւ-

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 08:51 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

բապետը եղածները տեսնելով գոչեց թէ իրօք Աստուծոյ որդի էր Յիսուս, և շատեր իրենց կուրծքը ծեծելով ետ կը դառնային։

Յիսուսի մեռած օրը Ուրբաթ էր։ Զինուորներէն մէկը իր նիզակը անոր կողը խոթեց հասկընալու համար թէ բոլորովին մեռած էր, ուրկէ արիւն և ջուր հոսեցաւ։

Յովսէփ անունով բարի մարդ մը Պիղատոսէն հրաման առնելով, Յիսուսի մարմինը խաչէն վար առաւ, խնկեց և պատանքի մէջ դնելով, մօտը գտնուող պարտէզ մը տարաւ։ Հոն նոր շինուած մարմարէ գերեզմանի մը մէջ թաղեց Յիսուսը և գերեզմանին վրայ քարէ ծանր կափարիչ մը դնելով գնաց։

Զինուորներն ալ Յիսուսի գերեզմանին քովը կենալով, պահպանութիւն կընէին որպէսզի առաքեալները գալով չը գողնան մարմինը և յետոյ ըսեն թէ յարութիւն առաւ Յիսուս։

ՅԻՍՈՒՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Կիրակի առտու, լուսնալու մօտ, երկրաշարժ եղաւ նորէն, երկինքէն հրեշտակ իջաւ գերեզմանին վրայ, կափարիչը մէկդի առաւ եւ նստաւ։ Պահապանները ատիկա տեսնելով փախան և Յիսուս փառքով Յարութիւն առաւ։

Յիսուսի հետեւորդ կիները այն առտու խունկ եւ իւղ առնելով ճամբայ ելան դէպի Յիսուսի գերեզմանը։ Ճամբան իրարու կը հարցընէին թէ ինչպէ՞ս պիտի վերցնեն ծանր կափարի-

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 08:51 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

չը։ Բայց երբ գերեզմանին քով եկան, զարմանալով տեսան որ կափարիչը գլորեր է։

Այդ միջոցին հրեշտակ մը իրենց իմացուց թէ Յիսուս յարութիւն առած է և պատուիրեց անոնց որ երթան առաքեալներուն իմացնեն։ Կիները շուտով գացին ,աշակերտներու իմաց տըւին. անոնցմէ ոմանք հաւատալ չուզեցին, բայց Պետրոս և Յովհաննէս վազեցին գերեզման և տեսան թէ իրաւ Քրիստոս յարութիւն առած է, գացին միւսներուն ալ իմացուցին։

Պահապանները քաղաք դառնալով պատմեցին պատահածը. սակայն քահանայապետները, առատ դրամ տուին անոնց որպէսզի ըսեն թէ իրենց քնացած ատենը աշակերտները եկան գողցան Յիսուսի մարմինը։ Այդպէս ալ ըրին և այդ սուտ խօսքը մինչև այսօր տարածուեցաւ։

ՅԻՍՈՒՍԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԸ

Յիսուս Յարութիւն առնելէն վերջ քանի մը անգամ երեւցաւ իր աշակերտներուն։ Մէջերնուն Թովմաս որ Թերահաւատ էր, չէր ուզեր հաւատալ և օր մը Յիսուս անոր մատը իր կողը խօթել տուաւ որ ճանչնայ զինքը, ու ըսաւ. «Թովմաս, դուն զիս տեսնելէ վերջ հաւատացիր, երանի անոնց որ զիս չեն տեսներ ու կը հաւատան»։

Վերջին անգամ Յիսուս առաւ իր աշակերտները և Ձիթենեաց լեռը տանելով, օրհնեց զանոնք և ըսաւ.

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 08:51 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

«Ինչպէս որ Հայրը ղրկեց զիս, ես ալ ձեզ կը ղրկեմ։ Գացէ՛ք բոլոր ազգերուն մօտ, սորվեցուցէք անոնց և մկրտեցէք զանոնք, Աստուծոյ, Որդիին և Սուրբ Հոգիին անունով։

Հազիւ թէ այս խօսքերը արտասանած էր, Յիսուս ձեռքերը բարձրացուց, վերջին անգամ ալ օրհնեց իր աշակերտները և անոնց աչուընեբու նառջեւ սկսաւ կամաց կամաց երկինք համբառնալ։

Աշակերտները՝ զարմացած կը դիտէին, երբ ամպ մը ծածկեց զայն և հրեշտակ մը երեւալով ըսաւ թէ Յիսուս օր մը նորէն փառքով աշխարհ պիտի գայ։

Ասոր վրայ, բոլորն ալ երկրպագեցին և ուրախութեամբ լեցուած Երուսաղէմ դարձան։

Generated on 2016-07-19 08:52 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY

Generated on 2016-07-19 08:52 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
HARVARD UNIVERSITY

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ՆԱՄԱԿԱՆԻ

ԿԸ ՊԱՐՈՒՆԱԿԷ 400 ԵՐԵՍ

Ց. Ց. ՉԱԳՄԱԳՃԵԱՆ

ԱՄԵՆԱՃՈԽ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԵԱՄԲ

ԵՒ ՄԻԱԿԸ ԻՐ ՏԵՍԱԿԻՆ ՄԷՋ

Ամերիկահայ նամականին կը պարունակէ Բարեկամական, Ընտանեկան, Ցորդորական, Շնորհաւորական, ցաւակցական, Սիրային, Հարսանեկան եւ Առեւտրական նամակներ։ Բազմաթիւ օրինակներ տրուած են նշանաւոր դէմքերու խիստ հետաքրքրական նամակներէն։

Ամերիկահայ նամականին կուտայ Ամերիկայի մէջ ընդունուած նամակագրութեան կանոններու ամփոփումը, ակնարկներ առեւտրական օրէնքներու վրայ, և տեղեկութիւններ Միացեալ Նահանգներու թղթատարական օրէնքներու և գիներու վրայ։

Ընթերցանութեան համար հաճելի, նորեկներու համար դաստիարակիչ, իսկ առեւտրականներու համար անհրաժեշտ գիրք մը։ Անգլիերէն սորվելու ընտիր միջոց մը։

ԳԻՆ ՄԷԿ ՏՈԼԱՐ

Generated on 2016-07-19 08:52 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ԶՐՈՒՑԱՏՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԵՐԷՆԷ ԱՆԳԼԻԵՐԷՆ

ԿԸ ԲԱՂԿԱՆԱՅ ՄՕՏ 400 ԷՋԵՐԷ ԵՒ ԿԸ ՊԱՐՈՒՆԱԿԷ

1. *Զրուցատրութիւն, ճշգրիտ հնչումներով*

2. *Ընթերցանութիւն Առանց Ուսուցչի,*

3. *Քերականական գիտելիքներ,*

4. *Նամակագրութիւն կանոններով,*

5. *Կարեւոր Գիտելիքներ, Գունաւոր Քարտէսներ, Դրօշակներ եւայլն։*

ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԳԻՆ $ 1,50

E. A. YERAN

745 Washington St.

Boston, Mass.

Generated on 2016-07-19 09:32 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԵՐԳԱՐԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳԻՆ $ 1.50

Ժողովրդային երգարան մը գնելու ես որովհետեւ Ժողովրդային Երգարանը իր 750 երեսներուն մէջ կը պարունակէ մօտ 500 ընտիր երգեր—Ազգային, Յեղափոխական, Սիրային, Զաւեշտական, Կրօնական եւն։

Ժողովրդային Երգարանին ձայնագրուած բաժինը ծանօթ հայ երգչուհի Տիկ. Փանոսեան յատկապէս երգած՝ և մեծահամբաւ երաժիշտ Ն. Ամիրխանեանց նօթագրած է։

Ժողովրդային Երգարանը կը պարունակէ բազմաթիւ Հեղինակներու Լուսանկարներ, Նկարներ և Զարդեր։

Ժողովրդային Երգարանը կը գերազանցէ իր նախորդները իր ճոխութեամբ, գեղեցկութեամբ եւ կազմով։

Ժողովրդային Երգարանը պատրաստուած է նոր մեթոտով մը, որով կարելի է ակընթարթի մը մէջ գտնել փնտռած երգդ։

Ժողովուրդը ընտրած է անոր երգերուն մեծ մասը և այդ պատճառով "Ժողովրդային Երգարան" անունը կը կրէ։

Generated on 2016-07-19 09:32 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY

Generated on 2016-07-19 09:33 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google
Digitized by Google
Original from
HARVARD UNIVERSITY

Generated on 2016-07-19 09:35 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google

Original from
HARVARD UNIVERSITY

Widener Library
3 2044 098 778 665
HD

Երան Հրատարակութիւններ

Անգլիերէն Լեզու

Բառարան Հայ.-Անգլ. Գ. Տպագրութիւն	$ .50
» Անգլ.-Հայ. Գ. »	.75
Երկուքը միասին կազմուած, Ե. Տպագրութիւն	1.00
Նոյնը կաշեկազմ եւ ոսկեզօծ	1.50
Պատկերազարդ Զրուցաարութիւն, Հայ.-Անգլ.	1.50
Մուսավվէր Միւքեալէմէ, (Հայատառ) Տաճ.-Անգլ.	1.00
Ամերիկահայ Նամականի, Հայերէն եւ Անգլիերէն	1.00

Հայերէն Լեզու

Նոր Քերական, Ամերիկահայ Մանուկներու համար,	.10
Մայրենի Լեզու, Ա. Տարի	30
Միջին Դասընթացք, Մայրենի Լեզուի	.50
Տեսոր Գրավարժութեան, Հայերէն	.15
Այբ բէն, Քարթոնի վրայ	.05
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ, Ոկիզբէն մինչեւ մեր օրերը	2.00
ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԵՐԳԱՐԱՆ	1.50

Առողջաբանական

Գործնական Առողջաբանութիւն	1.00
Սեռային Առողջաբանութիւն	1.00
Պնդութիւնն ու Անոր Դարմանը	.15

Զանազան

Փարլամէնթական Կանոններ	.20
Սրափէնի Զարաճնի Հնարամտութիւնները	.25
Նասրէտտին Հոճայի Զուարճալիքները	.35
Աբլոր Եղբայր	.25
Բաղդացոյց եւ Երազահան	.10
Գաղտնիք Կանանց	.10
Լուսանկարչութիւն	.25

Փոսթ Քարտեր

Ազգային ծանօթ եւ սիրուած դէմքերու, 12 հատ	.15
Հայ թագաւորներու, թագուհիներու, բարձրաստիճան անձնաւորութիւններու, Գրական մշակներու, Յեղափոխական մարտիկներու, Արուեստագէտներու, Կրօնաւորներու, Բարերարներու, Լ.Ն. 40 հատ	.50

E. A. YERAN

745 Washington St., - Boston, Mass.

Digitized by Google
Original from HARVARD UNIVERSITY
Generated on 2016-07-19 09:36 GMT / http://hdl.handle.net/2027/hvd.32044098778665
Public Domain, Google-digitized / http://www.hathitrust.org/access_use#pd-google